Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

ԲԱՌԵՐԻ ԵՒ ԵԶՐԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՍԹՈՆ

1927

Հրատ. Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Ամերիկայի և
Կեդր. Վարիչ Մարմնի

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի, ԹԻՒ 30

4(47.925)
Ս-20
25573
1856
277

ԲԱՌԵՐԻ ԵՒ ԵԶՐԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գրեց՝
Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

ՊՈՍԹՈՆ

1927

ERITASSARD HAYASTAN, BOSTON, MASS., U. S. A.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հոկտեմբերեան Յեղափոխութիւնից յետոյ՝ ընդհանուր Սոցիալիստական եւ Մարքսիստական գրականութեան մէջ՝ իրար հակասող շփոթութիւններ ծագեցան Սոցիալիստо-Մարքսիստական *տերմինալոգիայի* նկատմամբ:

Այն բառերն ու եզրերը, որոնք Հոկտեմբերեան Յեղափոխութիւնից առաջ, գրեթէ միատեսակ ըմբռնումով էին գործածւում, յետոյ սկսեցին տարբերութիւններով հասկացուիլ· եւ այսպիսով, երեք-չորս տարի, մեծ շփոթութիւն ստեղծուեց:

Այդ շփոթութեան զոհ ուզեցին անել Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը· եւ նրա շուրջը ստեղծել զանազան թիւրիմացութիւններ՝ գաղափարական տեսակէտից:

Սակայն մենք չը դադրեցինք շարունակ պնդելու եւ հաստատելու, որ իսկական մարքսիստներ ենք մենք եւ բառերի ու եզրերի նկատմամբ՝ երբէք շեղած չենք մարքսիստական առումից:

Մեր հակառակորդների մի մասը չի դադարեց բոլորովին զինաթափ լինելուց· նրանց անհրաժեշտ էր Ս· Դ· Հնչակեան Կուսակցութիւնը պարարած պահել այդ շրջանի մթնոլորտի մէջ· թէեւ, հակառակորդ մեծամասնականները, իրենց Պատգամաւորական Ժողովին, — ըստ Դ· Շահվէրդեանի ասութեան — առաջարկ էին բերել՝ նեցուկ եւ սատար հանդիսանալ Սոց· Դէմ· Հնչ· Կուսակցութեան, մանաւանդ արտասահմանում: Բայց, պատգամաւորների մի մասը, որոնք մեր մշտական հակառակորդներն են եղած, այն հաւաստիացումն էին տուած ժողովին, որ իրենք ստոյգ տեղեկութիւն ունին, որ արդէն, Ս· Դ· Հնչակեանները պատրաստւում են, ամբողջապէս, ձուլուելու մեծամասնական Կուսակցութեան մէջ:

Այդ թիւրիմացութիւնները՝ մեր Կուսակցութեան նը-կատմամբ՝ դեռ կան:

Թէեւ վստահ եմք, որ ապագան հետզհետէ ցոյց պիտի տայ՝ մեր Կուսակցութեան զուտ եւ անխառն մարքսիստական լինելը:

Կոմմունիզմը կ'իրականանայ, երբ Սոցիալիզմի տիրապետութեան առաջին շրջանին մէջ՝ իւրաքանչիւր աշխատաւոր կըստանայ իր աշխատանքի համեմատ վարձ:

Լենինը Մարքսի գաղափարը չընդունեց. եւ առաջին օրից իսկ՝ դրեց. «Իւրաքանչիւր աշխատաւորի իր կարիքին համեմատ վարձ» սկզբունքը:

Մենք համակարծիք գտնուեցինք Լենինի հետ՝ միայն այս կէտի մէջ. թէ չէ՝ դասակարգային կռիւը եւ պրոլետարական դիկտատուրան մեր պաշտպանած սկզբունքներն են եղել, անընդհատաբար, մեր գոյութեան տարիների ընթացքում:

Իսկ Սովիէդական կարգերը՝ մենք ամենայն անվերապահութեամբ ընդունեցինք ու նրա պաշտպանը հանդիսացանք մինչեւ այսօր եւ այսուհետեւ էլ պիտի շարունակենք:

Մեր Կուսակցութեան շուրջ եղող թիւրիմացութիւնները փարատելու համար է՝ որ 43-րդ Պատգամ. ժողովի համաձայն, Ամերիկայի Շրջանի վարիչ Մարմինը լոյս է ընծայում սոյն գրքոյկը:

Վստահ եմ, որ իմ սիրելի ընկերները՝ առանց սայթաքումի եւ դեղեւումի, կառչած կը մնան իրենց Կուսակցութիւնից, որ պատմական այնքան մեծ դեր է կատարել եւ դեռ կատարելիք էլ ունի:

Ա. Սասունեան — Գրիգորեան

1927, Հոկտ. 23
Իւնիրն-Սիթի



ԸՆԿ. Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ
(1903-ԻՆ)

Ա. ՄԱՍ

ԲԱՌԵՐԻ ԵՒ ԵԶՐԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Շատ անգամ խնդիրներ, վէճեր, բանակռիւներ են տեղի ունենում՝ բառերի եւ եզրերի նախապէս ճշտուած չը լինելուն համար:

Երբ Ֆրանսիացի տաղանդաւոր վիպասան՝ Էմիլ Զոլան հիմնադրեց ռէալիզմը եւ ռէալիստական դպրոցը,— այդ ժամանակ կատաղի պայքար սկսեցին իր դէմ: Բանավէճը շարունակուեց, գրեթէ, երկու տարի: Երկու տարի անցնելուց յետոյ՝ երբ վիճողները յոգնեցան, հարց ծագեց թէ՝ «նախ ճշտենք բառերն ու եզրերը եւ նրանց սահմանաւորումները»: Եւ արդարեւ, «բառերն ու եզրերը, սահմանաւորումները» ճշտելուց յետոյ միայն, ինչպէս ասում է յայտնի քննադատ Բրունիտիերը, ընդդիմախօսներից շատերը տեսան, որ իրենք էլ համակարծիք էին Զոլային:

Նոյն երեւոյթը տեղի է ունեցել գիտութեան ա՛յլ ճիւղերի, մանաւանդ փիլիսոփայութեան պատմութեան մէջ:

Մեր մէջ բառերն ու եզրերը գործ են ածւում առանց նախապէս ճշտուելու. ամէն մէկը իր տեսակի հասկացողութիւն ու սահմանաւորում է բերում, կամ, կարծում է, թէ միւսն էլ իր նման է հասկանում, ուստի, յաճախ, յառաջանում են թիւրիմացութիւններ, աւելորդ հակառակախօսութիւններ, որ տրուած հարցը աւելի խճողում է, քան թէ պարզաբանում:

Մեթոդը, որ պիտի ընդունենք բառերի եւ եզրերի ճշտման համար — պիտի լինի պատմականը: Պատմական մեթոդով՝ խնդրին քայլ առ քայլ մօտենալով, աստիճանական զարգացման եւ հասկացողութիւնների ուղին բռնելով է, որ պիտի կարողանանք որոշեալ եզրակացութիւնների յանգիլ եւ մեր յառաջադրած ճշտումները կատարել:

Ուստի յառաջ երթանք քայլ առ քայլ:

Ա.

ՍՕՑԻԱԼԻԶՄ

Սոցիալիզմ (*Սոսիալիզմ*) *բառը ծագում է լատինական* socialis — *ընկերային* (socius — *ընկեր*) *բառից։*

Գերմանացիները լատիներէն c *գիրը հնչում են* ց–*ով, իսկ Ֆրանսացիները նոյն* c *գիրը հնչում են* ս–*ով։*

Գերմանական հնչիւնով հայացուածը արտաբերւում է Սոցիալիզմ։ իսկ Ֆրանսիականին հետեւելով Սոսիալիզմ։

Գերման հնչիւնին են հետեւել Ռուսները, ինչպէս եւ Սլաւոնական միւս լեզուները։

Ընդհակառակը՝ Ֆրանսիականին են հետեւում բոլոր այն լեզուները, որոնք լատինական ծագում ունին (Իսպանիա, Պորտուգալիա, Իտալիա, Ռումանիա, եւայլն)։

Անգլօ–Սաքսոնները լատինական c *գիրը հնչում են* շ–*ով։ Ուստի Սոշըլիզմ է նրանց արտասանածը։*

Եթէ մենք մեր հին՝ գրաբարեան տառադարձութեան հետեւէինք — պիտի հնչէինք Սօկիալիզմ։ Որովհետեւ լատինական c *գիրը մեր գրաբարի մէջ փոխանցուել է* կ–*ով։ Օրինակ՝* Cilicia *հնչում ենք Կիլիկիա,* Sicilia — *Սիկիլիա,* Tacitus — *Տակիտոս,* Carthagene — *Կարթագինէ,* Saracine — *Սարակինոս եւայլն, եւայլն։*

Բայց որովհետեւ մեր Արեւելեան նորագոյն գրականութեան մէջ մտել է գերմանական եւ ռուսական հնչիւնը, ուստի այդ մասի մէջ, անխտիր, գործ է ածւում Սոցիալիզմ։ իսկ Արեւմտահայ գրականութեան մէջ, Ֆրանսիականին հետեւելով՝ Սոսիալիզմ։

Մեր կուսակցական գրականութիւնը միշտ էլ գործ է ածել Սոցիալիզմ։ Մենք մեզի հետեւողական պիտի մընանք։

Ուրեմն Սոցիալիզմ բառի ծագումը գալիս է լատինական ընկերային, ընկեր բառից։

Բ.

ՍՕՑԻԱԼԻԶՄԻ ՊԱՏՄԱԿԱՆԸ

Սոցիալիզմ բառը առաջին անգամ գործ է ածուել Անգլիացի Ռոբերտ Օվէնի վարդապետութիւնների մասին։ Անգլիական Մանչէստր քաղաքի՝ պատուելի Ժ. Հ. Ռոբբրկի (Roebuck) *եւ Ռոբերտ Օվէնի միջեւ ծագած բանակռուի ժամանակ՝ առաջին անգամն է, որ Սոցիալիզմ բառը գործ է ածուել, ինչպէս ասում է Անգլիական Հանրագիտարանը։*

Ֆրանսիացի Պիեռ Լրուն այդ բառը, առաջին անգամ, գործ է ածել Ֆրանսիայում՝ 1838–*ին։*

Ռէյբոն սրանցից յետոյ է բառը ընդհանրացրել՝ իր յայտնի «Նորագոյն Սոցիալիստներ» (Socialistes Modernes) *գրուածքով։*

Այդ ժամանակները Սոցիալիզմ բառով էին արտայայտում «Հարստութեան արդար եւ լաւագոյն բաշխման գաղափարը», ինչպէս եւ «Արտադրութեան կատարուիլը կեդրոնական իշխանութեան կողմից»։ Բայց մեր խօսքը, հիմա, սահմանաւորումի մասին չէ, թէ ի՞նչ է Սոցիալիզմ։ այլ տալիս ենք միայն պատմականը։

Հայերէն լեզուի մէջ՝ Սոցիալիզմ (*Սոսիալիզմ*) *բառի փոխարէն, յաճախ, գործ են ածւում* ընկերվարութիւն, ընկերվարականութիւն *բառերը, որ սխալ է թէ գաղափարի եւ թէ մտքի տեսակէտից։ Բառի կազմութիւնն էլ խառնուրդ է* լատինականին *եւ* յունականին *հետեւելով։*

Մեր Արեւելեան գրականութեան մէջ գրող–գործիչները — ինչ ճիւղի էլ որ պատկանին — մի տեսակ ընդհանուր հիւանդութիւն, ընդհանուր սովորութիւն ունին եւրոպական *կամ* ռուսական *ծագում ունեցող բառերը նոյնութեամբ փոխանցել՝ թխել–դնել Հայ լեզուի մէջ, առանց ուշադրութիւն դարձնելու, որ այդ բառի իսկականը շատ վաղուց արդէն կայ մեր լեզուի մէջ։ Մոլութիւնը*

այնտեղ է հասել, որ փոխանակ արդէն եղած հայերէն բառերը գործածելու, նրանք թխում–զնում են օտար բառերը անփոփոխ, երբեմն անհասկանալի լինելու աստիճան տարօրինակ հնչիւններով եւ տառադարձութիւններով: Արեւելեան գրականութեան մէջ այդ ցաւով բռնուողները առաջնորդւում են երբեմն տգիտութիւնից, երբեմն էլ սնապարծութիւնից: Այդպիսիները կարծում են, որ իրենց գրուածքի մէջ աջ ու ձախ օտար բառեր գործածելով է՛լ աւելի հեղինակութիւն ձեռք կը բերեն, որպէս շատ բան գիտցողներ՝ հասարակ ընթերցողների առաջ: Մեր Արեւելքցիները այդ ընդհանուր մարմաջը ունին, թէեւ բացառութիւններ կան՝ բարեբախտաբար:

Մեր Արեւմտեան գրականութեան մէջ գործող–դրիչները ճիշտ հակադիրն են Արեւելքցիներին: Սրանք ձգտում են ամէն նոր բառ հայացնել, ինչ գնով կը լինի թող լինի. փոյթ չէ թէ միտք չունենայ, եւրոպական նոր բառի ճշգրիտ միտքը չարտայայտուի — չէ՛, ինչ լինի, միայն հայերէն լինի: «Ազգային լեզուի խաթարում», «Ազգային լեզուի արժանապատուութեան դէմ» է նկատւում, երբ եւրոպական մի նոր բառ մտցւում է լեզուի մէջ. թէեւ այլապէս էլ անկարելի լինէր անել: Ուստի ամէն բառ հայացնել, խնդրոյ առարկայ եղող նոր բառի միտքը աղճատելով, ապաւաղելով, — նպատակն է հայացում: Այդ տեսակ միտք, իմաստ չունեցող բառեր լիքն են մասնաւորապէս մեր Արեւմտահայ գրականութեան մէջ: Երբեմն բառեր են թխւում, որոնց միտքը անկարելի է լինում հասկանալ, մինչեւ որ իսկական — եւրոպականը չը գտնես: — Սա էլ մի ուրիշ հիւանդութիւն, մի այլ տեսակի անապարծութիւն: Մանաւանդ որ սրանք խօսում են «ազգային լեզուի մաքրութեան, զտման, արժանապատուութեան» տեսակէտից:

Մինչդեռ մեր նախնիքը, բոլոր դարերում, մասնաւորապէս Հինգերորդում, բնաւ այդպիսի նեղմտութեամբ չեն առաջնորդուել նոր բառերի եւ ասացուածքների նկատմամբ՝ երբ հարկ է տեսնուել փոխանցելու հայերէնի մէջ:

Յունական, Լատինական եւայլն ծագում ունեցող հաբիւրաւոր բառեր ունինք (մասնաւորապէս փիլիսոփայական, պատմական, աշխարհագրական, իրաւագիտական) մեր լեզուի մէջ, որոնք այսօր համարւում են «ազգային», «հարազատ», եւ ոչ թէ խորթ, օտար:

Այս մոլութիւն–հիւանդութիւնն էլ կատաղուել է Սոցիալիզմի (սօսիալիզմ) բառի հայացման նկատմամբ:

Ընկերվարութիւն, ընկերվարականութիւն բառը կազմուած է, լատինական ընկեր, եւ յունական կրասի — cratia (վարիչ, վարող, պետ) բառերին հետեւելով:

Օրինակ ունինք Democratie բառը, որ գալիս է Demos — ժողովուրդ եւ cratia (վարող, պետ) բառերից. եւ Democratie մեր մէջ թարգմանուել–անցել է ժողովրդապետութիւն, ժողովրդավարութիւն բառերով:

Ուրեմն լատինական ընկեր եւ յունական կրատիա բառերը քով քովի բերել բարդելով՝ ստեղծուել է ընկերվարութիւն, ընկերվարականութիւն, որ տառացի իմաստով կը նշանակէ ընկեր ընկերոջ վարող, ընկեր ընկերոջ պետ ... որպէս թէ «ընկերվարական» սիստեմի մէջ՝ ընկեր ընկերոջն է վարողը, ընկերը ընկերոջ պետն է:

Սա իսկական մի արտառոցութիւն է գաղափարի եւ մտքի, սահմանաւորումի տեսակէտից:

Ուստի գաղափարի, սկզբունքի դէմ կատարեալ մեղանչում, խառնափնդորութիւն ստեղծել է՝ ընկերվարութիւն, ընկերվարականութիւն բառերը գործածելով:

Գաղափարի, մտքի սկզբունքների տեսակէտից՝ անհրաժեշտ է եւ հրամայական գործածել արդէն ընդհանրացած, միջազգայնացած Սոցիալիզմ (Սօսիալիզմ) բառը:

Սոցիալիզմի պատմականը թերի կը լինէր, եթէ մենք յառաջ երթայինք, ուրիշ բառերի եւ եզրերի բացատրու–

թեամբ զրաղուէինք, առանց նախապէս այն շատ այրող եւ իրականապէս նշանակութիւն ունեցող հարցին մօտենալու թէ ո՞վ, ովքե՞ր, ո՞ր կուսակցութիւններն են եղած, որ հայ իրականութեան մէջ առաջին անգամ քարոզել են Սոցիալիզմը ընդհանրապէս, Մարքսիզմը՝ մասնաւորապէս:

Արդ հարցը հետաքրքիր է իր առարկայնութեամբը, եւ առանձին նշանակութիւն ունի Հայ նորագոյն մտքի, Հայ նորագոյն մշակոյթի, Հայ նորագոյն պատմութեան եւ զրականութեան տեսակէտից:

Մնդրին չպիտի մօտենալ անձնական, կուսակցական հակումներով եւ միտումներով, այլ առարկայօրէն. առարկան է, որ պիտի բացատրուի, մեկնաբանուի պատմականօրէն: Այստեղ էլ պատմական մեթոտն է, որ կը խօսի, դայ պատասխան տայ եւ հարցը լուծուի. ենթակայնութիւնը (subjectivite') այստեղ գործ չպիտի ունենայ, որպէս զի հարցը չխըճճուի, փոխանակ լուսաբանուելու, մթութեան եւ անստուգութեան ոլորտների մէջ չը մնայ՝ որպէս մի առեղծուած ապագայ՝ եկող սերնդի համար:

Ութսունական թուականների մեր երիտասարդութեան մի մասը դեռ ողջ է. շատերը ասպարէզից իջած՝ հանդըստեան բոպէներ են վայելում, որպէս ծերացածներ՝ գործօն կեանքի համար անուժակարողներ. բայց եթէ ոչ շատերը, դէթ շատերից մի մասը դեռ կայ, որոնք զրական-հասարակական, քաղաքական կեանք են վարում, դեռ իրենց թարմութիւնը չեն կորցրել, իրենց ոյժերի եւ կարողութեան սահմանների մէջ գործում են: Կեանքի հոսանքը կանգնեցնել չի կարելի. առօրեայ կեանքը, հըրատապ խնդիրները, բոպէի պահանջները այդ սերունդի մնացորդներին ստիպում են կլանուիլ, զբաղուիլ բացառապէս այն հարցերով, որ բոպէն իրենց առաջը դրել է. բազմազրաղ վիճակը նրանց թոյլ չի տալիս պատմական

խնդիրներով շատ պարապելու, — բայց, այնու ամենայնիւ, այդ վետերանները պէտք է որ մի կարգ պատմական խնդիրների վերադառնան, իրենց բազմազրաղ վիճակից բոպէներ պիտի տրամադրեն, անդրադառնալու համար յետ՝ դէպի այն օրերը, որ օրերից ծագում են առնում մի կարգ խնդիրների սկզբնաւորութիւնը, մեկնակէտերը:

Եթէ այդ, Ութսունական, սերնդի մնացորդներն էլ աչքերը փակեն, յաջորդները, եթէ ո՛չ անկարելի, դէթ շատ դժուարութեամբ պիտի կարողանան լուծուելիք մի կարգ հարցերի միջից դուրս դալ, որոնցից մէկն է Սոցիալիզմի, Մարքսիզմի գաղափարաբանութեան մուտքը Հայոց մէջ:

Լաւ կը լինի, որ Ութսունական թուականների երիտասարդութիւնը, նրանք՝ որոնք մեր նորագոյն պատմութեան, նորագոյն մտածմունքի (pensee) մէջ դեր են խաղացել՝ աւելի կամ պակաս չափով, — լաւ կը լինի, որ այդպիսիները, նախ քան իրենց մահկանացուն կնքելը, հասարակական ժառանգութիւն դարձնեն իրենց յիշատակները, յուշագրերը եւ դրանց հետ միասին ցոյց տան այն աղբիւրները եւ տարրերը, որոնք կոչուած պիտի լինին վերաստուգելու իրենց ասած խօսածները, իրենց դրածթողածները:

Ուրիշ ազգերի դրականութեան մէջ այդպիսի առաղձներ լիքն են, մեր մէջն է պակասը, — ահա՛ այդ պակասը պէտք է լրացնել:

Ու սրա համար էլ հարցը դնում ենք այսպէս.—

— Ո՞վ, ովքե՞ր, ո՞ր կուսակցութիւնն է, որ առաջին անգամ հայ մտածմունքի, հայ դրականութեան, հայ հասարակագիտութեան, հայ նորագոյն՝ քաղաքական, տընտեսական, ընկերային պատմութեան բաժինը, ազդակներն է արել այն գաղափարները թէ՝ մարդկային ընկերութեան — հետեւաբար ազգերի — պատմութիւնը ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ դասակարգային կռուի պատմութիւն.

փոքր ու մեծ շարժումները տնտեսական պահանջներից են եկել։ Եղել է, կայ երկու դասակարգ՝ տիրող և տիրուող։ տիրող դասակարգը իր ձեռքին մէջն է առել արտադրութեան, հարստութեան, հաղորդակցութեան, փոխանակութեան բոլոր միջոցները եւ իր տիրապետողի պետութեան միջոցով՝ տիրուող դասակարգին հարկադրել է ենթարկուել իր դասակարգային շահերից բղխած օրէնքներին, վարչաձեւին, կարգ ու կանոնին, բարոյագիտութեանը, կրօնին եւ սովորութիւններին։ Տիրուող դասակարգը իր սեպհական կազմակերպութեամբ է, որ յեղափոխութեան միջոցով իր վրայ ծանրացած տիրողի ամէն տեսակի լուծերը պիտի խորտակի, հաստատի տիրապետողի, շահագործուողի — պրոլետարիատի — դիկտատուրաթիւնը, ընջի ընկերութեան միջից դասակարգերը և արտադրութեան, փոխանակութեան բոլոր միջոցները ընկերականացնի, յառաջացնի, իրականացնի Սոցիալիստական ընկերութիւն, որպէս նախադուռը Կոմունիստական ընկերութեան։

Ներկայ, ժամանակակից ընկերութեան մէջ երկու դասակարգեր կան՝ բուրժուա-կապիտալիստական, որ արտադրութեան բոլո՛ր միջոցների տէրն է եւ Աշխատանքի ներկայացուցիչ պրոլետարիատը, որ թէեւ ինքն է իսկական արտադրողը, բայց արտադրութեան գործիքներից զրկուած է եւ շահագործւում է ամենաբիրտ կերպով՝ սովամահութեան մէջ տապլակելով։ Ո՞վ պիտի գայ ներկայ ընկերութեան մէջ տիրող հակասութիւնները վերացընելու, այդ հակասութիւնները լուծելու։ Էնգէլսի խօսքով — «Պրոլետարիատը իր ձեռքը պիտի առնի, պիտի իւլի ժողովրդական իշխանութիւնը, եւ այդ միջոցով՝ արտադրութեան միջոցները ձեւափոխի, ընկերականացնի եւ բուրժուազիայի ձեռքից հանելով՝ ժողովրդական սեպհականութիւն դարձնի։ Այդ գործողութեամբ՝ պրոլետարիատը ազատագրում է արտադրութեան միջոցները՝ իր

կապիտալիստական բնոյթից, եւ նրանց տալիս է ընկերային բնոյթ՝ լիակատար ազատագրութեամբ ինքն իրեն համար գործելու։ Դրանից յետոյ միայն՝ հնարաւորութիւն կը լինի կանխորոշ մի յատակագծով ընկերային արտադրութիւն կատարել։ Դրանից յետոյ՝ այլեւս ժամանակավրէպ (անախրոնիզմ) կը դառնայ դասակարգերի գոյութիւնը ընկերութեան մէջ։ Երբ ներկայ (կապիտալիստական) ընկերութեան միջից արտադրութեան անիշխանական ձեւը կը չքանայ, ինքնին այլեւս Պետութիւնը կը մեռնի։ Վերջապէս մարդը կը դառնայ իր սեպհական ընկերային կազմակերպութեան տէրը, կը դառնայ Բնութեան տէրը եւ իր սեպհական ազատ տէրը։

«Տիեզերական ազատագրութեան այս գործողութիւնը կատարելը, իրականացնելը՝ նորագոյն պրոլետարիատի պատմական միսսիան է։ Որպէս զի լիակատարապէս հասկանայ պատմական պայմանները եւ իր գործունէութեան իսկական բնոյթը, որպէս զի ճնշուած պրոլետար դասակարգին լիակատար գիտակցութիւն հաղորդուի գոյութիւն ունեցող պայմանների եւ իր կատարելիք գործի դաչագլխային նշանակութեան մասին, — դա պրոլետարական շարժման տեսական արտայայտութեան գործն է, որ է՝ Գիտական Սոցիալիզմի»։

Ո՞վ, ովքե՞ր, ո՞ր կուսակցութիւններն են այս գաղափարները հայ կեանքի, Հայ Պրոլետարիատի, հայ մտածմունքի շրջանակի մէջ մտցնողները, նրանց կեանք տուողները՝ մեր իրականութեան մէջ։

Հայ կեանքը հողը տալիս էր։ Հարկաւոր էր այդ կեանքը արտայայտել Գիտական Սոցիալիզմի տեսութիւնից առաջնորդուելով, մտածմունքի նոր եղանակ, բացատրութիւնների նոր մեթոդներ կիրարկելով — ո՞վ, ովքե՞ր եղան այդ ազդակը, այդ ազդակները։

Ո՛չ տիրող ազգ պիտի լինի, ո՛չ էլ տիրուող, — բոլոր ազգերը համահաւասար իրաւունքներ պիտի ունենան, ազ-

2543 Ամ 78556 2777

գային անհատականութիւնը — որպէս պատմա-անհատա-
կան՝ գոյացութիւն — անձեռնմխելի պիտի լինի։ Ինք-
նորոշման իրաւունքը թէ՛ մեծ եւ թէ փոքր ազգերի հա-
մար անձեռնմխելի իրաւունք պիտի ճանչցուի, — ո՛չ մի
բռնաբարում, ո՛չ մի ճնշում, տիրապետութեան ո՛չ մի
ձեւ։ Սոցիալիստ դաշնակցութեան կազմութեամբ, —
Մարքսիստական Կոմմունիզմի ընդհանուր տիեզերական
հիմունքներով։

Դիտական Սոցիալիզմի, Մարքսիզմի, ի մի բան, ա-
ռաջին ուահանորդը, առաջին քարոզողը, նրանց համար
առաջին պայքարողը՝ անհատաբար թէ հաւաքաբար՝ ո՞վ,
ովքե՞ր, ո՞ր կուսակցութիւններն են եղել մեր՝ հայ իրա-
կանութեան մէջ։

Խնդիրը, ինչպէս ասացինք, պատմական նշանակու-
թիւն ունի։ Այստեղ կուսակցական կրքերը չէ, որ պիտի
բորբոքուին, ո՛չ էլ քմածին, երեւակայական ենթադրու-
թիւններով պիտի առաջնորդուիլ, ուղղղ-չուղղի խօսք
մի՛ կողմ. իմ ու քոնութիւնը չպիտի լինի, այլ պիտի խօ-
սի առարկան ինքը, պատմական մեթոտը, սառը դատո-
ղութիւնը՝ անհերքելի տուիքներով առաջնորդուելով։

Եւ այս ուղղութեամբ որքան չատ խօսուի, որքան չատ
գրուի, որքան չատ վիճաբանութիւններ լինին, — այնքան
աւելի լաւ։ Թող ամէն ոք իր գիտցածը հրապարակ դնի՝
խնդրի լուսաբանութեան եւ որոշեալ եզրակացութեան
յանգելու համար։

«Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան» անդամ-
ները մասնաւոր հետաքրքրութիւն են ցոյց տալիս դրուած
այդ հարցերի նկատմամբ, մանաւանդ վերջերս։

Առնենք, ուրեմն, հարցը, պատմականապէս։

Այստեղ, որպէս նախապայման, մենք մի կողմ ենք
թողնում Արեւմտահայ գրականութեան մէջ գործիչ-գրիչ-
ները. միշտ այն նկատումով, որ նրանք, սոցիալիզմի տե-
սակէտից, ո՛չինչ չեն բերել. միայն այդ չէ՝ մեր նորա-

գոյն մտածմունքի մէջ նրանք եւ ո՛չ մի մասնակցութիւն
ունին. առ առաւելն եղած են հետեւողական, յաճախ էլ
անգիտակից, կոյրկուրայն հետեւողական, չապիկնին
ամէն բոպէ փոխելու բնոյթագծով՝ նայելով տեղին եւ
ժամանակին։ Արեւմտեան մեր գրականութեան մէջ հա-
դիւ աղօտ կերպով արձագանգուել, տեղ է գտել 40–50-ա-
կան թուականների եւրոպական դէմոկրատական գաղա-
փարները, ո՛չ աւելին. իսկ դրանք էլ ո՛չ մի ազդեցութիւն
են գործել հայ զանգուածի, գործաւորութեան, գիւղա-
ցիութեան վրայ. դրանք լոկ գրական տեսութիւններ են
եղած՝ կղզիացած ձեւով մի որոշեալ քաղքենի ընթերցող-
ների համար։ Հայ նորագոյն կեանքի մէջ նրանք ալիք չեն
կազմած, հոսանքներ չեն յառաջացրել։ Այդքան միայն։

Մօտենանք Արեւելահայ գրականութեան. նորագոյն
մտածմունքը, հասարակագիտութիւնը, շարժման տարրե-
րը, գործօնները այնտեղից են դալիս։ Պատմութիւնը այդ
ուղին, այդ թելն է տալիս՝ խնդիրներին մօտենալու հա-
մար։

Ո՞վ է եղել Սոցիալիզմի, Մարքսիզմի մասին, առա-
ջին անդամ, խօսք անողը մեր մէջ։ Ծագումը, սկզբնա-
ւորութիւնը ո՞րտեղից է դալիս։

Ա. այժմ մի կողմ ենք թողնում Սոցիալ Դէմոկրատ
Հնչակեան գրականութիւնը եւ նրա մէջ խօսող-գրիչները։

Դիմում ենք դուրսերը։

Եթէ չենք սխալւում՝ Ալ. Մարտունին (Միասնիկեան)
առաջին փորձը արեց այդ ուղղութեամբ, չենք յիշում
գրքոյկով թէ՞ յօդուածով։ Բայց գրեց, հարցը արծար-
ծեց։

Եւ ի՞նչ ասաւ.

Այն՝ որ մեր բանաստեղծ Միքայէլ Նալբանդեանը ե-
ղել է Սոցիալիստ, Սոցիալիստական գաղափարներ է տա-
բաձել, առաջին անդամ։ Գրողը ի՞նչ հիմունքներ, ի՞նչ
տուիքներ էր ունեցել.— քննութեան էր առել Միքայէլ

Նալբանդեանի «ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ» անունով գրքոյկը, որ մեր գրականութեան մէջ մեծ դեր է խաղացել եւ եղիտասարդութեան վրայ զօրեղապէս ազդել, ու այդտեղից վերլուծումներ կատարելով՝ յանգել էր այն եզրակացութեան, որ հայ սոցիալիզմին նախահայրը եղել է Նալբանդեանը:

Ժամանակին, թէեւ շատ անցողակի կերպով, գիտել տրուած է եւ քննադատութեամբ հաստատուել, որ Միքայէլ Նալբանդեանը ո՛չ Սոցիալիստ է եղած, ո՛չ էլ, մանաւանդ, Մարքսիստ: Նա՝ ո՛վ շատ ու քիչ տեղեկութիւն ունի տնտեսագիտութեան պատմութիւնից, գիտէ որ Միքայէլ Նալբանդեանի ասած-խօսածները, նրա ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ շատ համառօտակի՝ քաղուածոյ արտայայտութիւններն են ՖԻԶԻՈԿՐԱՏԻԶՄԻ: — Ազգերի կեանքի բարգաւաճումը, նրանց նիւթական հարստութիւնը պիտի գայ երկրագործութիւնից, երկրագործութիւնն է հարստութեանց միակ աղբիւրը. ուստի նրան է, որ պետութիւնը եւ հասարակական բարգաւաճման ձգտողները՝ այժ եւ խնամք պիտի տան: Ֆրանսացի զօկտոր Քենէի (Quesnay) երկրագործական ազիւսակները այնքան պարզ, մեկին, որոշ են, որ այդ մասին կասկած անդամ չեն թողում. նրա ազդեցութիւնը շատ մեծ է եղել ընդհանուր Եւրոպայի եւ Ռուսաստանի վրայ: Նալբանդեանը ֆիզիոկրատիզմի քարոզող ներկայացուցիչն է եղել մեր մէջ, ուրիշ ոչինչ: Ի՞նչպէս, ինչո՞վ կարող էր հայ ազգը զարգանալ, բարգաւաճիլ, բարօր կեանք եւ կացութիւն ունենալ — երկրագործութեամբ: Ահա Նալբանդեանի թէզը եւ գրած թէզի պատասխանն է, որ տալիս է իր «Երկրագործութիւն» անունով գրքոյկի մէջ:

Պատմութիւնը, Սոցիալիզմի գաղափարը խեղաթիւրել, աղճատել, աղաւաղել, բռնագրօսիկութեան ենթարկել է, դիտումնաւոր կերպով այս ու այն կողմ երթալ է, երբ ասում է, որ Ֆիզիոկրատիզմի տարածող-գաղափարաբան Նալբանդեանը եղել է Սոցիալիստ: Այդպիսի բան չկայ: Զօկտոր Քենէի ազիւսակները եւ Նալբանդեանի խօսքերը դէմ դիմաց դնելով՝ երկուսի նոյնութիւնը մի անգամից արտացոլանում է եւ ամէն կասկած փարատում — Ո՛չ: «Մեր Հայրենիք»ի երգիչը չէ՛ եղած եւ չէ՛ Սոցիալիզմի առաջին ռահվիրան:

Ալ Մարտունին սխալ հողի վրայ կեցաւ, իր փորձը անհետեւանք մնաց, իր կարծիքն ու ենթադրութիւնը տեղ չը գտաւ: Եթէ դեռ իր առաջուան կարծիքի վրան է, պէտք է որ Նալբանդեանի գրածները ու, եթէ ոչ Ինգէլսի-Մարքսի, գէթ սովորական բարենորոգչական սոցիալիստների գաղափարները դէմ դիմաց դրնի եւ այնպէս եզրակացութիւն դուրս բերի. իր փորձը եղած է կատարեալ բռնագրօսիկութիւն եւ իբրեւ բռնագրօսիկ փորձ էլ կը մնայ մեր նորագոյն մտածմունքի պատմութեան մէջ: — Այս այսպէս:

Ո՞վ է եղել Սոցիալիզմի, Մարքսիզմի առաջին ներկայացուցիչը մեր կեանքի մէջ.— այդ հարցով զբաղուել է նաեւ Դաւիթ Անանունը, որ մի շատ նեղ շրջանակի մէջ, «պատմագիր» անունն էլ է իր վրայ առել, առանց ասելու թէ ո՞ր երկարաշունչ պատմական-ուսումնասիրական գրուածքների համար: Նախկին Սոցիալ Դէմօկրատ Հընչակեան այդ անձը բարձրագոյն կրթութիւն անգամ չունենալով, օտար լեզու չգիտնալով միասին՝ Հայերէնի մէջ անգամ աւելի քան բոբիկ է: Պատմագիր լինելու համար՝ պատմութիւն գրելու մեթոդների հետ ծանօթ պիտի լինել: Տնավարի մեր այդ «պատմագիրը» ուզում է ապացուցանել, որ Սոցիալիզմը, Մարքսիզմը հայ կեանքի մէջ առաջին քարոզողը Սոցիալ Դէմօկրատ Հընչակեան Կուսակցութիւնը չի եղել. եւ իր այդ թէզը պաշտպանելու համար՝ հրատարակութեան է տալիս մեր հասարակ ընկերների այս ու այնտեղից հաւաքած այն նամակները, որոնցմով Կովկասի մէջ գործող մեր ընկերներն ու մաս-

նաճիւղերը իրարու յորդորում, փաստում են որ Հայկական Դատը (Տաճկահայ) պիտի պաշտպանել։ — Այդ մեթոտով եթէ ընթանանք, վեր առնենք Կոմմունիստ-Բոլշեւիկների այդ ժամանակուայ հասարակ գործաւոր ընկերների փոխադարձ նամակագրութիւնները — դժուար չի լինիլ ապացուցանել, որ նրանք ամէն ինչ են բացի կոմմունիստ-բոլշեւիկներից։

Նախկին Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան, ապա շապիկը փոխող Հայ Սոցիալ Դէմոկրատ «պատմագիր» Դաւիթ Անանունը կուսակցափոխութիւն է կատարել, իր «նեղ» հորիզոնը ընդարձակել է, Հայ Սոցիալ Դէմոկրատ դառնալով, «խեղճ» Բաշխի Իշխանեանին հետեւելով, որի ինչ լինելը կեանքը եկաւ՝ ցոյց տուեց։ Տաճկահայ Դատը չը պաշտպանելը հոմանիշ նկատել զուտ Մարքսիստականութեան, — դա Թուլամիտների հասկացողութիւն էր, որ ժամանակին արտայայտուեցաւ, և ջախջախուեցաւ (1904-1907)։ Մի կուսակցութեան Սոցիալիստական, Մարքսիստական չը լինելը կը փաստուի իր Ծրագրով, իր գրիչ-գաղափարաբանների գրուածքներով։ Եթէ այդ մեթոտով ընթանար խեղճուկ «պատմագիր» Դաւիթ Անանունը եւ փաստեր մէջտեղ բերէր, մէջբերումներ կատարէր, — դա շատ հասկանալի կը լինէր։ «Պատմագիրը» այդ մեթոտից խուսափել է, նախապէս գիտնալով, որ ինչ ժայռերի պիտի դիպչէր իր թեթեւ գլուխը։ Այդ էլ այդպէս։

Ո՞վ է եղել «Հայ Կոմմունիստների, Հայ Մարքսիստների պատմական նախորդը», հարց է դնում Ա. Խումարեանը Մարտակոչի 8-րդ (264) թուի մէջ։

Թէեւ յօդուած-ուսումնասիրութիւնը դեռ վերջացած չէ, բայց իր այդ յօդուածի մէջ եղածները մեզ իրաւունք են տալիս նրանցով զբաղուելու՝ մեր դրած հարցի լուսաբանութեան տեսակէտից։

«Ըստ ամենայն իրաւունքի, ասում է Ա. Խումարեան իր այդ յօդուածի մէջ, Հայ Կոմմունիստների, Հայ Մարքսիստների պատմական նախորդն է եղել «Հայ Բանուորական Յեղափոխական Ասոցիացիան» որի «հին դուարդիան գնալու վրայ» է, եւ ինքը այդ մասին պատմական տեղեկութիւններ է ուզում տալ «նոր սերունդը պատմականորէն կրթելու» համար։

Յօդուածագրի բառերից պիտի դատենք իրեն։

«Հայ Բանուորական Յեղափոխական Ասոցիացիան», որ, Ա. Խումարեանի փաստագրութեամբ «ըստ ամենայն իրաւունքի՝ Հայ Կոմմունիստների, Հայ Մարքսիստների պատմական նախորդն» է եղել, ե՞րբ է ասպարէզ մտել եւ իր «Կոմմունիստական», «Մարքսիստական» գաղափարաբանութիւնը տարածել։

«Երեսուն տարի առաջ, 1893 թուի Յունիսի 10—23-ի Թիֆլիզում»։

Ուրեմն, պատմականօրէն, «Հայ Կոմմունիստների, Հայ Մարքսիստների նախորդը» երեւացել է 1893-ին։

Ի՞նչ է եղել, ի՞նչ անուն է կրել «Հայ Կոմմունիստների, Հայ Մարքսիստների նախորդը», — «ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆ», ասում է Ա. Խումարեան։ Եւ «Անկախ Հայաստան»ը «լոյս է տեսել» որպէս «փոքրիկ անլեգալ թերթիկ»։

Ի՞նչ ծրագրով, ի՞նչ գաղափարաբանութեամբ է առաջնորդուել «Հայ Բանուորական Յեղափոխութեան Ասոցիացիայի» օրգան «Ազատ Հայաստան»ը։ — «ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏՈՎ»։ Բայց մէջ բերենք հեղինակի սեպհական խօսքերը ամբողջապէս՝ խնդիրը ամէն անկիւնից լուսաբանելու համար։

Փակագծի մէջ ասենք, որ Ա. Խումարեանը երբեմն «Անկախ Հայաստան» անունն է տալիս իրենց օրգանին, երբեմն էլ «Ազատ Հայաստան»։ բայց դա մեզ չի խանգարում, ինչ անուն կ'ուզի՝ թող լինի։ հարցը իրողութիւնն է։

Ա. Խումարեանը գրում է — «Ազատ Հայաստան»ը իր վրայ ուշադրութիւն դարձրեց նրանով, որ նա սուղ էջերում (սովորական գրքի գիրքով չորս երես) առաջին անգամ անլեզալ տպարանի մուրը դրոշմեց հայ բանուորի, հայ պրոլետարիատի անունն ու Հայկական Հարցը կապեց աշխատաւորութեան հարցի հետ ու խօսեց Սոցիալիզմից»։

«Ի հարկէ «Հայ Բանուորական Յեղափոխական Ասոցիացիայի» հասկացած Սոցիալիզմը շատ հեռու էր Մարքսի Գիտական Սոցիալիզմից, ի հարկէ «Հայ Բանուորական Յեղափոխական Ասոցիացիայի» քարոզած «Ազատ Հայաստանը» նման չէր մեր ներկայ ազատ Հայաստանին. ի հարկէ այդ Ասոցիացիայի հասկացած բանուորութիւնը, բանուորական դասը շատ հեռու էր մեր այժմեան հասկացողութիւնից (այն էլ ասենք թէ ո՞րտեղ էր այն ժամանակ Հայ բանուորութիւն), բայց ի՞նչ կ'ասէք, երբ մի փոքր խումբ հայ պատանիներ, սոցիալիզմի մասին համարեա՛ թէ ո՛չ մի գիրք (հայերէն չկար, իսկ ռուսերէն համարեա՛ թէ չգիտէինք) չկարդացած, շատ աղօտ գաղափար ունենալով համաշխարհային բանուորական շարժումից ու դասակարգային կռուից, եկել յանդել էինք ինտուիտիւ կերպով բանուորութեան անկախ կազմակերպութեան անհրաժեշտութեան Հայ իրականութեան մէջ, նրա իբր առանձին ոյժի մասնակցութեան անհրաժեշտութեանը «ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԻՆ»։

Յօդուածագիր Ա. Խումարեանը նկարագրում է թէ ինչպէս՝ «Անցեալ դարի 80-ական թուականների վերջերը Կովկասի հայութիւնը ապրում էր չտեսնուած ջղաձգական օրեր։ Գիւլիւղարի առեւանգման դէպքը մի չտեսնուած շարժում առաջ բերեց հայութեան մէջ... Տեղական հայ ինտելիգենցիան քաղաքական սթափման նշոյլներ է ցոյց տալիս, Կուկունեանի խմբի արշաւանքը, Գոլոչեանի նահատակութիւնը ու մի քանի այլ եզակի դէպքեր հայութեան բոլոր խաւերի ուշադրութեան նիւթն էր դարձրել»։

«Ահա այդ ազգային գիտակցութեան արթնացման օրերին, Եւրոպա նստած մի խումբ հայ մտաւորականներ հարցը քննում ու լուծում էին զանազան ձեւերով ու այլ եւ այլ կերպով»։

Ափսո՛ս, որ յօդուածագիրը որոշ կերպով չի մատնանշում թէ՝ «Եւրոպա նստած մի խումբ հայ մտաւորականները» որո՞նք էին եւ ի՞նչ ձեւերով «հարցը (հայկական) քննում, լուծում»։

Ուսումնասիրողը մեզ տեղեկութիւն է տալիս թէ ովքե՛ր են եղել եւ իր եւ իր ընկերների վրայ ազդողները։

Ու, ի միջի այլոց, ասում է, Մուրճ-ի խմբագիր Աբրահամեանը «Մեր մէջ մի միտք յղացրեց — կազմել Հնչակի հետ, ու տուեց ինձ Նազարբէգեանի հասցէն։ Այդ հասցէով ես նամակ գրեցի Նազարբէգեանին, որից եւ շուտով ստացայ թէ Հնչակներ եւ թէ մի խրախուսական նամակ»։

Պատմելուց յետոյ թէ ինչպէս Ստեփան վարժապետը Նաթօղնայեայ Վօլիսի գաղափարներն է քարոզել իրենց, այդ բոլորից յետոյ ու «այդ ազդեցութեան տակ մեր խմբակը ձեւակերպւում է ու ստանում «Հայ Բանուոր Յեղափոխական Ասոցիացիա» անունը որի լոյս ընծայած օրգան Ազատ Հայաստանի մի համարը, հիմա, գտնւում է «Հայաստանի Յեղափոխութեան Թանգարանում»։

Հարցը պարզւում է։

Շատ թուցիկ կերպով դիտենք.

«Հայ Բանուորական Յեղափոխութեան Ասոցիացիան, որ ըստ ամենայն իրաւունքի՝ Հայ Կոմմունիստների, Հայ Մարքսիստների պատմական նախորդն է» — իր օրգան Անկախ Հայաստանը լոյս է ընծայել 1893-ին։ Բովանդակութիւնք, միտքը, տակտիկան թողնենք։

Իսկ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան

կեդրոնական օրգան «ՀՆՉԱԿ»-ը լոյս է տեսել 1887-ին. ուրեմն դեռ 6 տարի առաջ «ըստ ամենայն իրաւունքի՝ Հայ Կոմմունիստների, Հայ Մարքսիստների պատմական նախորդ»ից։

Մենք հրապարակապէս ասում ենք, մարտակոչ ենք ուղղում մեր բոլոր գաղափարական հակառակորդներին.

Ա.— Ցոյց տան մի յօդուած, մի գիր մեր գրականութեան մէջ, ուր նախ քան «ՀՆՉԱԿ»ի հրատարակութիւնը որոշ կերպով խօսուած, գրուած լինէր Սօցիալիզմի եւ Մարքսիզմի մասին։

Մեր թէզն է, որ չկայ, որ մեր հակառակորդները ա-նապատի մէջ պիտի յածին, մինչեւ որ գան՝ հասնեն Հընչակին եւ նրա մէջ երեւացող գրիչ-գործիչներին։

Բ.— Ո՛վ կ՚ուզէ, թող հրամմէ եւ քննական վերլուծութեամբ ցոյց տայ, որ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան թէ՛ առաջին, թէ երկրորդ եւ թէ յաւուկ Տաճկաստանի համար գծուած ԾՐԱԳՐԵՐԸ չեն եղել զուտ Մարքսիստական, Գիտական-Սօցիալիստական։

Ու սրանով ժայռը մնում է ժայռ, իրականութիւնը իրականութիւն, որ չի թոյլ տալ փաստերը, իրողութիւնները խեղաթիւրելով, աղաւաղումների ենթարկելով՝ պատմութեան, իրականութեան հակառակ եզրակացութիւնների յանգել։ — Ո՛չ։

Փաստն է, իրողութեան եւ իրականութեան պատմութեան տուիչների վրայ հաստատուած թէզն է, որ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, նրա գործիչ-գրիչներն են, որ «Հայ Կոմմունիստների, Հայ Մարքսիստների» պատմական նախահայրերը, նախորդներն են եղել, եւ են ու կը մնան։

Հակա-թէզերը թող մէջտեղ գան, եւ մենք խնդիրը է՛լ աւելի հանգամանօրէն կը մանրամասնենք։

Ուրեմն, Սօցիալիզմի պատմականին գալով՝ հաստատում, պնդում, ասում ենք, որպէս արմատական ճշմարտութիւն, որ Գիտական Սօցիալիզմի, Մարքսիստական Կոմմունիզմի գաղափարաբանութիւնն ու տեսութիւնը, առաջին անգամ, Հայ մտածմունքի, նորագոյն Հայ գրականութեան, նորագոյն Հայ պատմութեան բաժինն ու ազդակն է դարձել՝ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը.— դարագլուխը այնտեղից, եւ միայն այնտեղից է սկսւում։

Այդ մասին հերիք։

Այդ մասին պիտի անդրադառնանք Երրորդ Միջազգայինի, Կոմինտերնի եւ մեր Կուսակցութեան միջեւ կատարուած յարաբերութիւնների մասին խօսելիս։

ԲԱՌԵՐԻ եւ ԵԶՐԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ չարունակելով՝ անցնենք Սօցիալ Դէմօկրատ, Սօցիալ Դէմօկրատիա բառերին։

Գ.

ՍՕՑԻԱԼ ԴԷՄՕԿՐԱՏ։ ՍՕՑԻԱԼ ԴԷՄՕԿՐԱՏԻԱ

«Դուք ձեզ անուանում էք սօցիալիստներ. ի՞նչ է սօցիալիզմը», — հարցրեց Ֆրանսիացի գատաւորներից մէկը՝ դատի քաշուած ,մեղադրական աթոռի վրայ նստած Պրուդոնից, որի գրած-խօսածները սօցիալիզմ անունով էր որակւում ժողովրդական բոլոր խաւերի կողմից։

— «Սօցիալիստ է նա, ով ձգտում է ընկերային կեանքի բարւոքման, լաւագունացման։ Սօցիալիզմը նպատակ ունի տիրող ներկայ թշուառութեանց վերջ տալ եւ է՛լ աւելի լաւ բարւոք ընկերային կեանք ստեղծել», պատասխանեց Պրուդոնը։

— «Եթէ այդպէս է, ապա մենք բոլորս էլ սօցիալիստներ ենք, որովհետեւ խելքը գլխին ո՛չ մի բանիմաց մարդ կայ, որ ընկերային բարւոքման չը ձգտի», — յարեց դատաւորը՝ արդարացման վճիռ արձակելով։

Այսպէս, Մարքսի եւ Էնգէլսի ԳԻՏԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻԶՄԸ բիւրեղացած, որոշ գծերով երեւան գալուց առաջ, նախամարքսիստական այն ամէն հոսանքները, որոնք աւելի կամ պակաս դժգոհ էին Բուրժուա–Կապիտալիստական ըէժիմից, տնտեսական եւ ընկերային տիրող սարք ու կարգից, գոյութիւն ունեցող հաստատութիւններից. նրանք՝ որոնք ցանկանում էին հարստութեան (richesse) արտադրութեան եւ բաշխման մէջ էլ աւելի արդարութիւն տեսնել, քան կար, — դրանք բոլորը, անխտիր, որակւում էին սօցիալիստ բառով եւ իրենց արտայայտած ընդհանուր գաղափարաբանութիւնն էլ յատկանիշւում էր սօցիալիզմով:

Հետեւաբար, Անգլիայի մէջ Օվենիստները, Զարտիստները սօցիալիստներ էին նկատւում. իսկ նրանց քարոզածներն էլ՝ սօցիալիզմ:

Ֆրանսիայի մէջ՝ Ֆուրիերիստները, Սէն–Սիմոնիստները, նոյն իսկ Պրուդոնիստները, եւայլն, սօցիալիստ անուններով էին յորջորջւում, — Ֆուրիերիզմն էլ, Սէն–Սիմոնիզմն էլ, Պրուդոնիզմն էլ՝ սօցիալիստական:

Գերմանիայի մէջն էլ սօցիալիստներ, սօցիալիզմ կար, ինչպէս եւ եւրոպական միւս երկիրներում:

Այստեղ չենք բացատրում թէ դրանցից իւրաքանչիւրի քարոզածը, պաշտպանած տեսութիւններն ի՛նչ էին, ի՛նչով էին տարբերւում իրարուց եւ ի՛նչով զանազանւում Գիտական–Սօցիալիզմից՝ Մարքսիզմից: Ասում, մատնանշում ենք Սօցիալիզմի պատմութիւնից միայն ա՛յն էջը, որ մինչեւ Մարքսն ու Էնգէլսը՝ մտքի եւ սահմանաւորումի ընդհանուր խառնափնդորութիւն կար Սօցիալիստ եւ սօցիալիզմ բառերի նկատմամբ: Կային ամէն դոյնի, երբեմն իրարու հակասող եւ ջրող սօցիալիստներ եւ սօցիալիզմներ. չը կար գաղափարի նոյնութիւն բոլորի համար:

Վիլհէլմ Ուէթլինգն էլ, Բելգիայի մէջ, քարոզում էր կոմմունիզմ. ունէր իր կոմմունիստական խումբը: Նա

գործ էր ածում կոմմունիստ, կոմմունիզմ բառերը եւ ոչ թէ սօցիալիստ, սօցիալիզմ: Բայց Վիլհէլմ Ուէթլինգի կոմմունիզմը կէս–միջնադարեան, կէս– նահապետական, կէս՝ անհատի ցանկութիւնից ծնած, մի տեսակ ուտոպիական կոմմունիզմ էր, որ գիտական ոչի՛նչ ունէր իր մէջ: Սրանց դիմումի վրայ էր որ Մարքսը խմբագրեց դարաշրջան կազմող՝ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԸ: Երեւեցաւ Գիտական Սօցիալիզմը, Մարքսիստական Կոմմունիզմը՝ իր գիտական հիմունքներով, եւ մնաց արձան:

Մարքսը եւ Էնգէլսը ցոյց էին տուել, որ այդ բոլոր նախահոսանքների ասած–խօսածների, պաշտպանած գաղափարաբանութիւնների մէջ գիտական ո՛չ մի հիմք կար. ուստի նրանց անուանել էին ուտոպիստ–սօցիալիստներ, իրենց գաղափարներն էլ՝ ուտոպիական սօցիալիզմ: Ու իրենք պահեցին Կոմմունիզմ, Կոմմունիստ բառերը. երբեմն էլ Գիտական Սօցիալիզմ, Գիտական Սօցիալիստներ: Թէեւ Էնգէլսը յաճախ գործածեց Սօցիալիզմ բառը, առանց գիտականը մօտը դնելու, անշուշտ այն մտքով, որ դա զօրութեամբ հասկանալի էր:

Բայց հարցը դրանով չը վերջացաւ. հինը գործածութիւնից չընկաւ: Սօցիալիզմ, Սօցիալիստ բառերը դարձեալ բառամթերքի մէջ մնացին. եւ նոյն իսկ Մարքսի–Էնգէլսի Գիտական–Սօցիալիզմն էլ շատ անգամ սովորական սօցիալիզմի առումով գործածուեցան շատերի կողմից:

Ուրիշ խառնափնդորութիւն:

Յառաջ եկաւ «ԱՌԱՋԻՆ ՄԻՋԱԶԳԱՑԻՆԸ» (1863), կարլ Մարքսի հիմնած: Այդ «ՄԻՋԱԶԳԱՑԻՆԸ» ունեցաւ իր ներքին ցնցումները թէ՛ գաղափարի եւ թէ՛ տակտիկայի տեսակէտից: Մարքս–Էնգէլսն էլ գործ էին ածում կոմմունիստ, կոմմունիզմ, սօցիալիստ, սօցիալիզմ բառերը, — Բակունինն էլ: Բայց Բակունու քարոզած Կոմմունիզմը, Սօցիալիզմը շատ հեռու էր իսկական (Մարքսեան) Կոմմունիզմից, իսկական (Գիտական) Սօցիալիզմից:

Խառնափնդորութիւնը, նոյն բառերի տարբեր առումներով գործածուիլը ընդլայնուեցաւ, երկրէ երկիր անցաւ՝ մասնաւորապէս այն ժամանակից, երբ Բակունինը՝ արտաքսուելուց յետոյ՝ կազմեց «Տիեզերական Դաշնակցութիւնը», (Alliance Universell):

Բակունու քարոզած Սոցիալիզմը, Կոմմունիզմը անիշխանութիւնն (անարխիզմ) էր, որ տրամադիր էին հակադիր էր Մարքսեան Կոմմունիստական, Սոցիալիստական (Գիտական) հասկացողութեան:

Կոմմունիզմ բառը սոսկալի կերպով վարկաբեկուեց՝ երբ Իսպանիայի, Պորտուգալիայի, Իտալիայի, Ֆրանսիայի մէջ Բակունինը եւ իւրայինները շարժում յառաջացրին:

Ու, այսպիսով, խառնափնդորութեան, վարկաբեկման տեսակէտից Կոմմունիզմ բառն էլ ենթարկուեց Նախամարքսիստական սոցիալիզմի ճակատագրին:

Բակունիստները իրենց վրայ առան, իրենց բառամբարերի իրաւունքը դարձրին Կոմմունիզմ, Կոմմունիստ բառերը, որ հոմանիշ էին անիշխանականութեան: Կոմմունիստ կը նշանակէր Բակունիստ: Կոմմունիզմ՝ կը նշանակէր անիշխանականութիւն: Միջավայրը այդպէս ճանչցաւ, այդպէս որակեց, այդպէս հասկացաւ:

1869-ին, Գերմանիայի Էյզենախ քաղաքի մէջ տեղի ունեցաւ Գերման բոլոր տեսակի սոցիալիստների եւ կոմմունիստների (Մարքսիստների) Համագումարը: Վիճաբանութիւնները եղան աղմկալից: Հարկաւոր էր նոր անուն ընդունիլ՝ բոլոր գունաւորումներին իր մէջ պարփակելու՝ մի անունով ճանչցուելու, գործելու համար: Վիճաբանութիւններին ընթացք եւ շեշտ տուողը Լիբկնեխտն (հայրը) էր:

Ի՞նչ անուն պիտի կրի Պրոլետար-գործաւոր-դասակարգի յատուկ կուսակցութիւնը.— որոշուեց, ընդունուեց՝ ՍՈՑԻԱԼ ԴԷՄՈԿՐԱՏ:

Ի՞նչ անուն տալ ընկերային գալիք այն դրութեան, երբ Կապիտալիզմը կը տապալուի, դասակարգերը կը ջնջուին, հարստութեան (richesse) արտադրութեան, փոխանակութեան, վարկային եւ հաղորդակցութեանց բոլոր միջոցները կ'ընկերականան.— ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԷՄՈԿՐԱՏԻԱ:

Ու այսպէս, գործածութեան մտան, փոխանակ Սոցիալիստի, Սոցիալիզմի, Կոմմունիստի, Կոմմունիզմի՝ ՍՈՑԻԱԼ ԴԷՄՈԿՐԱՏ, ՍՈՑԻԱԼ ԴԷՄՈԿՐԱՏԻԱ եզրերը:

Լիբկնեխտը այդ մասին երկար բացատրութիւններ ունի տուած՝ իր գրքերի մէջ, որոնց մէկի անունն է՝ «ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀԸ»:

Ներանից յետոյ՝ կայացաւ Գոթայի Համագումարը.— Լասսալեանները միացան:

Եկան Մարքսի եւ Էնգէլսի քննադատութիւնները, ապացուցեցին որ ընդունուած, քուէարկուած բանաձեւերը, մանաւանդ տակտիկական մասը, շատ թերի էին, սխալ, եւ չէին ամենայնիւ համապատասխանում Գիտական-Սոցիալիզմին:

Սոցիալ Դէմոկրատ, Սոցիալ Դէմոկրատիա եզրերը գործածութեան մտան, հակառակ քննադատութիւններին. Գերմանիայից անցան ուրիշ երկիրներ էլ:

Ուրեմն Սոցիալիզմը պատմութեան մէջ, Սոցիալ Դէմոկրատ, Սոցիալ Դէմոկրատիա եզրերը գալիս են 1869-ի Էյզենախի Համագումարից:

1889-ին կազմակերպուեց, յառաջ եկաւ, Պարիզի մէջ, ԵՐԿՐՈՐԴ ՄԻԱՋԳԱՅԻՆԸ:

Սոցիալ Դէմոկրատ, Սոցիալ Դէմոկրատիա եզրերը պաշտօնական արձանագրութեան մէջ մտան:

Գերմանականին հետեւեցին Ռուս Սոցիալիստները, Սկանդինաւեանները, Հոլանդականները, Անգղիականները, Ամերիկայի Միացեալ Նահանգներինը, Զուիցերիականները, եւայլն եւայլն. մեծամաս երկրներում կիրառութեան մտան Սոցիալ Դէմոկրատ, Սոցիալ Դէմոկրա-

տիա բառերը։ Պրոլետարական Կուսակցութիւնները այդ անունով եւ յորջորջումով իրենց կազմակերպութիւնները յառաջացրին։

Ֆրանսիայում, միայն, երբեք այդ եզրերը չը գործածուեցին.— այնտեղ մնաց միշտ Սոցիալիզմ, Սոցիալիստ եզրերը։

Ժիւլ Գէդը Մարքսիստականութիւնը, Մարքսիստական հասկացողութեամբ Կոմմունիզմը որակեց ՀԱՒԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ (collectivisme) նորաստեղծ բառով։ Կոլլէկտիվիստ, Կոլլէկտիվիզմ բառերն էլ քաղաքացիութեան իրաւունք ստացան, գործածուիլ սկսան։

Վերջ՝ մինչեւ 1876ը, — ինչպէս դիտել է նաեւ Լենինը իր այն յօդուածի մէջ թէ ինչո՛ւ իրենք ՍՈՑԻԱԼ ԴԷՄՈԿՐԱՏ անուան փոխարէն ընդունում են Կոմմունիստ անունը, — գործածուող Սոցիալ Դէմոկրատիա եզրը ամենայն յստակութեամբ չի արտայայտել Մարքսիզմը եւ Մարքսիստական Կոմմունիզմը։ Բայց 1876–ից՝ մանաւանդ Էրֆուրդի ծրագրից յետոյ՝ Սոցիալ Դէմոկրատիա եւ Մարքսիզմ եւ Մարքսիստական Կոմմունիզմ դարձան համազօր արտայայտութիւններ՝ շատ շատերի համար։

Այդ մասին այլեւս հակաճառութիւններ չեղան, դրեթէ։

Էնգէլսն էլ, «Կապիտալ»ի յառաջաբաններից մէկի մէջ, այդ բանը ընդունել է։

Անցնենք մեր կեանքին։

«ՀՆՉԱԿ»ը եղել է պաշտօնական օրգան՝ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ։

Հնչակեանութիւն եւ Մարքսիզմ, Մարքսիստական Կոմմունիզմ հոմանիշ է նկատուել։ Ծրագրերի մէջ գործ է ածուել ԿՈՄՄՈՒՆԻԶՄ եւ ԳԻՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ եզրը։

Գործ է ածուել նաեւ Սոցիալ Դէմոկրատիա բառը, հոմանիշ Մարքսիզմի — տե՛ս Լասսալի «Սահմանադրութեան էութեան» թարգմանութեան նախաբանը։

1903–ի Ամստերդամի Միջազգային Սոցիալիստ Համագումարին — ուր Պլեխանովն էր մեր ներկայացուցիչը — գործ է ածուել Սոցիալ Դէմոկրատ՝ յեղափոխական անունը, յեղափոխականը տակտիկական մասը արտայայտելու համար։

Հինգերորդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովից յետոյ՝ (1905)՝ Կեդրոնական Վարչութիւնը (Սապահ-Գիւլեան, Մուրատ, Աչբզպաչեան) հրահանգեց Կովկասի եւ Թուրքստանի մասնաճիւղերին իրենց կուսակցական պաշտօնական թղթերի վրայ դնել Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան անունը։ Այդպէս էլ եղաւ։ Մասնաւորապէս Բաքուի եւ Ատրպատականի մասնաճիւղերը այդ անունը գործածեցին. թէեւ շատ մասնաճիւղեր էլ շարունակեցին պահել միայն Հնչակեան անունը։

Վեցերորդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին (1909) որոշուեց՝ Կուսակցութեան պաշտօնական անունը անել Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն անունը, որը գրուեց Կեդրոնական օրգան «Հնչակ»ի ճակատին։ Այդ ժամանակից գործածութիւնը ընդհանրացաւ մեր բոլոր շրջանների եւ մասնաճիւղերի մէջ։

Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն, ուրեմն, հոմանիշ է Մարքսիզմ, Գիտական Սոցիալիզմ, Մարքսիստական Կոմմունիզմ եզրերին։

Եւ այստեղ էլ գալիս են մեր քննադատները։

Կարգով կը խօսենք։

Առնենք Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը եւ Երրորդ Միջազգայինը։

Դ.

ՍՕՑԻԱԼ ԴԷՄՕԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՐՐՈՐԴ (ԿՈՄՄՈՒՆԻՍՏ) ՄԻՋԱԶԳԱՅԻՆԸ

Կուսակցական բաժնի մէջ զետեղում ենք այն հասկացողութիւն ու «բանաձեւը», որ Երրորդ (Կոմմունիստ) Միջազգայինը, առաջին անգամ, ներկայացրել է մեր Կուսակցութեան նկատմամբ:

Բանաձեւացութիւնները դեռ չարունակւում են, վերջացած չեն:

Նախքան ուղղակի խնդրին անցնելը՝ ասենք.— այն օրից, երբ տարբեր երկրների մէջ յառաջ եկան Մարքսիստական տեսութիւնների վրայ հիմնուած Կուսակցութիւններ (Սոցիալիստ, Կոլեկտիվիստ), մեր Կուսակցութիւնը, դրեթէ չատերին ժամանակակից է, այնպէս որ ծագման եւ կազմաւորական տեսակէտից մենք նորեկներ չենք, այլ այն հին կոնդհն պատկանողներ, որոնք Գիտական Սոցիալիզմին կեանք տուին, գործնականացնելուն աշխատեցին ու դրա համար էլ չը նախատեսուած չատ դժուարութիւններից անցան, կեանքի տաքն ու պաղը կտրելով, փչրելով:

Մարքսիստական բնոյթ կրող ամէն Կուսակցութիւն, աւելի կամ պակաս, աւելի ուղիղ եւ թերի, ջանացել է իր սեպհական միջավայրը արտացոլացնել՝ բերել, դնել Գիտական Սոցիալիզմի հողի, Մարքսիստական փիլիսոփայութեան սահմանների մէջ:

Գերմանացի Մարքսիստը իր միջավայրը, իր քաղաքական, տնտեսական, ընկերային պայմաններն է աչքի առաջ ունեցել, իր երկրում տիրող, գոյութիւն ունեցող պետական եւ այլ հաստատութիւններն է ի մտի առել.— Ռուսականը, Ֆրանսիականը, Անգղիականը, Իտալականը, Լեհականը, Հրէականը... իրենը: Միջավայրերի նոյնութիւն չի եղել, ո՛չ էլ զարգացման: Ամէն երկրի զարգացման տարբերութիւններից, տուեալ պայմաններից էլ յառաջացել է Կուսակցութեանց տակտիկական տարբերութիւնները: Այդ պատճառով էլ՝ երբեմն, նոյն իսկ ընկերային խորութիւններ են կատարուել: Մարքսիստական փիլիսոփայութեան կիրարկելը տարբեր բացատրութիւններ է ունեցել ո՛չ միայն երկրէ երկիր, այլ եւ միեւնոյն երկրի մէջ: Այսպէս՝ Ռուսաստանի, Գերմանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի... մէջ մի քանի կուսակցութիւններ են եղել, թէեւ բոլորն էլ պնդել են, որ իրենք Մարքսիստական տեսութիւններով առաջնորդուող, գործողներ են եղած:

Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ընդգրկելով Մարքսիզմը՝ նա հետեւորդ չի եղել, չի նմանուել այս ու այն երկրին, ո՛չ էլ արտագրութիւններ արել. Նա ինչ որ երեւան է գրել, դա ծնել, կազմակերպել, յառաջացրել է իր, այսպէս ասած, կուսակցական խմբակցութիւնից, իր կուսակցական մտածմունքից: Նա մուրացածոյ ոչի՛նչ չի ունեցել: Եւ հէնց դրա համար էլ՝ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ունեցել է իր որոշ անհատականութիւնը, իր ինքնուրոյնութիւնը Մարքսիստական Կուսակցութիւնների շարքերի մէջ:

Որովհետեւ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը արտացոլացրել է հայ միջավայրը, հայ կեանքը, հայ միջավայրի, հայ կեանքի թարգմանն ու արտացոլացնողն է եղել, նրա մարտական ոյժն է հանդիսացել՝ Մարքսիստական գաղափարաբանութեամբ առաջնորդուելով: Որո՞նք են եղած ա՛յն քաղաքական, տնտեսական, ընկերային, պետական մասնայատուկ պայմանները, որոնց մէջ գտնուել են հայ գիւղացին, հայ գործաւորը, հայ աշխատաւորը. որո՞նք եղած են պետական այն հաստատութիւնները, որոնք որոշ նպատակ են ունեցել հայ ժողովուրդը սպանել, ընաջնջել, ցանկացել են նրա գոյութիւնը խլել, թոյլ չեն տուել, խոչընդոտ են հանդիսացել նրա զարգացման ու յառաջդի-

մութեանը, արդելք են եղած նրան՝ քաղաքական, տնտեսական լիակատար ազատագրութիւն ունենալու, ջանացել են նրան բռնել, պահել ռայեայի եւ կնուտի (մտրակի) գազափարարանութեան ոլորտի մէջ, — Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը այդ միջավայրի ծրնունդը, այդ իսկ միջավայրի արտայայտիչը, թարգմանն է եղել. նա այդ հին միջավայրը փշրող. նորը՝ Սոցիալիստականը, Աշխատանքի Իշխանութիւնը բերող՝ մարտական յեղափոխական ոյժն է հանդիսացել, Մարքսիստական հիմունքներով մօտենալով ներկայացած բոլոր խնդիրներին՝ ինչ որ Հայաստանին, հայ իրականութեան է վերաբերում:

Ուղի՞ղ էր հասկացել, ուղի՞ղ էր թարգմանել, արտայայտել Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը հայ իրականութիւնը:

Այստեղ գալիս է հարցականի հետ եւ բացատրականը:

Ի՞նչ դիրք, ի՞նչ ընթացք, ի՞նչ տակտիկա պիտի բռնէր Մարքսիստական փիլիսոփայութեամբ զեկավարուող մի կուսակցութիւն 80-ական թուականներին: Ուրիշ խօսքով՝ նա, որ իրեն Սոցիալիստ-Մարքսիստ էր համարում, նա ի՞նչ պիտի անէր, ի՞նչ տեսակ գործի եւ գործունէութեան պիտի անցնէր 80-ական թուականներին, երբ պատմութիւնը, միջավայրը, կեանքը պահանջներ էր դրել:

Երկու դիրք, երկու ճանապարհ, երկու ընթացք ունէր Գիտական Սոցիալիստը: — Նա կամ «Քէօր աղջիկ» պիտի հանդիսանար, բաւականաչափ փթփթոցով, հանդիսատեսի դէր սանձնէր, «թոյլ տալ անել, թոյլ տալ անցնել» (laisser faire, laisser passer) քաղաքականութիւն պիտի ունենար կեանքի հրամայական պահանջների հանդէպ, անտարբեր մնար, թողնէր որ միջավայրի մութ ոյժերը, պատմական յաջտակիչները իրենց ծրագրած սեւ նպատակներին հասնէին եւ կամ կուռի, պայքարի պիտի բռնուէր, մարանչողի պատմական դերի մէջ մտնէր:

Երկու ճանապարհ կար.— կա՛մ անտարբերութիւն կամ ներգործունէութիւն:

Անշուշտ, շատերը եղան, այդ բոպէին, կատարեալ «տատէրներ». նրանք անտարբեր մնացին, աչքերը փակեցին, խիղճերին ծալեցին, կեանք ծծել, կեանք վայելել ուզեցին՝ ամենատուր լինելով եսասիրական գաղափարների: Իրենց համար ուրիշ այլ աշխարհ չկար, քան իրենց ես-ը: Այո՛, եղան այդպիսի շատ «Քէօր աղջիկ» երիտասարդներ: Նրանց հոգը չէր, որ հարիւր հազարաւոր նոյ գիւղացիներ տարագրւում, յափշտակութիւնների էին ենթարկւում, սպանւում, խողխողւում էին. — ողջակիզւում էր պատմական մի ժողովուրդ. — իրենց հոգը չէր, բաւական է որ իրենք տաֆուկ բոյն ունէին:

Կամ այդ դիրքը պէտք էր ունենալ՝ պատմական այդ բոպէին, եւ կամ պէտք էր երկրորդ ուղին, երկրորդ ընթացքը բռնել, — այն է պայքարողի, կռուողի, յեղափոխականի դիրքի մէջ մտնել:

Եթէ այս երկրորդն է, որ պիտի ընտրէր, ապա նա, Մարքսիստը, Գիտական Սոցիալիստը, ուրիշ ա՛յլ ճար ու համբայ, ուրիշ ա՛յլ սկզբունքներ, ուրիշ ա՛յլ տակտիկա չէր կարող ունենալ, եթէ ոչ այն՝ ինչ որ ունեցաւ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը:

Գիտական Սոցիալիզմի հանդէպ մենք եւ ո՛չ մի շեղում ենք կատարել թէ սկզբունքային, թէ կազմակերպչական եւ թէ տակտիկական տեսակէտից: Սա մեր թէզն է եղած եւ մեր թէզն էլ է՝ մեր բոլոր անճարակ քննադատիչների առաջ: Եւ, մի քիչ յետոյ, պիտի տեսնենք, որ 38 տարի անցնելուց յետոյ, նոյն իսկ կազմակերպչական տեսակէտից, «Երրորդ (Կոմմունիստ) Միջազգայինը իր հրանաձեւով», գալիս է ամենայնիւ մեզ արդարացնելու եւ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Գաղափարական անգծելի ԺԱՅՌ լինելու հանգամանքը նորից ընդգծելու:

Ահա թէ ինչ պայմաններից է բղխել, կազմաւորուել է մեր Կուսակցութեան անհատականութիւնը, ինքնուրոյնութիւնը:

Ունեցել ենք մեզ դէմ փոքր ուղղղների խծբծանքներ, բայց փաստացի քննադատութիւններ, դիտութեան (Գիտական Սոցիալիզմի) լոյսով առաջնորդուող հակառողներ՝ ո՛չ. չենք ունեցել. դրանց դեռ սպասում ենք:

Եղած ենք Երկրորդ Միջազգայինի անդամ. նրա Համագումարների մէջ մի քանի անգամ ունեցել ենք մեր յատուկ ներկայացուցիչները: Որքան որ քաղաքական հանգամանքները եւ մեր առաջ կեցած բազմապիսի այրող խնդիրները թոյլ չը տուին, որ վերջին Համագումարներին էլ ներկայանանք, — այնուամենայնիւ Երկրորդ Միջազգայինը — մինչեւ 1914ը — ճանաչել է մեր Կուսակցութիւնը որպէս Մարքսիստական գաղափարաբանութեամբ առաջնորդուող, գործող մի Կուսակցութիւն: Եւ այդ այնքան, փակագծի մէջ ասելով, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը Երկրորդ Միջազգայինի մէջ մտաւ՝ մեր ունեցած ազդեցութիւնն ու անցեալը չահագործելով, ինչպէս որ, ժամանակին, այդ իրողութիւնը մանրամասնօրէն ի վեր հանեց Բաշիի Իշխանեանը:

Մենք վայելել ենք, մեզ հետ ենք ունեցել Երկրորդ Միջազգայինի Համագումարների յարգանքն ու գնահատութիւնները, որպէս Մարքսիստներ, Գիտական Սոցիալիստներ:

Միայն մի իրողութիւն վերյիշենք:

Երբ Պլեխանովը դեռ իր փառքի գագաթնակէտին էր, ո՛չ միայն Լենինի ուսուցիչն էր համարւում — ինչպէս իր կենսագիր Զինովիեւն է մատնանշել — այլ ամբողջ Ռուս Սոցիալ Դէմոկրատիայի Մարքսիստական տեսաբան «հայրն» էր նկատւում ու վայելում էր շատ բարձր, երբեմն նոյն իսկ անվիճելի հեղինակութիւն ամբողջ Սոցիալ Դէմոկրատական եւ Սոցիալիստական աշխարհում, — նա մեր կուսակցութեան ներկայացուցիչ-պատգամաւորը եղաւ 1903-ի Ամստերդամի Միջազգային Սոցիալիստական Համագումարին:

Անցան տարիներ. շատ եղելութիւններ կատարուեցան. շա՜տ դէպքեր, անցքեր եկան՝ գնացին:

Հիմա ի՞նչ է ասում, ի՞նչպէս է գնահատում մեր Կուսակցութիւնը Մարքսիստական հողի վրայ կանգնած Երրորդ (Կոմմունիստ) Միջազգայինը, որ հանդիսանում է, մի տեսակ արիոպագոսը, բարձրագոյնին խորհուրդը՝ Գիտական Սոցիալիզմի:

Կարդանք նախադասութիւն առ նախադասութիւն, պրակ առ պրակ եւ վերլուծմամբ յառաջ երթանք:

Կոմմունիստ Միջազգայինը ասում է.—

— «Հայկական Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, լինելով Ռուսաստանի Սոցիալ Դէմոկրատիայի հնագոյն յեղափոխական գնդերից մէկը, իր գոյութեան ամբողջ ընթացքում գործել է Ռուսաստանի Սոցիալ Դէմոկրատ Բանուորական Կուսակցութիւնից առանձնացած, ժամանակին իր շարքերում ընդունած լինելով միջազգայնական տարրեր՝ Ռուսաստանում եւ ի մասնաւորի Հայաստանում:»

Երկու ձեռքով ստորագրում, ընդգծում ենք ամբողջ հատուածը: Պատմական վաւերականութիւն, ստուգութիւն կայ: Նախադասութիւնները չեն շարուել յանկարծ, ո՛չ էլ մաքերը առնուած պատահականօրէն: Դէպքեր, իրողութիւններ, ուսումնասիրութեան են ենթարկուել, Ծրագրային, սկզբունքային եւ տակտիկական քննութիւններ, վերլուծումներ են կատարուել եւ յետոյ եզրակացութիւնները գրուել:

Հէնց այդտեղ, այդ հատուածի մէջ է բովանդակուած Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կենսագրութիւնը:

Այդ եւ յաջորդ պարբերութիւնների մէջ են ամփոփուած այն հիմունքները, որոնք պատմական բացարձակ անհրաժեշտութիւն, բացարձակ իրամայականութիւն են

դարձնում Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ամբողջութեան պահպանուիլը, նրա շարունակութիւնը, միջազգային ընդհանուր պրոլետարական շահի եւ յաղթանակի տեսակէտից:

Այո՛, անցեալ տարի (1923), նախկին Սոցիալ Դէմոկրատ Մեծամասնականները (Բոլշեւիկները) — հիմա Կոմմունիստներ — հանդիսաւոր տօնեցին իրենց Կուսակցութեան 25-ամեակը: 5 տարի Կոմմունիստ անունով արձանագրուելով պատմութեան էջերում, իսկ 20 տարի՝ Սոցիալ Դէմոկրատ:

Այդ ասել է, որ այսօրուայ Կոմմունիստները (Ռուսական, եւայլն) իսկ երէկուան Սոցիալ Դէմոկրատ Մեծամասնականները (Բոլշեւիկները) իրենց երկունքի եւ ծննդեան թուականը տանում հասցնում են մինչեւ 1898ը:

Համեմատի՛ր:

Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ընկերակցութեան թուականը բարձրանում, գնում, հասնում է մինչեւ 1887-ը:

Ասել է թէ՝ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ծնուել է 11 տարի առաջ՝ այսօրուայ Ռուսաստանի Կոմմունիստ եւ երէկուայ Սոցիալ Դէմոկրատ Մեծամասնական Կուսակցութիւնից:

Ճիշտ է. պատմութիւնը տալիս է իր վաւերականութիւնը: Մենք, ուրեմն, ամենայն իրաւամբ, եղած ենք «ՀՆԱԳՈՑՆ»ներից մէկը:

Արդեո՞ք Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնն էլ եղած է՝ Եւրոպայի «պաշտօնական Սոցիալ Դէմոկրատ Կուսակցութիւնների» նման՝ «լճացած», «պլղտորուած», «դաւանանող», «օրինական» Մարքսիզմով եւ ոչ թէ ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ Մարքսիզմով առաջնորդուող Սոցիալ Դէմոկրատ մի կուսակցութիւն:

— Ո՛չ եւ ո՛չ:

Երրորդ (Կոմմունիստ) Միջազգայինի խօսքը, այդ մասին, շատ պարզ, շատ որոշ, յստակ, մեկին է: —

«Հայկական Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, լինելով Ռուսաստանի Սոցիալ Դէմոկրատիայի հնագոյն ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ գնդերից մէկը...»:

Պարզ չէ՞. խնդիրը վճռուած չէ՞:

Մինչեւ Կոմմունիստական Կուսակցութիւն (1917-18) անունը իրենց վրայ առնելը՝ Սոցիալ Դէմոկրատ Մեծամասնականները (Բոլշեւիկները) «լճացա՞ծ», «պղտո՞ր», «դաւանանո՞ղ», «բարենորոգչակա՞ն», «օրինակա՞ն», Մարքսիստներ էին եղած.— ո՛չ: Նրանք առաջ էլ (1898-1917) նոյնն էին եղած, ինչ որ եւ՝ հիմայ: Լենինը նոյն Լենինն էր առաջ էլ, յետոյ էլ: Սոցիալ Դէմոկրատ անունը կրելիս էլ նա նոյն Լենինն էր, ինչ որ Կոմմունիստ: Խնդիրը անունը փոխելուն մէջ չէ, այլ էութեան, փիլիսոփայութեան:

Հետեւաբար բութ սլաքներ են արձակւում մեր Կուսակցութեան, երբ ասւում է թէ մեր Կուսակցութիւնն էլ, Սոցիալ Դէմոկրատ անունը կրելով, եղել է դեղին, «պաշտօնական Սոցիալ Դէմոկրատներից» մէկը:

Մենք եղել ենք յեղափոխական Մարքսիստներ, զուտ Գիտական Սոցիալիստներ՝ առաջին օրից: Եւ մեր սկզբնաւորութեան օրից մինչեւ 1923-ի մեր գործունէութիւնը, մեր գաղափարաբանութիւնը վերլուծման ենթարկելուց յետոյ է, որ Երրորդ Միջազգայինը հասնում է պատմութեան այդ ճշմարտութեանը:

Ու նորից ամենայն իրաւամբ եւ հպարտութեամբ կրկնում, պնդում ենք թէ՝ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն, — կը նշանակի յեղափոխական Մարքսիզմ, Գիտական Սոցիալիզմ, Մարքսեան Կոմմունիզմ:

Շարունակենք ընթեռնուլ Կոմմունիստ Միջազգայինի «բանաձեւի» առաջին հատուածը: Այդտեղ ասւում է, որ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը «Իր գոյութեան ամբողջ ընթացքում՝ գործել է Ռուսաստանի Սոցիալ Դէմոկրատ Բանուորական Կուսակցութիւնից Ա-ՅԱՆՁՆԱՑԱԾ»:

Որպէս նախկոր (pre'mice) ասենք խնդիրը է՛լ աւելի թանձրացեալ կերպով պարզաբանուած լինելու համար, որ տերրիտորեալ (երկրային) մաքով առնուած «Ռուսաստանի Սոցիալ Դէմոկրատիա» կամ «Ռուսաստանի Սոցիալ Դէմոկրատական Բանուորական Կուսակցութիւն» ո՛չ մի ժամանակ չի եղել, գոյութիւն չի ունեցել. չի եղել Սոցիալ Դէմոկրատ անունով այնպիսի մի կուսակցութիւն, որ Ցարերի կայսրութեան մէջ գտնուող բոլոր սոցիալ դէմոկրատական տարրերն ու կուսակցութիւնները իր մէջ ամփոփէր եւ մի ամբողջութիւն ներկայացնէր:

«Ռուսաստանի Սոցիալ Դէմոկրատ Բանուորական Կուսակցութիւնը» իր ծննդեան օրից՝ մինչեւ «Մենշեւիկեան» եւ «Բոլշեւիկեան» թեւերի յառաջացումը, եւ այնուհետեւ էլ, ո՛չ մի ժամանակ իր մէջ չի պարփակել ամբողջ Ռուսաստանի Սոցիալ Դէմոկրատիան: Ամբողջ Ռուսաստանի ՄԻԿ ՀԱՏ Սոցիալ Դէմոկրատ Կուսակցութիւն չի եղել:

Ընդհակառակը՝ Ռուսաստանի մէջ, փոխանակ մէկի, ՄԻ ԲԱՆԻ հատ Սոցիալ Դէմոկրատ կամ Սոցիալ Դէմոկրատ Բանուորական Կուսակցութիւններ են եղել:

Ֆինլանդիան, Էստոնիան, Լատուիան, Լիտուանիան, Լեհաստանը, իւրաքանչիւրը ունեցել է իր, այսպէս ասած, մասնակի, ազգային տերրիտորիալ Սոցիալ Դէմոկրատ Կուսակցութիւնը, որ «առանձնացած» է եղել եւ, գրեթէ, առնչութիւն, կապ չի ունեցել, կազմակերպչական տեսակէտից, որպէս ամբողջութեան մի մասնիկը, բուն Ռուսաստանի Սոցիալ Դէմոկրատ Բանուորական Կուսակցութեան հետ: Այնպէս որ, միաձոյլ, մի ամբողջականութիւն կազմող Սոցիալ Դէմոկրատ այնպիսի կուսակցութիւն չի եղել, սկզբից մինչեւ վերջ, որ իր մասնահիւզային ցանցերով պատած լինէր Ցարերի կայսրութեան բոլոր երկրամասերը եւ իր մէջ առած լինէր Սոցիալ Դէմոկրատական–Գործաւորական եւ այլ բոլոր տարրերը: Սոցիալ Դէմոկրատական միաւորութիւն (unite') չի եղել,

այլ եղել են Սոցիալ Դէմոկրատ առանձին, անջատ միութիւններ, որոնցից իւրաքանչիւրի գործունէութիւնը, գլխաւորապէս, տեղի է ունեցել իր մասնակի տերրիտորիալ սահմանների մէջ, թէեւ դրանք մասերը կազմած լինէին Ցարերի կայսրութեանը:

Այս իրականութիւնը մէջտեղ պիտի դրուի, որպէս զի է՛լ աւելի պարզ եւ հասկանալի լինի Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան «առանձնացած» լինելու հանգամանքը: Եւ խօսքն այն է, որ մինակ մեր Կուսակցութիւնը «առանձնացած» չի եղել, այլ մեզ նման շատ ուրիշ Սոցիալ Դէմոկրատ Կուսակցութիւններ էլ:

Բայց ի՞նչպէս վեր առնել, ի՞նչպէս հասկանալ «առանձնացած» եզրը պատմականօրէն: Սա ո՛չ պակաս նշանակութիւն ունի խնդրի լուսաբանութեան համար:

«Առանձնացած» բառը վեր է առնուած անհատականութեան, ինքնուրոյնութեան մաքով.— այսինքն՝ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ունեցել, պահել է իր առանձին կուսակցական անհատականութիւնը, ինքնուրոյնութիւնը, առանց երբ եւէ ժամանակ ձուլուած, միախառնուած լինելու ուրիշ որ եւ է այլ Կուսակցութեան հետ: — Եւ դա պատմական ճշմարտութիւն է, որ ամենայնիւ ընդգծում եւ ստորագրում ենք:

Բայց «առանձնացած» բառով չը պիտի հասկանալ լիակատար մեկուսացում, կղզիացում, անտարբերութիւն, անհաղորդութիւն դէպի Համա–Պրոլետարական ընդհանուր գործը: «Առանձնացում» չի եղել, երբ հարց է եկել հիմք քանդելու եւ նորը բերելու գործին մէջ:

Եւ արդարեւ, պատմական դէպքերը, իրողութիւնները, այնտեղ անանց վկայ են դալու հաստատելու, որ Համա–Պրոլետարական ո՛չ մի շարժում, ո՛չ մի արժէքաւոր գործ չի եղել, որ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը իր անմիջական եւ ուղղակի մասնակցութիւնը բերած չը լինէր՝ նոյն իսկ բուն Ռուսաստանում: Երբ համապետական չափանիշով սոցիալիստական, գոր-

ծաւորական–քաղաքական կամ տնտեսական — որ եւէ գործ է կատարուել, շարժում է տեղի ունեցել, մեր Կուսակցութիւնը ասպարէզ է նետուել, ուր որ Մասնաճիւղեր ենք ունեցել:

Սեւ Ծովի հիւսիսային եւ արեւելեան երկրամասերի մէջ տեղի ունեցող բոլոր շարժումների մէջ՝ մեր Մասնաճիւղերը գործօն դեր են խաղացել միշտ:

Անդրկովկասի ճարտարագործական գլխաւոր քաղաքներում Սոցիալիստական շարժումները մեր Մասնաճիւղերը եւ ընկերներն են սկսել: Գործաւորական յատուկ կազմակերպութիւնների սաղմերը Թիֆլիզի (Էնֆիտեան Ծըխախոտի Գործարանում, եւայլն), Բաթումի, Բագուի մէջ մեր ընկերներն են յառաջացրել: Ո՛չ մի գործադուլ, շարժում — քաղաքական, տնտեսական — չի եղել, որ առանց մեր ոգեւ եղած լինէր:

Ռուս Սոցիալ Դէմոկրատները՝ Մենշեւիկները, Բոլշեւիկները շատ յետոյ են եկել. նրանց գալուց առաջ գործը — սոցիալիստականը — արդէն սկսուել էր:

Արդէն մատնանիշեցինք մեր դերը 1904—1906–ի սոցիալիստական շարժումների մասին բերած մեր գործօն աջակցութիւնը: Հիմայ մատնանիշենք մի ուրիշ երկուսը:

Երկու ամսից աւելի տեւեց Մելովի (1907) գործարանների գործադուլը: Ո՛չ մի կուսակցութիւն կարողացաւ որ եւ է եղրակացութեան յանգեցնել Ցարական խաստութիւնների պատճառով: Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան մէկ խօսքը բաւական եղաւ, որ Թիֆլիզից յատուկ պատուիրակութիւն երթար եւ ամէն ինչ կարգադրէր՝ ի բաւականութիւն գործադուլաւորների:

Մատնանիշենք եւ մի ուրիշը:

Անցեալ տարի (1923) Վրաստանի Կոմմունիստ Կուսակցութիւնը իրենց նախորդների գործունէութիւնը պանծացնելու եւ նոր սերնդին վերյիշեցնելու նպատակով, — ինչ որ գովելի է եւ անհրաժեշտ պէտք է՝ պատմական ե-

ղելութիւնները միշտ պատկերացնելու եւ յիշատակելու — մանրամասն պատմականը տուեցին բոլոր թերթերի մէջ, նո՛յն իսկ «ՄԱՐՏԱԿՈՉ»ի եւ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»ի, Դուշէթի նշանակալից «էքսպրոպրիացիայի» (բռնագրաւման): Այո՛, այդ «էքսպրոպրիացիան» հերոսական, հոյակապ մի գործ էր: Արքունական գանձարանը կողոպտուեցաւ՝ ամենաճարպիկ կերպով: Հետեւանքը եղաւ, որ Ցարերի գանձարանը մի քիչ նիհարցաւ, իսկ յեղափոխականներինը՝ պարարտացաւ եւ գործը, կազմակերպչական եւ այլ տեսակէտով, է՛լ աւելի ծաւալ առաւ:

Բայց բուն Վրաստանի՝ Դուշէթի այդ «էքսպրոպրիացիան» չէր կատարուած առանց Սոցիալ Դէմոկրատ Հընչակեան Կուսակցութեան մասնակցութեանը: Բոլշեւիկները եւ մեր ոգեւ ձեռնարկը միասին էին յղացած, կազմակերպած եւ գործադրած՝ ամենայն յաջողութեամբ: Այդ իսկ «էքսպրոպրիացիայից» 200,000 ռուբլի մեզ բաժին եկաւ: Ցղացող, գործադրող Սոցիալ Դէմոկրատ Հնչակեանները դեռ ողջ են եւ թէ՛ այն ժամանակուայ Կովկասի Գործադիր Յանձնախումբի մեր անդամները:

Շարքը չենք ուզեր երկարացնել, ո՛չ էլ մեր Կուսակցութեան ընդհանուր գործերը պատմել: — Դա իր ժամանակին եւ առանձին:

Սրանով եղրակացնում ենք, որ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, որքան որ եղել է ինքնուրոյն, իր կուսակցական անհատականութիւնը պահող «առանձնացած» մի Կուսակցութիւն, բայց նա միշտ եւ ամէն ժամանակ ուղղակի աջակցել է հինի տապալման եւ նորի ստեղծումի ընդհանուր գործին: Նա «առանձնացած» թէ՛ եւ, բայց միշտ էլ ազդակ է եղած սոցիալիստական, համա–պրոլետարական ընդհանուր գործին:

Ահա թէ ո՛ւր հասցրեց մեզ Կոմմունիստ Միջազգայինի առաջին հատուածի մէջ ընկած «առանձնացած» մարը:

Հատուածի այն կտորը թէ՝ Սոցիալ Դէմոկրատ Հընչակեան Կուսակցութիւնը «Ժամանակին իր շարքերում ընդունած լինելով ՄԻԱԶԱԳՈՒՑՆԱԿԱՆ տարբեր Ռուսաստանում եւ ի մասնաւորի Հայաստանում» — այդտեղ «ՄԻԱԶԱԳՈՒՑՆԱԿԱՆ» բառը պէտք է հասկանալ ԱԶԳԱՄԻՋԵԱՆ հասկացողութեամբ: Ռուսերէն բնագրի թարգմանութիւնը ճիշտ բառով գրուած չէ: Դրանով Կոմմունիստ Միջազգայինը ասում է, որ մենք մեր Մասնաճիւղերը եւ շարքերը կազմել ենք հայ պրոլետարներից եւ ո՛չ ուրիշ ազգից:

Իրողութիւն է, որ մեր Կուսակցական դուռը միշտ բաց է եղել որ եւ է ազգի պրոլետարիատի եւ Աշխատանքի ներկայացուցչի առաջ, բայց պատմական իրողութիւնն է, նաեւ, որ այդ կողմից շատ մեծ յաջողութիւն չենք գտել, թէեւ փորձել, աշխատել ենք, — օտարները եղած են հատուկտոր:

Ուրեմն, պատմական իրողութիւնը մնում է իրողութիւն որ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը իր կազմակերպչական տարրերը ծծել, առել է գլխաւորապէս, եթէ չասենք բացառապէս, հայ իրականութիւնից, հայ գործօն ոյժերից:

«Երրորդ (Կոմմունիստ) Միջազգայինը», իր առաջին հատուածի մէջ, Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, կազմակերպչական տեսակէտից, նմանցնում է «ԲՈՒՆԴԻՆ»: Նմանութիւնը մասնակի է եւ ո՛չ թէ ամբողջական:

Հէական «ԲՈՒՆԴԸ» («Միութիւն»), կազմակերպչական մեթոտ էր ընտրել ամբողջ Ռուսաստանի մէջ գործող Հրեայ Սոցիալիստական, պրոլետարական, գործաւորական տարրերին միայն առանձին՝ Մի Հէական Կազմակերպութեան մէջ առնել եւ նրանց ղեկավարութիւնը ստանձնել: Եւ «ԲՈՒՆԴ»ի ղեկավարները, ժամանակին, իրենց այդ քայլը, մեթոտը արդարացնում էին Հրեայ պրոլետարների, Հրեայ գիւղական զանգուածների այն մասնայատուկ պայմաններով, որի մէջ նրանք գտնուում էին Ցարերի օրով: Հրեայ պրոլետարները, Հրեայ գիւղացիները, ցաք ու ցրիւ, քաղաքական, քաղաքացիական, մշակութային է՛լ աւելի վատթար պայմաններ ունէին, քան, օրինակ, ասում էին, Ռուսները: Հրեաները թէ՛ պաշտպանուելու եւ թէ՛ մշակութա-դաստիարակչութեան պէտքն ունէին, եւ այդ կարող էին նրանք ստանալ՝ միայն բուն Հրէական մի կազմակերպչութեան, մարտական Կուսակցութեան միջոցով, եւ հրէական լեզուով: «ԲՈՒՆԴԸ» եղաւ ուժեղ մի կազմակերպութիւն, պատմական դեր կատարեց. ամէն կողմ ճիւղեր ունեցաւ:

Բացի բուն Ռուսաստանի՝ եւ Լեհաստանի Հրեայ գործաւորներին ու գիւղացիներին կազմակերպելուց. «ԲՈՒՆԴԸ» ձգտեց իր ընդհանուր կազմակերպութեան մէջ առնել նաեւ Գալիցիայի Հրեայ աշխատաւորներին, որ այն ժամանակ Աւստրո-Մաճառական Կայսրութեան մասն էր կազմում, ինչպէս եւ Ռումանիայինը, եւայլն: Բայց, այդ կողմից, շատ մեծ յաջողութիւն չը գտաւ, եւ իր գործունէութեան գլխաւոր առանցքը մնաց բուն Ռուսաստանը:

Դրա համար է, որ ասում ենք թէ՝ նմանութիւնը մեր եւ «ԲՈՒՆԴԻ» միջեւ մասամբ ճիշտ է:

Տարբերութիւնը ա՛յն է, որ Սոցիալ Դէմոկրատ Հընչակեան Կուսակցութեան կազմակերպչական ցանցերը տարածուել, սփռուել են ամբողջ հայ աշխատաւորական իրականութեան վրայ, — Տաճկաստան, Ռուսաստան, Պարսկաստան, Ռումանիա, Բուլղարիա, Եգիպտոս, Ամերիկա, եւայլն: Մեր Կազմակերպութիւնը եղած է շա՛տ աւելի տարածուն, բազմաճիւղ եւ բարդ, — իւրաքանչիւր մասի տեղական յատուկ պայմանները աչքի առաջ ունենալով:

Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, որպէս Կուսակցութիւն, որպէս անհատ Կազմակերպութիւն չի սահմանափակուել, ինչպէս «Բունդը», միայն մի երկ-

բով, մի տերբիտորիայով: Նրա գործունէութեան ասպարէզը չա՛տ աւելի ընդարձակ, չա՛տ աւելի ճիւղաւորուած է եղել: Մեր իրականութիւնն էլ իր չա՛տ տեսակի մասնայատուկ պայմաններն է ունեցել:

Միջազգային Սոցիալիստական Կուսակցութիւնների եւ Կազմակերպութիւնների մէջ՝ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը արտայայտել, ներկայացրել է ամբողջ հայ աշխատաւորական իրականութիւնը.— «ՀԱՅԿԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱԶԳԱՄԻՋԵԱՆ ՄԻԱՑՄԱՆ ԸՍԿԸԶԲՈՒՆԲԸ», ինչպէս որ «Երրորդ Միջազգայինն» է որակում: Եւ այդպէս ճանաչել են մեզ, մեր երկար պատմութեան ընթացքում, բոլոր ա՛յն Կուսակցութիւններն ու Կազմակերպութիւնները, որոնք Սոցիալիստական Միջազգային Համագումարներին են մասնակցել: Չկայ Սոցիալիստ մի Կուսակցութիւն, որ մեր Կուսակցութիւնը ճանչցած չը լինէր, նրա գործունէութիւնից տեղեկութիւն չունենար, ո՛ր երկրի մէջ որ լինէր:

Եւ Հայ աշխատաւորական իրականութիւնը, Հայ Աշխատանքի ներկայացուցչութիւնը, ցրուած, կոտորակուած, ամէն երկիր եւ անկիւն ընկած, պատմականօրէն կրել է, եւ դեռ շարունակում է խորապէս կրել, Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան դրոշմը: Չը կայ հայ աշխատաւորական ո՛չ մի շրջան, ո՛չ մի երկրամաս, որ իր նորագոյն գործունէութեան պատմութիւնը կապուած չունենայ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան հետ: Այդ տեսակէտից՝ մեր Կուսակցութեան դերը եղել է եզակի. է՛լ աւելի բազմաձաւալ, ներոյժ, ներգործօն, քան Ցունական, «Հեթերիան», քան Իտալական «Կարբոնարին», քան հնագոյն ա՛յլ կուսակցութիւններ, որոնք՝ զանազան միջավայրերի մէջ ցրուած դրական դեր են խաղացել հինը քանդելու եւ նորը բերելու պատմական գործին մէջ:

Հետեւապէս շատ պարզ է, եւ այդտեղ տարօրինակ ոչինչ կար, որ 37 տարուայ գոյութիւն ունեցող՝ զուտ

յեղափոխական Մարքսիստական հիմունքներով առաջնորդուող մի Կուսակցութիւն դիմէր «Երրորդ Միջազգայինին» ասելով՝ որ «իր մուտքը պայմանաւորում է Կուսակցութեան ազգամիջեան միացման ամբողջականութեամբ եւ ինքնավար դրութեան ճանաչմամբ»:

Սկզբունքային տեսակէտով՝ եղա՞ծ ենք Մարքսիստական. տակտիկական տեսակէտով՝ եղա՞ծ ենք յեղափոխական.— «Երրորդ Միջազգայինը» այդ մասին դրական պատասխան տուեց:

Բայց, հակառակ դրան, նա մեզ բացասական պատասխան է տալիս, առաջին անգամ: Եւ այդ հասկանալի է: Կազմակերպչական սիստեմ եւ անուան խնդիր կայ: «Երրորդ Միջազգայինի» 21 պայմաններից 17-ը որոշ է: Նրա ձեռքերը, կազմակերպչական տեսակէտից, արդէն կապուած են:— Ամէն երկրի մէջ՝ «Երրորդ Միջազգայինը» միայն մի Կոմունիստական Տերբիտորիալ Կուսակցութիւն կարող է ճանաչել.— ուրեմն կազմակերպչական մեր դրութիւնը մատնանիշելով՝ մեզ առաջարկւում է, որպէս Կուսակցութիւն, տարրալուծուիլ, որով եւ մեր իրաքանչիւր շրջան պիտի մտնի այդ տերբիտորիայի մէջ գտնուող Կոմունիստ Կուսակցութեան մէջ, եւ նրա հետ ձուլուի:

Այդ՝ մենք չենք ընդունում, չպիտի ընդունինք. ուստի բանագնացութիւնները շարունակւում են. այլապէս էլ չի կարող լինել: Հարկաւոր է է՛լ աւելի լաւ պարզաբանուիլ, իրողութիւնները եւ իրականութիւնները է՛լ աւելի մօտիկուց ճանաչել, վերաքննել: Դրանք էլ կը լինին:

Որքան որ մեր կողմից դիմում եղաւ. «Երրորդ Միջազգայինի Գործադիր Մարմինը» իր իրաւունքի մէջն էր՝ մեզ իր կանոնադրային պայմանները, տրամադրութիւնները մատնանիշելու, եւ միայն այդքան: Իր սահմանից դուրս էր, հէնց առաջին անգամ, մեր Կուսակցական ամբողջականութեան դէմ տարրալուծում առաջարկել: Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը «Երրորդ

Միջազգայինի» հրահանգով չէր կազմակերպուել, որ նրա հրահանգով էլ լուծուէր, — ո՛չ։

Բայց հէնց այդ, կազմակերպչական սիստեմի տեսակէտից, «Երրորդ Միջազգայինի Գործադիրը» ինքն իրեն հետեւողական չի մնում՝ մեզ նկատմամբ «բանաձեւ» այնձական ժամանակին, երբ տարբեր իրականութիւնների առաջ է տեսնում իրեն։

Մատնանիշենք. բայց նախ մի փոքր յետ երթալով։

Մեր անճարակ հակառակորդները յաճախ խծրծել, վեր են առել այն հանգամանքը, որ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, իր կազմակերպութեան մէջ, առաջին օրից, չի առել, չի բովանդակել նաե՛ւ սոցիալիստական Թուրք, Քիւրդ, Զէրքէզ, եւայլն, տարբեր՝ Տաճկաստանում, օրինակ։ Այլ բաւականացել է միայն Հայեր առնելով, Հայ միջավայրից սնունդ քաղելով, եւ ո՛չ թէ բոլոր ցեղերից ու ազգութիւններից։ Ուրիշ խօսքով՝ մենք Պետութեան մէջ գտնուող բոլոր տարբերից ընդհանուր կազմակերպութիւններ, մասնաճիւղեր չենք յառաջացրել, այլ միայն Հայ — ինչ որ մեզ տուել է բացառապէս ազգային գոյն (երբեմն էլ արտառոցօրէն ասում են ազգայնական, առանց այդ եզրերի իսկական նշանակութիւնը հասկանալու), հարկադրուելով միւսներին։

Պատմութիւնը, իրողութիւնները իրենց սեպհական շրջանակի եւ կտուանի վրայ դնելու համար՝ ասենք, որպէս բացարձակ ճշմարտութիւն եւ իրականութիւն, որ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, առաջին օրից իսկ, ձգտել, աշխատել է, որ իր կազմակերպութիւնների, մասնաճիւղերի մէջ առնի ուրիշ տարբերից, ուրիշ ցեղերից եւ ազգերից էլ։ Բայց եթէ դա մեզ չի յաջողուել, այդ եղել է բոլորովին անկախ մեր ցանկութիւններից։ Մեր արդարացումը, այդ տեսակէտով, ցցուն կերպով յառաջ կը գայ, երբ առնենք սրանից 38 տարի առաջ՝ Տաճկաստանի մէջ գոյութիւն ունեցող այլազան տարբերի փոխ-յարաբերութիւնները, նրանց իրաքանչիւրի քաղաքական, տնտեսական, ընկերային հասկացողութիւնները եւ նրանց ամէն մէկի առանձնական դիրքը՝ հանդէպ Սուլթանական պետական մեխանիզմի։ Դարերով ծանրացած պատմական նախապաշարումները, բեւեռուած գաղափարները մի անգամից չի կարելի ջնջել. մարդկանց ուղեղի եւ զգացմունքների վրայ մի անգամից ազդեցութիւն գործել չի լինիլ։ Դարերի նախասիրութիւնները, ստեղծուած բարոյական, մտաւորական գոյավիճակը, ժառանգականութիւնները կը շարունակուին.— քանդելու, անհետացնելու, նորը բերել՝ դնելու համար՝ երկար աշխատանքի եւ ժամանակի պէտքը կայ։

Ասում ենք, որ այդ ուղղութեամբ մենք առանձին ջանք եւ աշխատութիւն թափել ենք։ Դիմենք պատմութեան։ Մեր պաշտօնական օրգանների մէջ գրուածները չեն ջնջուած, անյայտացած. նրանք կան։ Կարելի է վերատպուգուել։ — Պաշտօնական օրգաններով եւ պրոպագանդիստ-գործիչների բերանով՝ մենք միշտ եւ շարունակ ասել, կրկնել ենք, առաջին օրից, որ մենք թշնամական, հակա-բարեացակամ որ եւ է գործ ու ձգտում չունինք հանդէպ Թուրք հասարակ ժողովրդի՝ գիւղացու, աշխատաւորի, ինչպէս եւ ա՛յլ ազգերի։ Մեր գործը, ասել, պարզել ենք, որ Սուլթանի եւ Սուլթանական պետութեան հետ է. մենք նրա քայքայման, նրա տապալման գործաւորներն ենք։ Իսկ ընդհանուր այդ կործանումից նոյնքան պիտի օգտուէր ե՛ւ Թուրք, ու ա՛յլ ազգերի աշխատաւոր տարբերը, որքան եւ հայկականը։ Ուստի, առիթ չենք փախցրել, յորդոր ենք կարդացել- քարոզել ենք Թուրք եւ այլ ազգերի հասարակ աշխատաւոր, գիւղացի տարբերին, որ ո՛չ թէ մեզ արգելք լինին եւ Սուլթանական պետական-պաշտօնէութեան կողմը բռնեն, որ իրենց էլ կեղեքիչ-հարստահարիչն է, այլ գան, միանան մեզ հետ, մեզ այժ տան, ընդհանուր թշնամու՝ Սուլթանների դէմ մաքառելու։

Իրողութիւնը։ — Վեր առնենք, իր ժամանակին, համաշխարհային հեռաքրքրութիւն յառաջ բերող Գաղատիայի մեր դատավարութիւնը։ Այդ հոչակաւոր դատավարութեան ընթացքում մեր գործիչ–ընկերների արտասանած ճառերը տպուած հրապարակի վրայ են։ Այդ գրքոյկը Միջազգային Սոցիալիստական գրականութեան մէջ մի գոհարիկ կարող է նկատուիլ՝ որպէս մարքսիստական տեսութեամբ առաջնորդուող–գործիչների խօսքեր՝ Սուլթանական դատաւորների առաջ։ Այդտեղ ասուած է թէ՝ իրենց գործունէութիւնը ո՛չ թէ Թուրք հասարակ, աշխատաւոր ժողովրդի դէմ է ուղղուած, այլ բացառապէս պետական այն ընդհանուր սիստեմի, որից հաւասարապէս տառապում են բոլոր ազգերի աշխատաւորներն ու ժողովուրդները։ Այդտեղ Հայ գիւղացին, Հայ աշխատաւորը չի հարկադրուել Թուրք եւ այլ ազգերի իր դասակարգակիցներին։ Ընդհակառակը՝ նրանք գրուել են մի գծի վրայ՝ մի երրորդի՝ Պետութեան դէմ։

Եւ մի՞թէ Մարքսիստական տեսութիւնը այդ չէ։

Փարամազի ճառը մի գլուխ գործոց չէ՞։ — Կարդանք։ — «Մէկ Արտամետցի Տաճիկ ինձ պատմել է. «Մեր ծառի տանձը գնահատեցին 20 դուրուշ. իսկ ես ծառը իր վրայի տանձով առաջարկեցի նրանց 10 դուրուշով. որի փոխարէն լաւ ծեծուելուց յետոյ՝ վճարեցի տուրքը»։ Արտայայտուե՞լ է այստեղ աշխատաւորը, առանց ցեղի խնբրութեան, Փարամազի բերանով։

Պատմելով դատաւորների առաջ շահագործուող, ոռճկի երես չտեսնող ոստիկանական կազմի մասին, հոյակապ գործիչը աւելացնում է։ — «Այսուամենայնիւ, այս ոստիկանը ապրում է, տուն, ընտանիք է պահում, մինչեւ անգամ հարստութիւն էլ է դիզում։ Ո՞ր տեղից,— ի հարկէ գիւղացիներին կողոպտելով... Այո՛, գիւղացուն կողոպտելով, լինի այդ գիւղացին Հայ, Թուրք, Քիւրդ, Ասորի, Չէրքէզ, նոյն իսկ Մարքս–Գնչու...»։

Հակա–Սոցիալիստական թէ՞ Սոցիալիստական է։

Շարունակենք։ — «Մենք չենք առաջնորդուում ազգայնական զէյրաթով։ Մենք թիւ ազգայնամոլներ չենք. մենք աննենդ ժողովրդասէրներ ենք... մեր պահանջն է՝ որ Հայաստանի ազգաբնակչութիւնը, այսինքն՝ Հայ, Քիւրդ, Թիւրք, Արաբ, Լազ, Չէրքէզ, Ասորի, Եզիդի, մինչեւ անգամ Մուքրուբ–Գնչուն իր քուէով ընտրի իր կառավարիչը ու կառավարուի իրենց կարգած մարդերով ու օրէնքներով, որը բարօրութեան հասնելու կարճ ճանապարհն է։ Մենք պահանջում ենք Հայաստանը՝ իր մէջ ապրող ամբողջ ազգաբնակութեան համար»։ Ա՛յլ Մարքսիստ, համանման պարագաների մէջ, սրանից աւելի պերճախօս կերպով արտաբերե՞լ է իր պայքարի նրպատակը։

Իսկ Փոքր–Հայքի պետական պաշտօնէութեան եւ էշրաֆների երկար տարիներ մղձաւանջը եղող Շմաւոնի ադիսականը Քիւրդերի մէջ՝ շատերին յայտնի է։

«Օսմանեան Սահմանադրութեան երկրորդ վերահաստատութեանը»՝ Կիրասոնի եւ Օրդուի ներքնաշխարհում, Քիրմաստի շրջանում, ունէինք հինգ գուտ Թուրք Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան գիւղեր, որոնք մեր կազմակերպութեան մէջն էին եւ գործում մեր ծրագրով։ Մեր գործիչ Կոբիւնը ուղղակի պաշտում էր Թուրք գիւղացիներից։ 3–6 ամիս անցնելուց յետոյ՝ ամէն ինչ տակն ու վրայ եղաւ, Իտահատի գործիչների այցելութեամբը։ Ցեղային նախապաշարումները, կրօնական մոլեռանդութիւնը, գաբեւոր ատելութիւնների կոյտերը՝ այդտեղ դեր էին խաղացել։ — «հինները, յաճախ, շղթայում են նորերին», աւելի քան պատմական ճշմարտութիւն է։

Մեր ջանքերը, ուրիշ շրջանների մէջ, այդ ուղղութեամբ կատարուած, առ այժմս զանց ենք առնում, մի կողմ թողնում։ Սա էլ բաւական էր՝ դրուած խնդիրը լուսաբանելու համար։

Այդ ասել է, որ ոչ–հայ աշխատաւորներին մեր կազմակերպութեան մէջ առնելու ձգտում ունեցել ենք եւ այդ

ուղղութեամբ էլ աշխատանք կատարած։ Բայց եթէ չենք յաջողել մեր ջանքերի մէջ՝ դա եղել է մեր կամքից անկախ։ Պատմական ոյժեր կային, որ անկարող եղանք խորտակել։

Կազմակերպչական նոյն այդ խնդրին ենք գալիս հիմայ։

Անցել է 37 տարի այդ օրից, եւ պատմական ոյժերը, մի տերբիտորիայի վրայ դիպուած ընկերային փոխ-յարաբերութիւնները աչքի առաջ ունենալով, «Երրորդ Միջազգայինը», այսօր — Փեբր. 5, 1923 — կազմակերպչական տարբե՞ր մեթոդի, տարբե՞ր տակտիկայի է հետեւում, ինչ որ մենք ունեցել ենք 37 երկար տարիներ առաջ։ Ո՛չ։ «Երրորդ Միջազգայինն» էլ նոյն մեթոդն է առաջարկում, նո՛յն տակտիկան, կազմակերպչական ինչ որ առաջ միջավայրից եւ պատմութիւնից հարկադրուել էր ընդունել Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը։

Ահա՛, կարդանք «Երրորդ (Կոմմունիստ) Միջազգայինի» բերած, առաջարկած լուծումը՝ մեր Կուսակցութեան Տաճկաստանի մասնաճիւղերի նկատմամբ։

Ասում է։— «Հնչակեան Կուսակցութեան Տաճկաստանի կազմակերպութեան վերաբերեալ, Կոմինտերնի Գործադիր Կոմիտէի Նախագահութիւնը անժամանակ է գտնում Տաճկաստանի Կոմմունիստ Կուսակցութեան ձուլումը Հնչակեան Կուսակցութեան հետ»։

«Առաջիկայում, մինչեւ Տաճկաստանի Կոմմունիստ Կուսակցութեան հետ ձուլումը, Հնչակեան Կուսակցութիւնը համարւում է Կոմմունիստական Կուսակցութեան համակրող եւ՝ իբրեւ այդպիսին՝ ունենում է իր ներկայացուցիչը Տաճկաստանի Կոմմունիստ Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան մօտ, մասնակցութիւն ունենալով Տաճկաստանի Կոմմունիստ Կուսակցութեան աշխատանքների մէջ»։

Շատ որոշ է եւ պարզ։— Կազմակերպչական տեսակէտով՝ «Կոմմունիստ Միջազգայինը» դեռ «վաղահաս» է համարում, որ Տաճկաստանի մէջ մէկ հատ Կոմմունիստ Կուսակցութիւն յառաջանայ, մի եւ նոյն տերրիտորիայի վրայ։— Պատմական՝ դէմ դիմաց կանգնած բազմագոյն հակադիր ոյժերը, հիմայ, ուրեմն, այդ անկարելի, անգործադրելի են դարձնում։ «Ապագայ»ին են թողնում։

Եթէ 37 տարի անցնելուց յետոյ՝ «Երրորդ Միջազգայինը» տակաւին «ազգամիջեան» («միջազգային») կազմակերպչական սիստեմից է կառչում՝ «Կոմմունիստական աշխատանք» կատարելու համար, ապա ի՞նչ ասել 37 տարի առաջ։ չէ՞ որ այն ժամանակ պայմանները է՛լ աւելի ճեղ, անեղաստ էին դասաւորուած։ Հետեւապէս՝ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը պատմութեան, միջավայրի հրամայականութիւնից չէ՞ր առաջնորդուել՝ «ազգամիջեան» կազմակերպչական սիստեմին յանգելով, Սոցիալիստական, մարտական գործ մղելու համար։

Մեր կազմակերպչական «ազգամիջեան» («միջազգային») դրութիւնը ընդունելի չի լինում «Երրորդ Միջազգայինի Գործադիր Կոմիտէին», բայց ինքն էլ նոյն «ազգամիջեան» սիստէմի կազմակերպչութեանն է վերադարձնում մեզ Տաճկաստանի մէջ, ուր տեղ «ազգամիջեան» սիստէմով գնացած լինելիս իրեն անընդունելի էր երէկուայ պայմաններով, իսկ նոյնը ընդունելի այսօրուայ նոյն եւ համանման պայմաններով։

Կա՞յ հետեւողականութիւն։ կա՞յ բանաւոր պատճառականութիւն։ Եթէ այդ չը կայ,— ապա կայ նախապաշարում, նախապատրաստուած տրամադրութիւն, մէկէն աչքի ընկնող միտումնաւորութիւն՝ «Երրորդ Միջազգայինի» ներկայացուցիչ-արտաբերողների մէջ՝ ընդդէմ մեր Կուսակցութեան։

Երբ մեր առաջ դրուում էր 17-րդ յօդուածը, պահանջւում էր տերբիտորիալ ձուլում — «Երրորդ Միջազգայի-

նը» ամբողջական իրողութեանց հետ ծանօթ պիտի լինէր նախ։

«Երրորդ Միջազգայինի» նոյն այդ անհետեւողականութիւնը, հակասութիւնը աչքի է ընկնում՝ իր միւս երկիրների համար բերած լուծումների նկատմամբ, որոնց մասին կարդով կը խօսենք։

Եթէ կազմակերպչական սիստեմի նկատմամբ բաղխում կար, — «Գործադիր Կոմիտէն» առաջին իսկ բանադնացութեանց պիտի կանդնէր յօդուած 10-րդի վրայ, ինչպէս որ խնդիրները է՛լ աւելի լաւ լուսաբանուէին։

Եւ վստահ ենք, որ պիտի պարզաբանուենք, հակացողութեան դանք։

Խօսելով Կոմմունիստ Միջազգայինի եւ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան միջեւ կատարուած առաջին բանադնացութիւններից դուրս եկած եզրակացութիւնների առթիւ՝ մենք այն կէտին հասանք, որ խնդիրը չատ լաւ կերպով եւ հիմնաւորապէս ուսումնասիրուած, պարզաբանուած չէր։ Խնդրին մենք մօտեցել էինք միջազգային պրօլետարական շահերի եւ Հայ իրականութեան տուիքների տեսակէտից։

Միջազգային պրօլետարական ընդհանուր շահի տեսակէտից՝ պէտք է որ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը իր ամբողջական կազմակերպչական գոյութիւնը պահէր։ Նրա ինքնութիւնը լիակատարապէս համաձայն էր Հայ իրականութեան տուիքներին։ Այնպէս որ, Կոմմունիստական Միջազգայինի Գործադիր Կոմիտէի Նախագահութիւնը հասել էր այնպիսի հաստատ եզրակացութիւնների, որ իրեն տարել, գրել էր հակասութիւնների մէջ։

Մեր այդ թէզը ամրապնդենք, Թիւրքիայից յետոյ, Եգիպտոսը վեր առնելով։

Կոմմունիստ Միջազգայինի Չորրորդ Համագումարի մէջ՝ տեղեկաբեր Կատայաման հետեւեալ կերպով է

զարգում Եգիպտոսում տիրող իրերի դրութիւնը՝ Կոմմունիստական տեսակէտից։

«Եգիպտոսը, ասում է Կատայամա, իր ձեռքին ունի Արեւելքի եւ Մայրագոյն Արեւելքի բանալին։ Հետեւաբար Եգիպտական Կոմմունիստական շարժումը չատ կարեւոր է»։ — Այդ մասին խօսք, առարկութիւն, դիտողութիւն չկայ. Եգիպտոսը ունի այդ բացառիկ առաւելութիւնը, թէեւ դա ամէն ինչ չէ՝ պատերազմական ներկայ տեխնիկայի եւ հաղորդակցութեանց միջոցների զարգացման տեսակէտից։ Թողնենք այդ. չարունակենք լսել զեկուցարերին։

«Մօտաւորապէս 40 տարի, յարում է Կատայաման, Եգիպտական ժողովուրդը շահագործուեցաւ Անգղիական եւ Ֆրանսիական իմպերիալիստներից (կայսերապաշտներից)։ Վերջին պատերազմը փոխել տուեց Եգիպտական ժողովրդի առաջուան դիրքը։ Եգիպտական ժողովուրդը ապստամբեց Անգղիական իմպերիալիզմի դէմ։ Եգիպտական փոքր բուրժուազիան եւ Եգիպտական կապիտալիստները դոհ են Եգիպտոսի անուանական անկախութիւնից. իսկ Կոմմունիստները եւ յեղափոխական գործաւորները բնաւ դոհ չեն այդ անուանական անկախութիւնից։ Նրանք ուզում են իսկական եւ իրական անկախութիւն. ու այդ կէտի մէջ Կոմինտերնը պէտք է նրանց պաշտպանի եւ զօրավիգ հանդիսանայ։ Մենք՝ Եգիպտական յանձնախումբի անդամներս համաձայն ենք, որ մեր կողմից էլ օյժ տրուի եւ խրախուսուի Կոմմունիստական այդ շարժումը։ Եգիպտոսի մէջ Կոմմունիստական չատ զօրաւոր շարժում պիտի հաստատուի, որպէս զի Արեւելքի եւ Մայրագոյն Արեւելքի բանալին իր ձեռքին պահի։ Հնդկաստանի ապրստամբութեան պարագային, իր աշխարհագրական դիրքի պատճառով, Եգիպտոսը իր ձեռքին կ՚ունենայ Հնդկական յեղափոխութեան բանալին եւ այդպիսով նա կարող է չատ մեծ ծառայութիւն մատուցանել այդ յեղափոխութեան՝ պաշարելով Սուէզի ջրանցքը։ Հետեւա-

բար մեր ցանկութիւնն է օգնել Եգիպտական Կոմմունիստական շարժմանը եւ առաջարկում ենք, որ ճանչցուի Եգիպտական Սոցիալիստ Կուսակցութիւնը»:

Մեր այս նիւթին չի վերաբերում, ուստի չենք փորձում վերլուծել թէ Եգիպտոսի մէջ ո՞ր տարրերին են ուզում պաշտպան հանդիսանալ Անգլիական իմպերիալիզմին, Եգիպտոսի «անուանական անկախութեան»ը, եւ որո՞նք· ոչ: Մամլուկների այդ աշխարհի մէջ «տիրող շերտերը» շատ են, խնդիրը բարդ: Մամլուկ կալուածատէր–փաշան ա՛յլ շարժառիթներից է մղւում «անկախութեան» համար, Կոմմունիստը՝ ա՛յլ:

Դիտենք նաեւ, — Եգիպտական Կոմմունիստները, լիակատար իրաւամբ, ձգտում են ձեռք բերել Եգիպտոսի համար կատարեալ եւ իրական անկախութիւն: Կոմմունիստ Միջազգայինի յանձնախումբի տեղեկարեր Կատայման, միւս բոլորի հետ միասին ընդունում, ծափահարում է այդ միտումը, որպէս անձեռնմխելի մի իրաւունք·— Կոմմունիստական շարժումը դրանով, ոչ դեղինանում է, ո՛չ էլ սկզբունքային խաթարում կրում·— բայց նոյն այդ երեւոյթը երբ տեղի է ունենում Հայ կեանքի մէջ, երբ Հայաստանի Կոմմունիստներն էլ (Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան մէջ մարմնացած) ձգտել էին եւ ձգտում են ամբողջական Հայաստանի լիակատար եւ իրական անկախութեանը, — դա Հայ իմաստակների կողմից համարւում է ազգայնականութիւն, հակակոմմունիստական մի ձգտում:

Շարունակենք, այժմ, կարդալ տեղեկագիրը, — «Եգիպտական Սոցիալիստ Կուսակցութիւնը նոր է, դեռ երիտասարդ է, տակաւին անփորձ է շատ բաների մէջ, թէեւ Եգիպտական ընկերները գործում են Կոմինտերնի համար՝ Կոմինտերնի գծերով· բայց ցանկանում ենք մի քանի պայմաններ դնել՝ նրանց ընդունելութեան համար Կոմինտերնի մէջ: Յանձնախումբը, մի քանի նիստերից յետոյ, հետեւեալ եզրակացութեան հասաւ·

«1·— Եգիպտական Սոցիալիստ Կուսակցութեան պատգամաւորի տեղեկատուութիւնից երեւում է, որ այնտեղ յեղափոխական զօրաւոր շարժում կայ՝ Կոմմունիստ Միջազգայինի հասկացողութեամբ:

«2·— Յանձնախումբը ի նկատի ունի, սակայն, որ Եգիպտական Սոցիալիստ Կուսակցութեան անդամակցութիւնը պիտի յետաձգուի, մինչեւ որ

«Ա·— Այդ կուսակցութիւնը իր միջից արտաքսի ոչցանկալի տարրերը:

Բ·— Կուսակցութիւնը մի համագումար կանչի, որին մասնակցին՝ Եգիպտոսի Սոցիալիստ Կուսակցութեան հետ միասին՝ բոլոր այն Կոմմունիստ տարրերը, որոնք այժմս դուրս են Եգիպտական Սոցիալիստ Կուսակցութիւնից եւ ընդունում Երրորդ Միջազգայինի 21 պայմանները:

«Գ·— Կուսակցութիւնը իր անունը փոխի, դնի «Եգիպտական Կոմմունիստական Կուսակցութիւն»:

«3·— Հետեւաբար հրահանգւում է Եգիպտական Սոցիալիստ Կուսակցութեան, ոչ ուշ քան 15 Յունուար 1923, համագումար կանչել, վերեւ բերուած կէտերը իրագործելու համար»:

Եւ 1923, Փետրուարի 5–ին էլ Կոմմունիստ Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտէի Նախագահութեան կողմից Ռ· Վ· Կոնսիներ ստորագրութիւն եւ կնիք է դնում, որ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան Եգիպտոսի շրջանը լուծուի, իր գոյութիւնը կորցնի, մանի այն կազմակերպութեան մէջ որտեղից «ո՛չ ցանկալի տարրերը» ո՛չ միայն չարտաքսուեցան, այլ միշտ էլ կան եւ Կոմմունիստական անունը եթէ կայ, բայց իրը, առարկան տակաւին չը կայ:

Համապատասխան եղա՞ւ դա ընդհանուր պրօլետարական շահին: Մինչեւ 37 տարիից ի վեր մենք Եգիպտոսի մէջ ունինք զօրաւոր մասնաճիւղեր, որոնք ամենայն եռանդով Մարքսիզմի պրոպագանդիստներն են եղել Կա-

հիրէի, Աղեքսանդրիայի եւ Եգիպտական ա՛յլ քաղաքների մէջ։ Շահ կա՞ր առաջարկուած այդ լուծումից։

Վերակրկնում ենք, — խնդիրը լաւ ուսումնասիրուած չէր։ վճիռը տրուել է հապճեպով, նա չի համապատասխանում ո՛չ Հայ իրականութեան եւ ո՛չ էլ ընդհանուր պրոլետարական շահերին Կոմմունիստական միջազգային շարժման զօրեղացմանը ու ծաւալմանը։

Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ապրելու լիակատար իրաւունք ունի՝ թէ սկզբունքային, թէ տակտիկական տեսակէտից, իր ամբողջականութիւնը պահելով։

Խնդիրը է՛լ աւելի պարզ կը լինի, երբ վեր առնենք այդ հարցը թէ ինչո՞ւ, ինչի՞ց դրդուած Լենինը Սոցիալ Դէմոկրատ անունը վերցնելով՝ իրենց Կուսակցութեան տուեց Կոմմունիստ անունը։ Տեսնենք թէ իր բերած առարկութիւնները ո՛ր աստիճան հարուածում են Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը սկզբունքային եւ տակտիկական տեսակէտից։

Ե.

ՍՈՑԻԱԼ ԴԷՄՈԿՐԱՏԻԱ ԵՒ ԿՈՄՄՈՒՆԻԶՄ

Սոցիալ Դէմոկրատիա եղրերը, մինչեւ Ռուսական Պրոլետարական Յեղափոխութիւնը, գտնւում էին բարձրակէտի վրայ, ունէին մի առանձին հմայք, համարւում էին որպէս աւելի յստակ, զտուած, բիւրեղացած արտայայտութիւններ՝ Գիտական Սոցիալիզմի կիրառութիւնից յառաջացած նոր ընկերային դրութեանը եւ կազմակերպութեանը։ Մինչեւ այդ թուականը՝ այդ եղրերը, այսպէս ասած, գաղափարային մակընթացութեան մէջ էին գտնւում։

Եկան տեղատուութեան օրերը։ երբ այլեւս Սոցիալ Դէմոկրատիա եղրերը, ոմանց կողմից, նկատուեցան «պղտոր», «ո՛չ–մաքուր» արտաբերութիւններ Գիտական

Սոցիալիզմից բղխած նոր ընկերային կարգաւորութեանը։ եւ նրանք նախընտրեցին վերակրկնել, նորից կիրառութեան մէջ դնել կոմմունիզմ եղրը։

Հարցը, գլխաւորապէս, յառաջացաւ Լենինից։

1918–ի Փետրուարի մէջ՝ Ռուս Բոլշեւիկները (Մեծամասնականները), որ առաջ Ռուս Սոցիալ Դէմոկրատ Բանւորական Կուսակցութեան մի ճիւղն էին՝ ընդունեցին Կոմմունիստ անունը եւ կոչուեցան Ռուսաստանի Կոմմունիստ կուսակցութիւն։

Այդ առթիւ ամենից առաջ պիտի լսենք Լենինի առարկութիւնները։

Դժբախտաբար՝ մեր ձեռքի տակ չունինք Լենինի դրուածքների ռուսերէն բնագրերը։ ուստի հետեւում ենք անգղիերէն թարգմանութիւններին։

Իր խօսքերի հարազատ թարգմանութիւնը տալուց յետոյ է, որ մեր ասելիքները պիտի աւելցնենք, ինչ որ վերաբերւում է մեր Կուսակցութեան դիրքին։ այդ մեթոդով պիտի ընթանանք։

Թէ ինչո՞ւ փոխանակ Սոցիալ Դէմոկրատ, Սոցիալ Դէմոկրատիա եղրերի պէտք է գործածել Կոմմունիստ, Կոմմունիզմ եղրերը, — Լենինը տալիս է հետեւեալ պատճառաբանութիւնները։ Հետեւենք իր տասծներին։

— «Ի՞նչ անուն պիտի տանք մեր Կուսակցութեան։ Մարքսի եւ Էնդէլսի բառապիտութիւնը (Տերմինոլոգիա) գործածելով՝ մեր Կուսակցութիւնը պիտի կոչենք Կոմմունիստ Կուսակցութիւն։

«Մենք Մարքսիստներ ենք։ մեր քաղաքականութիւնը հիմնուած է ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԷՍՏԻ վրայ, որ խեղաթիւրուեցաւ եւ արհամարհուեցաւ «Սոցիալ Դէմոկրատիայի» կողմից, երկու տեսակէտով։

«1։— Որովհետեւ գործաւորները երկիր չունեն, ուստի իմպերիալիստական (կայսերապաշտական) մի պատերազմի ժամանակ՝ «հայրենիքի պաշտպանութիւնը» դաւաճանութիւն է Սոցիալիզմի հանդէպ։

«2.— Մարքսեան տեսութիւնը կառավարութեան մասին աղաւաղուեցաւ՝ Երկրորդ Միջազգայինի կողմից:

«Գիտական չէ «Սոցիալ Դէմոկրատիա» եզրը, ինչպէս որ Մարքսը այդ բացատրել է 1875ին եւ Էնգէլսն էլ, է՛լ աւելի ժողովրդական ձեւով, 1894–ին: Մարդկութիւնը կարող է Կապիտալիզմից միայն Սոցիալիզմի անցնել, — այսինքն՝ արտադրութեան միջոցների հասարակական սեպհականութեանը եւ արտադրոյթի բաշխմանը՝ անհատական աշխատանքի համեմատ: Մեր Կուսակցութիւնը դրանից է՛լ աւելի հեռուն է նայում: Սոցիալիզմը հարկադրուած է, ուշ կամ կանուխ, հասուննալ՝ Կոմմունիզմի վերածուիլ. իսկ Կոմմունիզմի դրօշը կրում է այս վերտառութիւնը, — իւրաքանչիւրից համաձայն իր կարողութեան. իւրաքանչիւրին՝ համաձայն իր կարիքներին:

«Սա առաջին պատճառն է»:

Լենինի վերեւ բերուած այս «Առաջին պատճառի» պատճառով՝ եւ ո՛չ մի հարուած է ստանում Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը: — Այնպէս որ «ո՛չ-մաքուր», «պղտոր», «խաթարում», «աղաւաղում» բառերը բնաւ չեն կարող մեզ չփոթեցնել եւ մեր Կուսակցութեան հասցէի մէջ տեղ ունենալ: Մեր Մարքսիստական գաղափարաբանութիւնը մնում է զուտ, մաքուր, անայլայլ, եթէ վեր առնենք Հայ միջավայրը, Հայ իրականութիւնը:

Սոցիալիստ Կուսակցութիւնների միջեւ 1905–ին ծագած տարակարծիքութիւնների եւ փոխադարձ քննադատութիւնների առթիւ՝ ինչ որ ասած էինք ա՛յն ժամանակ, նոյնը յարմար է գալիս ասելու եւ այսօրուայ խնդիրների մասին:

Ասել էինք, ասում ենք հիմայ էլ.— Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը մի ուրոյն հասատութիւն է, մի տեսակ պատմա-անհատական գոյացութիւն, որ ունի իր սեպհական գաղափարաբանութիւնը, իր որոշ սկզբունքները եւ տակտիկան: Քննադատութիւնը իրաւունք ունի այդ Կուսակցութիւնը վեր առնել՝ որպէս ամբողջականութիւն եւ վերլուծումի, քննութեան ենթարկել, համեմատութեան՝ դուդակչի մէջ դնել մի՛ւս ազգութիւնների մէջ գտնուող համանման Սոցիալ Դէմոկրատ Կուսակցութիւնների եւ գործելակերպի հետ.— դա մի իրաւունք է եւ դատելու ուղիղ մի ձեւ: Բայց սխալ է այն տեսութիւնը, այն մեթոդը, որ քննութեան առնելով Գերման կամ Ռուս Սոցիալ Դէմոկրատները, եւ նրանց գաղափարաբանութեան, գործելակերպի ու դիրքի մէջ մի սխալ կէտ նշմարելիս՝ այդ միեւնոյն սխալը վերագրել կանխամտածմամբ ե՛ւ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան, որ նա էլ այդ միեւնոյն անունն է կրում... Սխալ կը լինէր մէկի ասածը անհրաժեշտօրէն վերագրել ե՛ւ միւսին: Հետախուզական միտքը նրանցից իւրաքանչիւրը պիտի կզգիացնի եւ ըստ այնմ իր քննութիւնը կատարի, ամէն մէկին պատասխանատու բռնելով իր մտքերի եւ արարքների համար:

Դժբախտաբար մեր հակառակորդները փոխանակ աշխատելու ուղղակի մեզ հասկանալու. փոխանակ մեր Կուսակցական գաղափարաբանութիւնը անմիջական կերպով քննութեան առնելու.— նրանք մեզ ներկայացրել են ա՛յն՝ ինչ որ իրօք չենք: Եւ այդպէս վարուած են՝ պարզապէս աչքի առաջ ունենալով ուրիշ երկրների Սոցիալ Դէմոկրատ Կուսակցութիւնները եւ կամ նրանց աւելի կամ նուազ հեղինակութիւն վայելող անդամների գրածները:

1914—1916–ի Գերման, Անգղիացի, Աւստրիացի, եւ այլն, Սոցիալ Դէմոկրատների դիրքերը չի կարելի ընդհանրացնել եւ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնն էլ նրանց մէջ դնել. պատմական ո՛չ մի տուիք, ո՛չ մի եղելութիւն կարող է այդպիսի մի դատողութիւն արդար եւ ուղիղ համարել:

Մեր այս ասածները է՛լ աւելի որոշ կը լինեն, մեր պատասխանատուութիւնը է՛լ աւելի կը ճշտուի երբ խնդիրները վեր առնենք կարգով:

Ա.— «Պրոլետարները հայրենիք չունին»· կամ «գործաւորները երկիր չունին»·— Կարլ Մարքսի խօսքերն են դրանք, որի արտայայտիչ, պրոպագանդիստ, պաշտպաններից մէկն էլ հանդիսացել է մեր Կուսակցութիւնը:

Մարքսի խօսքերին աւելցնելով այն թէ՝ ի՞նչ պիտի լինի գործաւորի կամ պրոլետարի դիրքը հանդէպ «իր երկրի», «իր հայրենիքի» եւ նրա մէջ պարփակուած տիրող բուրժուազիայի թէ խաղաղութեան եւ թէ պատերազմի ժամանակ, — այդ բոլոր հարցերի մասին՝ դեռ 1905-ին՝ դիմում է եղել Սոցիալիստական Աշխարհի էն նշանաւոր դէմքերին — ի թիւս այլոց և՝ Լենինին — ու նրանց կարծիքը առնուել՝ Պարիզ հրատարակուող "La Vie Socialiste" («Սոցիալիստական Կեանք») անունով ամսաթերթի մէջ:: Հետաքրքրուողը, այդ մասին, կարող է կարդալ «Սոցիալիզմ եւ Հայրենիք» անունով մեր երկու գրքոյկները: Ուստի, այդ նկատմամբ, աւելորդ ենք համարում այստեղ խօսել:

Այդ խնդիրը մեզ համար այսպէս է ներկայանում·

— Քաղաքական, տնտեսական ամէն իրաւունքներից զուրկ Հայ աշխատաւորը, գիւղացին, արտադրողը, պրոլետարը իրաւունք ունէ՞ր ձգտել՝ յեղափոխութեամբ ձեռք բերելու քաղաքական, տնտեսական, ընկերային լիակատար ազատութիւն՝ իր սեպհական միջավայրի (Հայաստանի) մէջ գործադրելու, իրականացնելու դիտումով, Գիտական Սոցիալիզմից յառաջանալիք իրերի մի դրութիւն: Թէզը այս է· կա՞յ ո՛չ ասող հակա-թէզ: Մեր դիրքը, մեր գործունէութիւնը ա՛յդ հիմունքը, ա՛յդ ուղղութիւնը ու ոգին է ունեցել: Հետեւաբար մեր եւ ո՛չ մէկ դիրքով դաւաճանել ենք «Սոցիալիզմի հանդէպ»:

Լենինը եւ իւրայինները իրենց սեպհական միջավայրի մէջն են աշխատել իրականացնել Գիտական Սոցիալիզմը, մենք՝ մեր:

Տարբեր է հարցը թէ՝ ո՛վ ի՞նչքան է կարողացել անել մինչեւ ուր հասել:

Մի ուրիշ հարց էլ, որ պատմաբանը պէտք է պարզի:

Փաստ է, որ 1914-ի առաջին օրերից, Լենինը իր արտասահմանի ընկերներով քարոզեց ընդհանուր պրոլետարական յեղափոխութիւն, — բայց, այդ ժամանակ բուն Թուրքիայի մէջ գտնուող իր ընկերներից շատերը ճակատ չը խուժեցի՞ն Ցարական բանակների մէջ մտնելով որպէս հասարակ զինուորներ, որպէս սպաներ:

Եւ յետոյ, եթէ Գերման, Անդրիացի··· Սոցիալ Դէմոկրատները իրենց սեպհական կառավարութեան դէմ չը գնացին, նրանց հետ դործակցեցին, — Սոցիալ Դէմոկրատ Հնչակեանն՞ էլ այդպէս արեցին, թէ՞ զէնքի դիմեցին ճիշտ հոդեբանական բոպէին: Սոցիալիզմի հանդէպ դաւաճան կը լինէինք եթէ չը շարժուէինք: 1913-ին, վերջին պատերազմին ծագման օրերին, նրա ամբողջ ընթացքում մեր բռնած դիրքն ու գործը եղել է աւելի քան Սոցիալիստական:

«Առաջին պատճառի» առաջին մասը մեզ երբէք չի կարող հարուածել թէ՛ գործի եւ թէ՛ անունի տեսակէտից:

Առնենք երկրորդը:

Բ.— «Մարքսի տեսութիւնը կառավարութեան մասին՝ երկրորդ Միջազգայինի կողմից խեղաթիւրուել է»·— Պատերազմին մասնակցող երկրների Սոցիալ Դէմոկրատ Կուսակցութիւններին հետեւողներից ոմանց կողմից՝ այո՛, խեղաթիւրուեց· բայց ո՛չ բոլորի կողմից անխտրաբար, — ինչպէս որ Լենինը ինքը խոստովանում է իր, այդ առթիւ, միւս դրածների մէջ: Եւ ինչո՞վ են դրանով մեղաւոր միւս՝ պատերազմին չը մասնակցող երկրների Սոցիալ Դէմոկրատները: Ինչով է մեղաւոր այդ մասին մե՞ր Կուսակցութիւնը:— Կառավարութիւնները տիրող դասակարգի յանձնակատարներն են·— Մարքսի այդ տեսութիւնները մենք միշտ պաշտպանել ենք: Կառավարութիւն տապալելու յեղափոխական մեթոդով մենք կախաղաններ ենք տուել դեռ 1917-ից առաջ: Փաստը, իրո-

զութիւնը կայ։ Ուրեմն «Մարքսի տեսութիւնը կառավարութեան մասին» խաթարողներից էլ չենք եղած։ Այդտեղ էլ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը պարզ, մաքուր է իր Մարքսիստական սկզբունքների մէջ։

Գ.— Ճիշտ է, Մարքսը 1875-ին քննադատել է Սոցիալ Դէմոկրատ եղբը, մասնաւորապէս Գոթայի Համագումարի առթիւ. նոյնը արել է և՛ Էնգէլսը։ Արդեօք Լենինը այդ քննադատութիւններին ծանօթ չէ՞ր, երբ մտաւ արդէն կազմուած Ռուս Սոցիալ Դէմոկրատ Բանւորական Կուսակցութեան շարքերի մէջ։ Եթէ սկզբնական շրջանին ծանօթ չէր, կամ ծանօթ էր և այդ անունը չէր կրող փոխել տալ, ինչո՞ւ բաժանումից յետոյ (Բոլշեւիկեան և Մենշեւիկեան թեւերը) ինքը հրատարակեց մի թերթ՝ «Սոցիալ Դէմոկրատ» անունը տալով։

Յայտնի է թէ ինչ պարագաների տակ՝ 1869-ից յառաջացաւ Սոցիալիստական Դէմոկրատիա եղբը, հակացընելու համար իրերի այն դրութիւնը, որ պիտի յառաջանար Գիտական Սոցիալիզմի կիրառութիւնից։ Էրֆուրտի Ծրագրից յետոյ՝ Էնգէլսը ինքը այլևս դադրեց Սոցիալ Դէմոկրատիա եղբերի դէմ խօսելուց։ Եւ միւս, դալիք, պատճառաբանութիւնների մէջ Լենինը ինքն էլ է այդ խոստովանում։

Բայց այդ բոլորը ինչո՞վ են հարուածում մեր Կուսակցութիւնը։

Շարունակենք եւ է՛լ աւելի փաստեր ունենալուց յետոյ եղրակացութեան կը հասնենք. ուրիշ երկրների Սոցիալ Դէմոկրատ Կուսակցութիւնների համագործակցութիւնը չը կրող Երրորդ Միջազգայինի ներկայացուցիչները ինչո՞ւ այդքան հապճեպ պիտի դանուէին մեր նկատմամբ։

Թէ ինչու Սոցիալ Դէմոկրատիայի փոխարէն Կոմմունիզմ եղրը պիտի ընդունել, — Լենինը իր պատճառաբանութիւնը շարունակում է այսպէս.

— «Իմ երկրորդ պատճառը այս է։ «Սոցիալ Դէմոկրատիա» եղրի երկրորդ մասը սխալ է դիտականօրէն։ Դէմոկրատիա իշխանութեան մի ձեւ է։ Մենք՝ Մարքսիստներս հակառակ ենք ամէն ձեւի իշխանութեան։

«Երկրորդ Միջազգայինի պարագլուխները (1889—1914)՝ Պլէխանով, Կաուցկի եւ իրենց համախոհները աղաւաղեցին ու անուանարկեցին Մարքսիզմը։ Մարքսիզմի եւ անարխիզմի տարբերութիւնը այն է, որ Կապիտալիզմից դէպի Սոցիալիզմ անցնելու անցողական շրջանի ընթացքում՝ Մարքսիզմը ընդունում է մի տեսակ իշխանութեան անհրաժեշտութիւն. ո՛չ թէ իշխանութեան այն տեսակը, որ ներկայացնում է բուրժուա, դէմոկրատական հասարակապետութիւնը եւ իր պարլամենտական սիստեմը, այլ այն տեսակի իշխանութիւն, որ ներկայացրին 1871-ի Պարիզի Կոմմունը ու 1917-ի Գործաւորների Պատուիրակների Խորհուրդները»։

Պարզաբանութեան համար աւելացնում ենք.— Լենինը ասում է, որ «Դէմոկրատիա» բառի մէջ իշխանութեան գաղափար կայ բովանդակուած։ Դա ճիշտ է։ «Դէմոկրատիա» բառը ծագում է յունարէն «դէմոս» (ժողովուրդ, ռամիկ) եւ «կրատիա» (վարիչ) բառերից։ «Դէմոկրատիայի» հայերէն բառացի թարգմանութիւնը տրրուել է «ռամկավարութիւն», «ժողովրդապետութիւն», «ժողովրդավարութիւն» բառերով։

Յունական հին ընկերութեան ժամանակ՝ այսօրուայ մեր աշխատաւոր, բանւոր, գործաւոր դասակարգին պատկանողներին, որոնք իշխող, տիրող դասակարգին բաժնեկից չէին,— կոչում էին «դէմոս»։ Երբ «դէմոսը» երկրի կառավարական իշխանութեան դեկը ձեռքն առաւ, — յառաջ եկաւ դէմոկրատիան — ռամկավարութիւն, ժողովրդավարութիւն, ժողովրդապետութիւն —, այսինքն «դէմոսի» իշխանութիւնը, նրա կառավարութիւնը։

Այդ կերպով կազմուած է «պլուտոկրատիա», (մեծահարուստների, փողատէրերի իշխանութիւն) բառը, եւ այլն։

Գիտական Սոցիալիզմի սկզբունքները երբ կը գործադրուին ամբողջ աշխարհի մէջ, երբ այսօրուայ բոլոր ազգերի եւ պետութիւնների միջից կը վերանան կապիտալիստական կարգերը, — մարդկային այդ նոր ընկերութիւնը կ'ունենա՞յ որ եւ է իշխանութիւն, հարկաւ ո՛չ նման այսօրուաններին, — Կարլ Մարքսը ինքը այդ մասին որոշ գիծ, գծագրութիւն տուած չունի:

Գալիք Սոցիալիստ-Կոմմունիստական ընկերութեան պատկերը առաջին անգամ գծել է Աւստրիացի տնտեսագէտ Շաֆլէն, թէեւ ինքը ո՛չ սոցիալիստ էր, ո՛չ կոմմունիստ, ո՛չ էլ Մարքսիստ, այլ պարզ տնտեսագէտ, էն էլ Ազատական Դպրոցին պատկանող: Բայց նա գալիք նոր ընկերութեան պատկերը ուրուագծել էր գլխաւորապէս Մարքսեան գաղափարաբանութիւնը իրեն հիմունք առնելով:

Գալիք ընկերութեան գլխաւոր ուրուագիծը տուել է նաեւ Կաուցկին, եւ ուրիշ շատ տնտեսագէտներ ու սոցիալիստներ, նոյն իսկ Մարքսիստներ: Բայց ամէնքն էլ նախապէս խոստովանել են, որ իրենց ասածները ո՛չ միայն վերջնական չեն, այլ հակառակ են նոյն իսկ Մարքսեան այն տրամախոհութեան (դիալեկտիկա), որ a priori (կանխամտածմունք) մտածմունք չի ընդունում: Իրողութիւնը, եղելութիւնը պիտի գայ, որ մտածմունքին նիւթ տայ, տրամախոհութեան՝ կարգաւորութիւն, դասաւորութիւն: Ուրեմն Մարքսիստական տրամախոհութեամբ a posteriori՝ (յետագայ) մտածմունքները, տրամախոհութիւններն են, որ արժէք ունին, երբ գալիս է եղելութիւնը, ինքը՝ կեանքը:

Կոմմունիզմի «Այբբենարանը» կազմող յայտնի Բուխարինը իր գրուածքով, Շաֆլէից շատ առաջ չի գնացել:

Ֆրանսիացի Սոցիալիստները եւ Կոլլէկտիվիստները գալիք ընկերութեան մէջ, ասում են, ուրիշ իշխանութիւն չի լինիլ այլ միայն «իրերի վարչականութիւն» (administration des choses):

Ուզում ենք ասել, որ գալիք Սոցիալիստական-Կոմմունիստական ընկերութեան օրերում ի՞նչ տեսակի մի իշխանութիւն (հեղինակութիւն) կը լինի, — նրա ամբողջական ձեւաւորութեան մասին հիմակուանից որքան քիչ խօսուի, այնքան էլ աւելի գիտական կը լինի:

Տնտեսական այդ հարցը մեզ հետ ո՛չ մի կապ ունի, մանաւանդ այս բոպէին:

Բայց մի եղելութիւն կայ, որ պէտք է մատնանշել:

Լենինը ներկայ է եղել Ցիմմերվալդի Ժողովին եւ որոշումների տակը ստորագրել:

Արդ, Ցիմմերվալդի արձանագրութեանց մէջ կայ հետեւեալ հատուածը.— «Համաշխարհային պատերազմ նորից տեղի ունենալու դէմ՝ միայն մէկ երաշխաւորութիւն կայ այն է՝ Սոցիալ Հասարակապետութեան (Social Republic) հաստատումը»:

«Հասարակապետութեան» մէջ իշխանութեան գաղափարը է՛լ աւելի չեշտուած է:

Այո՛, «Դէմօկրատիա» եզրի մէջ իշխանութեան գաղափար կայ. բայց Լենինը մտքի մի սլացքով «դէմօկրատիա» բառը առնելով եւ իշխանութեան գաղափարը մատնանիշելով՝ թողնում է Սոցիալ բառը.— Դէմօկրատիա, — բայց ի՞նչպիսի դէմօկրատիա, — այնպիսի դէմօկրատիա, որ կը բղխէր Սոցիալիզմի (Մարքսիզմի) կիրառութիւնից.— ինչպէս որ ընդարձակօրէն այդ մասին խօսել է Լիբկնեխտ եւ ուրիշներ:

Սրանք այնպիսի տեսական խնդիրներ են, որ շատ քիչ կապ եւ առնչութիւն ունեն մեր այսօրուայ կեանքի հետ: Եւ չեշտում ենք, որ դրանցից եւ ոչ մի հարուած է դալիս մեր Կուսակցութեան: Մենք միշտ կրկնել ենք, որ գալիք ընկերութեան ամբողջական կազմը, պատկերը մենք ընդունում ենք այն, որ բղխում է Գիտական Սոցիալիզմից, Ամբողջական Սոցիալիզմից, Մարքսիզմից եւ է՛լ աւելի պարզ լինելու համար՝ յաճախ գործ ենք ածում

Մարքսեան Կոմմունիզմ եզրերը, որպէս զի մինչեւ ցարդ ներկայացած դիտութեան շրջանակից դուրս չը լինենք:

Շարունակենք լսել Լենինին:

— «Երրորդ պատճառն այս է: Կեանքը եւ Յեղափոխութիւնը արդէն հաստատել են իշխանութեան մի այնպիսի նոր տեսակ (թէեւ այն ձեւով, որ տակաւին թոյլ է եւ սաղմնային), որ բառի իսկական իմաստով իշխանութիւն չի համարւում: Այդ նոր իշխանութեամբ՝ զանգուածներն են, որ գործերն են վարում եւ ո՛չ թէ թէօրիների մէջ դեգերող պարագլուխները:

«Բառի իսկական իմաստով՝ իշխանութիւն կը նշանակի այն զօրութիւնը (ոյժը) որ՝ ազգից անջատ՝ զինուած մարդկանց մի խումբ գործադրում է զանգուածների վրայ: Նոր իշխանութիւնը, որ նորածնելու պրօցեսսի մէջ է, նա, նոյնպէս, իրական իշխանութիւն է, որովհետեւ մենք էլ կարիք ունենք զինուած մարդոց. որոնք անհրաժեշտ են կարգը պահելու. անհրաժեշտ են անողոքաբար ջախջախելու հակա-յեղափոխական ամէն գործ, Ցարական, Բուրժուազական կառավարութեան վերահաստատութեան ամէն ճիգ ու ջանք ի դերեւ հանելու: Բայց մեր նորածին այդ իշխանութիւնը չի իշխանութիւն բառի իսկական իմաստով. Ռուսաստանի զանազան մասերում դտնուող զինուած մարդոց խմբերը նոյնինքն զանգուածներն են, ամբողջ ազգն է, եւ ո՛չ թէ այնպիսի խմբեր, որոնք ազգից վեր են կանգնած եւ նրան կառավարում են. նրանք ազգից բարձր կանգնող խմբեր չեն, գործնականապէս անշարժ արտօնեալ անհատներ չեն:

«Նայե՛նք դէպի առաջ եւ ոչ թէ դէպ յե՛տ: Բուրժուազական սովորական դէմօկրատիայից հ՛ել աւելի հեռուն նայենք: Բուրժուազական դէմօկրատիան հարկադրում է իր տիրապետութիւնը կառավարական հնացած, միապետական միջոցներով, ոստիկանութեամբ, բանտով եւ բիւրօկրատական պաշտօնատարներով: Նայենք դէպի յառաջ, դէպի նորածին Դէմօկրատիայի գալուստը, որ

արդէն դէմօկրատիա լինելուց դադարել է, որովհետեւ դէմօկրատիա կը նշանակի ժողովուրդի իշխանութիւն, եւ ազգի զինուած զանգուածները չեն կարող իրենք իրենց վրայ իշխանութիւն գործադրել:

«Դէմօկրատիա բառը չի կարելի գիտականօրէն կիրարկել Կոմմունիստ Կուսակցութեան: 1917-ի Մարտից ի վեր՝ դէմօկրատիա բառը պարզ մի կապանք է, որ շղթայում է յեղափոխական մի ազգ, արգիլում է նրան հաստատելու իշխանութեան (զօրութեան, ոյժի) մի նոր ձեւ, — այն է Գործաւորների, Զինուորների եւ Գիւղացիների Պատուիրակների Խորհուրդները, որոնք իշխանութեան ամէն ձեւի ջնջման նախակարապետներն են»:

Լենինը այս «պատճառ»ի մէջ գործ է ածում միայն դէմօկրատիա, բուրժուազական դէմօկրատիա եզրերը, հակադրելու նրանից բղխող իշխանութիւնը՝ Կոմմունիստական գալիք, այսպէս ասած, ոչ-իշխանութեան հետ:

Մինչդեռ այդտեղ էլ պիտի աւելացնէր Սօցիալ (Սօցիալիստական) բառը:

Սօցիալիստական Դէմօկրատիա, — ուր չը կան դասակարգեր, չը կայ դասակարգային կռիւ, յաւելեալ արժէքով աշխատանքի շահագործում չը կայ. կապիտալիզմի կեդրոնացում չը կայ.— ուր արտադրութեան, փոխադրութեան, հաղորդակցութեանց եւ այլն, բոլոր միջոցները ընկերակացնել են.— ընկերային այդ դրութիւն է ներկայացնում Սօցիալ Դէմօկրատիան. արդ, այդտեղ ի՞նչ տեսակի իշխանութիւն պէտք է: Բնականաբար նա ամենայնիւ պիտի տարբերուէր Բուրժուազական Դէմօկրատական դրութիւնից:— Այդ ժամանակ ընկերային իշխանութիւնը, ոյժը, զօրութիւնը, հեղինակութիւնը, վարչականութիւնը ինչ եղանակով պիտի կազմակերպուի,— Խորհուրդները մի ձեւ են բերում, որի հաստատմանը եւ ամրապնդութեանը մենք ամենայնիւ սատարում ենք մեր Կուսակցական ոյժով. բայց դա դեռ ընդհանրացած չէ: Երկրորդ Միջազգայինին հետեւողները եւ Անկախ Սօցիա-

լիստները մտածում են ուրիշ ձեւերի վրայ, որ դեռ դաւիք է...:

Եւ այս բոլոր լիներիֆները իրաւունք են տալիս Երրորդ Միջազգայինի նախագահութեան ներկայացուցչին գործնական կեանքի հետ ամենօրեայ գործ ունեցող մի կուսակցութեան առաջարկել, որ իր անունը փոխի... լուծուի... «Պատճառը» համոզեցուցիչ չէ...:

Շարունակենք ուշադրութեամբ հետեւիլ Լենինի ասածներին.

— «Կայ մի չորրորդ պատճառ, — այն է՝ Սոցիալիզմի միջազգային դրութիւնը: Սոցիալիզմի դրութիւնը, այսօր, այլեւս այն չէ, ինչ որ է՛ր 1871–ից մինչեւ 1914–ի ժամանակաշրջանում. երբ Մարքսը եւ Էնգէլսը ընդունեցին՝ որպէս փոխանուն՝ անուղիղ, պատեհապաշտային «Սոցիալ Դէմոկրատիա» բառը»:

Այստեղ այլեւս մեզ մնում էր հարցը փակել. խնդիրները պարզաբանուած համարելով՝ մեզ հետաքրքրող բառերի եւ եզրերի նկատմամբ: Բայց շարունակենք՝ է՛լ աւելի լաւ լուսաբանուելու համար:

Իր «Չորրորդ Պատճառով» Լենինը ինքը վկայում է, ուրեմն, որ Մարքսը եւ Էնգէլսը որոշեալ ժամանակաշրջանում՝ Սոցիալ Դէմոկրատիա եզրերի մասին դիտողութիւններ անելուց յետոյ՝ վերջապէս «ընդունեցին», որ Կոմմունիզմի, Կոմմունիստի փոխարէն, որպէս այդ բառերին հոմանիշ — ինչպէս իրենք էին հասկանում այդ եզրերը — քաղաքացիութեան իրաւունք ունենային Սոցիալ Դէմոկրատիա, Սոցիալ Դէմոկրատ բառերը:

Ինչպէս շատ վերեւ դիտեցինք, կային՝ Նախնական Կոմմունիզմ, Եկեղեցական Կոմմունիզմ, Ուտոպիական Կոմմունիզմ, Պրուտոնական Կոմմունիզմ, Պղատոնական Կոմմունիզմ, եւայլն, եւայլն: — Հարկաւոր էր չփոթութիւնից դուրս գալ: Պարզ Սոցիալիզմ բառն էլ, այդ ժամանակները չէր արտայայտում Գիտական Սոցիալիզմի (Մարքսիզմից) կիրառութիւնից յառաջանալիք ընկերային

դրութիւնը, — ուստի ստեղծուեցան Սոցիալ Դէմոկրատիա, Սոցիալ Դէմոկրատ բառերը:

Մօտաւորապէս 55 տարի գործ են ածւում Սոցիալ Դէմոկրատ, Սոցիալ Դէմոկրատիա եզրերը: Հարկաւ բառերը իմաստի փոփոխութիւն կը կրեն ժամանակի ընթացքում: Մաքս Միւլլէրը ցոյց է տուել թէ ինչպէս Ֆրանսիական պարզամիտ — naif — բառը 60 կիրառութիւն ունի: Բառերն էլ կունենան իրենց էվոլիւցիան՝ նշանակութեան եւ մտքի արտայայտութեան տեսակէտից: Կոմմունիզմ, Սոցիալ Դէմոկրատիա բառերը չէին, որ լեզուական այդ օրէնքից դուրս գային: Հարկաւ Էյզենախցու (1869) համար Սոցիալ Դէմոկրատիա եզրերը բոլորովին այն նշանակութիւնը եւ բովանդակութիւնը չունէին, ինչ որ ունէին Էրֆուրտցիների եւ մեր ժամանակի Սոցիալ Դէմոկրատների համար: Եթէ Կոմմունիզմ եզրի գլխաւոր գծերի առթիւ այսօր կարելի է համաձայնիլ, բայց ո՛չ թէ մանրամասնութեանց, ո՛չ թէ ամբողջականութեանը.— Այդ բառն էլ հետզհետէ, ժամանակի ընթացքում, աւելի կը զտուի, կը բիւրեղանայ՝ մտքի եւ իմաստի տեսակէտից:

«Աշխատաւոր զանգուածները կապուած են իրենց Սոցիալ Դէմոկրատ Կուսակցութեան հետ. նրանք սիրում են այդ անունը» — ասում է Լենինը:

Երբ Ռուսաստանի Կոմմունիստ Կուսակցութիւնը իրեն 25 տարուայ գոյութիւնն է փաստում, 20 տարի որպէս Սոցիալ Դէմոկրատ, առանց ժխտելու այդ անունը կրելիս կատարած իր որ եւ է գործունէութիւնը, եւ իր այսօրուայ կոմմունիստ անունը շարունակութիւնն է անում Սոցիալ Դէմոկրատիա իր երբեմնի անուան, — չը նայելով որ «անուղիղ», «պատեհապաշտական» ածականներն են տրւում, — դա ցոյց է տալիս թէ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեանները ո՛ր աստիճան ուժով եւ իրաւունքով պիտի կառչին իրենց այն անունից, որ 38 տարուայ կեանք

ունի եւ այդ անունով էլ վառաւոր պատմութիւն ու գործունէութիւն:

Երբ Մարքսը, Էնգէլսը ընդունել են, որ Սոցիալ Դէմոկրատիա եւ Կոմմունիզմ գրեթէ միեւնոյն գաղափարների արտայայտութիւններ, համազօր, հոմանիշ բառերն են, ու մենք էլ այդ միեւնոյնը միշտ ասել ենք — ապա պիտի լուն այն Զոյիլոսեան ձայները, որոնք տգէտներին յատուկ յամառութեամբ խօսում են իրենց չգիտցածներից:

Լենինը չի ուզում որ իր Կուսակցութիւնը նոյն այն անունը պահի, ինչ որ ունէին Գերմանացի, Աւստրիացի, Բելգիացի, Իտալացի... իր եղբեմնի ընկերները: Բանի որ նրանք Սոցիալ Դէմոկրատ անունն ունին, — ինքը թողնում է այդ անունը, ընդունում է Կոմմունիստ անունը, որպէս զի որ եւ է չփոթութեան տեղի չը մնայ: Նրանք անդամ են Երկրորդ Միջազգայինին.— Լենինը կազմում է Երրորդը, գնում է իր թէզերը որպէս զի բոլոր տարբերութիւնները ցայտուն կերպով երեւան գան:

Սրա հետ միասին Լենինը ինքը ընդունում է որ զանազան երկրների մէջ գտնուող Սոցիալ Դէմոկրատական շարքերի միջից ճիշտ իր նման մտածող եւ խորհողներ էլ են եղել պատերազմի տեւողութեան ընթացքում՝ թէ առաջ եւ թէ յետոյ:

Ուստի հարցը լիակատարապէս սպառելու եւ ցոյց տալու համար, որ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը գիտական-պատմական հողի վրայ է կանգնած եւ ամէն իրաւունք ունի իր անունից կառչելու, — դեռ ժամանակ պիտի տանք՝ լսելու Լենինին:

«Զորրորդ Պատճառի» հարուածից յետոյ՝ մասնաւոր ուշադրութեան արժանի են իր հետեւեալ պատմականը: Կարդանք:

— «Պարիզի Կոմմունի պարտութիւնից յետոյ՝ կազմակերպչական ու լուսաբանութեան յամրընթաց գործ միայն կարելի էր կատարել: Ուրիշ ո՛չինչ հնարաւոր էր: Անարխիստները այն ժամանակ էլ, ինչպէս որ հիմայ, չարաչար սխալւում էին թէ՛ տեսականապէս, թէ՛ անտեսապէս, եւ թէ՛ քաղաքականապէս: Անարխիստները, որոնք աշխարհի գրութիւնը չէին ճանաչում՝ գործունէութեան սխալ վայրկեան ընտրեցին: Իմպերիալիստական շահերը փճացրել էին Անգղիական գործաւորներին: Պարիզի մէջ Կոմմունը պարտուել էր: Գերմանիայի մէջ ազգային բուրժուազական շարժումը յաղթական էր. իսկ աւատապետական Ռուսաստանը տակաւին դարերի քունն էր քնում: Մարքսը եւ Էնգէլսը շատ ճիշտ կերպով չափեցին պատմական այդ բոպէն. նրանք հասկացան, ճանաչեցին միջազգային գրութիւնը. տեսան որ ընկերային յեղափոխութիւնը ուրիշ ճանապարհ չունէր, եթէ ո՛չ ընթանալ յամրօրէն:

«Հիմայ մենք էլ, մեր կարգին, պիտի հասկանանք, ճանաչենք մեր օրերի մասնայատուկ գրութիւնը եւ մեր պարտականութիւնները:

«Կապիտալիզմի բնական զարգացումը դէպի իմպերիալիզմ զարգանալով՝ համաշխարհային այս իմպերիալիստական պատերազմը յառաջացրեց: Այս պատերազմը բերեց մարդկային ազգը՝ կործանման եզրին հասցրեց, վտանգեց ամբողջ քաղաքակրթութիւնը, փճացրեց եւ անասնացրեց միլիոնաւոր մարդկային էակներ: Իրերի այդ գրութիւնից դուրս գալու համար՝ ուրիշ ճանապարհ չը կար, բացի պրոլետարական յեղափոխութիւնից: Եւ, ահա, ճիշտ ա՛յն ժամանակին, երբ այդ յեղափոխութիւնը սկսում է, երբ նա առնում է իր առաջին քայլը՝ թոյլ, զողջոջուն, թերահաւատ, կասկածոտ, տակաւին մեծ չափով յենուելով Բուրժուազիայի վրայ, — ճիշտ այդ ի՛սկ ժամանակին՝ Սոցիալ Դէմոկրատականները, Սոցիալ Դէմոկրատ Պարլամենտականները, Սոցիալ Դէմոկրատ թերթերը, մի խօսքով՝ բոլոր նրանք, որոնք կարող էին զանգուածները դէպի գործ մղել, — դրանց մեծամաս-

նութիւնը դաւաճանեց Սոցիալիզմին, ծախեց Սոցիալիզմը եւ իր ազգային Բուրժուազիայի կոխը մղեց:

«Այդ պարագլուխները շեղեցրին զանգուածներին, ծաղրեցին, խաբեցին նրանց: Մենք էլ օգնած, սրած կը լինենք այդ խաբեբայութիւնը, երբ կը պահենք մեր ժանգոտած եւ մաշուած կուսակցական անունը, որ նոյնքան հինցած եւ անպէտքացած է, որքան Երկրորդ Միջազգայինը»:

Բայց անունը մեղաւոր չէ, այլ գործողը: Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, պարզերես, մաքուր է՝ իր գործերով եւ հասկացողութիւններով:

Լենինի յետագայ հարուածը էլ աւելի պարզում է կացութիւնը:

— «Կարող է պատահիլ, որ շատ գործաւորներ հասկանում, ըմբռնում են Սոցիալ Դէմոկրատիայի իրական նշանակութիւնը. բայց մենք ուզում ենք որոշակի ճշտել թէ դա ի՞նչ է նշանակում առարկայօրէն եւ ի՞նչ՝ ենթակայօրէն:

«Ենթակայօրէն՝ այդ գործաւորները Սոցիալ Դէմոկրատներ են, ճշմարիտ պարագլուխներ պրօլետարական զանգուածների: Առարկայօրէն, աշխարհի դրութիւնը այնպէս է, որ մեր Կուսակցութեան հին անունը օգնում է սխալեցնելու զանգուածներին եւ յառաջախաղաց ընթացքը կասեցնելուն ծառայում: Ամէն օր, ամէն թերթի մէջ, ամէն պարլամենտական խմբի մէջ, զանգուածները տեսնում են պարագլուխներ, որոնց ձայնը հեռուներն է հասնում, որոնց գործերը հրապարակի վրայ են, որոնք իրենք իրենց անուանում են Սոցիալ Դէմոկրատներ եւ Սոցիալիստներ, բայց եւ որոնք ձեռք են տալիս Սոցիալիզմի դաւաճաններին, Սոցիալիստ հայրենասէրներին, որոնք փորձում են գանձել Սոցիալ Դէմոկրատիայի բաց թողած բոլոր մուրհակները:

«Կա՞յ որ եւ է պատճառ նոր անունների դէմ: Երկիւղ կայ, որ մենք կը շփոթուինք, կը խառնուինք Կոմունիստ Անարխիստների հետ: Եթէ այդ է, ապա ինչո՞ւ չենք երկնչում շփոթուելու, խառնուելու Սոցիալ Ազգայնականների, Սոցիալ Ազատականների, Սոցիալ Հայրենասէրների հետ»:

Իրողութիւն է, որ այսօր շատ երկրների մէջ՝ Անարխիստները, իրենց սեպհական հասկացողութեամբ՝ Կոմունիստ եւ Կոմունիզմ եզրերը գործածելով՝ ատուեր են ածում, շփոթութիւն յառաջացնում Մարքսիստական Կոմունիզմի վրայ: Այդպիսի մի քանի ծանրակշիռ դէպքեր տեղի ունեցան Ռուսաստանի մէջ, որի համար էլ Ռուս. Կոմունիստական Կուսակցութիւնը ստիպուեցաւ հրապարակային յայտարարութիւն անել — օրինակ կանանց համայնացման խնդրի առթիւ — ստեղծուած թիւրիմացութիւնները փարատելու համար: Բերլինի Անարխիստները իրենց «Կոմունիստական» գաղափարների տարածումով՝ պակաս չեն հարուածում Մարքսիստական Կոմունիզմին: Այդ շփոթութիւնը ստեղծուած է:

Բայց շարունակենք:

— «Ոմանք ասում են, որ աշխատաւոր զանգուածները սովոր են իրենց Սոցիալ Դէմոկրատ Կուսակցութեանը. նրանք սիրում են այդ անունը: Հին անունը պահելու դա միակ պատճառն է. բայց դա հակառակ է Մարքսիզմի ուսուցման, արհամարհում է վաղուան յեղափոխական գործը եւ ամբողջ աշխարհի Սոցիալիզմի առարկայական դրութիւնը, վնասում է միլիոնաւոր այն պրօլետարների գործին, որոնք «նոյնպէս Սոցիալ Դէմոկրատներ են: Այդ պատճառը իրեն հիմունք ունի ծուլամտութիւնը եւ հինը սիրելու մանաւոր ունակութիւնը: Մենք ուզում ենք աշխարհը ի նորոյ վերաձեւել, կազապարել. մենք ուզում ենք վերջ տալ համաշխարհային այն պատերազմին որ մղում է իմպերիալիստների կողմից, պատերազմին՝ որի մէջ մտել են միլիոնաւորներ եւ միլիոնաւոր տոլլարներ էլ փճացել.— այդ պատերազմը չի կարող վերջանալ ճըշ-

մարիա Դէմօկրատական ուղիով, առանց պրօլետարական մեծագոյն յեղափոխութեան»։

«Եւ այստեղ է, որ մենք տատանուում ենք։ Այստեղ է, որ մեր մէջքին ենք պահում հին կեղտոտ շապիկը։ Ժամանակն է, որ մի կողմ ձգենք մեր կեղտոտ շապիկը եւ մէջքներիս վրայ առնենք մի նոր, մաքուր շապիկ»։

Լենինը Լենին էր, թէ «հին շապիկը» (Սօցիալ Դէմօկրատ) վրան ունեցած ժամանակին, թէ «նորը» (Կոմմունիստականը)։

Մարքսի, Էնգէլսի «հին շապիկները» (Կոմմունիստ, Կոմմունիզմ) չը կեղտոտուեցին, երբ ընդունեցին որ իրենց վարդապետութեան հաղցուի մի «նոր շապիկ» (Սօցիալ Դէմօկրատիա, Սօցիալ Դէմօկրատ)։

Հարցը հին ու նոր շապիկների մէջ չէ, այլ երկու շապիկների էութեան, հիւսուածքի նոյնութեան։

Բայց Լենինը այդ էլ է ընդունում, ասում, փաստում է, ամենայն անվերապահութեամբ, որ շատերը Սօցիալ Դէմօկրատ անունը կրելով հանդերձ, նոյն մտածմունքները, նոյն մտորումներն ու գործերն հետապնդել, ինչ որ ինքը թէ «հին» եւ թէ «նոր» շապիկ կրած ժամանակին։

Ամբողջ աշխարհի Միջազգային Սօցիալիստների եւ գործաւորների շարժումները՝ համաշխարհային վերջին պատերազմի ընթացքում՝ Լենինը ստորաբաժանել է երեք կարգի։

Փոխանակ կարգով երթալու, տալիս ենք վերջին երրորդ տեսակի Սօցիալիստների յատկանիշները եւ կազմակերպութիւնների ու անձերի անունները՝ Լենինի ցանկին համաձայն։

Այս մեթոդով ընթանում ենք, որպէս զի ուղղակի շարունակութիւնը լինի նախընթաց մեր այն ասածներին թէ՝ Լենինը ինքը որոշակի ասել է, որ ամբողջ աշխարհի Սօցիալ Դէմօկրատների մէջ միայն ինքը եւ իր համախոհները չեն եղել, որ այլապէս են մտածել, քան «Սօցիալիստ Հայրենասէրները» եւ «Սօցիալիստ Կեդրոնականները»։ Այլ գտնուել են ուրիշներ էլ, որոնք աշխատել, ջանք են թափել պատերազմը դադարեցնելու կամ ընկերային յեղափոխութիւն յառաջացնելու։

«Երրորդ տեսակի Սօցիալիստները, ասում է Լենին, իրապէս Միջազգայնականներ են եղել, որոնք ճշտօրէն ներկայացրել են, այսպէս կոչուած, «Զախ-Ցիմմերվալդը»։ Սրանց բնորոշիչ գիծն այն է, որ բոլորովին երկճղդուում, բաժանուում են Սօցիալ Հայրենասէրներից եւ Կեդրոնականներից։ Սրանք անողոք պատերազմ են մղել իրենց սեպհական իմպերիալիստական կառավարութեան եւ իրենց սեպհական բուրժուազիայի դէմ։ Իրենց նշանաբանն է եղել... Մեր վատթար թշնամին՝ մեր տանը մէջն է։ դրանք են՝ Գերմանիայում, — Կարլ Լիբկնեխտ եւ Օտտօ Ռուիլէ, եւայլն»։

«Բրեմենում՝ «Գործաւորների Քաղաքագիտութիւն» թերթի շուրջը համախմբուող Գերմանիայի իրական Միջազգայնականների մի ուրիշ խումբ։

«Ֆրանսիայում՝ Լոսիօ եւ իր բարեկամները։ Հանրի Գիլբօ, որ Զուիցերիայում հրատարակում է «Դրմէն» («Վաղը») թերթը։

«Անգլիայում՝ բոլոր այն Սօցիալիստները, որոնք համախմբուել էին «Արհեստակցական Միութիւն» անունով Հանդէսի շուրջը, ինչպէս եւ «Բրիտանական Սօցիալիստ Կուսակցութեան» ու «Անկախ Աշխատաւորական Կուսակցութեան շուրջ»։ Սկովտիացի Մրկէլինը, նոյնպէս, բաւականին մեծ թիւ հետեւողներ ունեցաւ, եւ մինչեւ անդամ բանտ դնաց՝ բազմաթիւ Միջազգայնական Սօցիալիստների հետ։

«Միացեալ Նահանգներում՝ «Սօցիալիստ Բանւորական Կուսակցութիւնը» եւ ոմանք էլ պատերազմական Սօցիալիստ Կուսակցութիւնից։

«Հոլլանդիայում՝ «Տրիբուն» օրաթերթի շուրջ համախմբուող ոյժերը (Անտօն Պաննեկոկ, Հերման Գորտեր, եւայլն, եւայլն)։

«Շուէյցարիայում՝ Լինեհագն, Տուր, Ներման, Կարլսոն, Շարոմ եւ մի ամբողջ խմբակցութիւն երիտասարդների։

«Դանիայում՝ Տրիեր եւ իր բարեկամները։

«Իտալիայում՝ Կոնստանտինո Լազզարի, Սոցիալիստ Կուսակցութեան քարտուղարը, եւ Սիրբատին՝ Կեդրոնական օրգան «Աւանտի»ի խմբագիրը։

Լեհաստանում՝ Կարլ Ռադեկ, Գանեցկի եւ Սոցիալ Դէմոկրատիայի ուրիշ պարագլուխներ, որոնք Կրաեւ խումբն էին կազմում, — Ռոզա Լիւքսեմբուրգ, Տիշկա եւ ուրիշներ՝ որոնք Սոցիալ Դէմոկրատիայի «գլխաւոր խումբն» էին ներկայացնում։

«Զուիցերիայում՝ «Զախ» կոչուած խումբը, որ 1917-ի Փեարուարի 11-ին, Ցիւրիխում հայացած՝ Սոցիալիստ Կուսակցութեան նիստում մի բանաձեւ առաջարկեց պատերազմի դէմ։

«Աւստրիայում՝ Ֆրիտերիխ Ադլերի երիտասարդ բարեկամները իրենց «Կարլ Մարքս Ակումբի» միջոցով։

Այս է եղել այն ընդհանուր միտումը, որ Լենինը ներկայացնում է այդ «Երրորդ կարգի» Սոցիալիստների առթիւ։

«Անողոք իմպերիալիստական մի պատերազմի ժամանակ՝ շատ դիւրին չէ իրապէս Միջազգայնական մնալ, յարում է Լենին, բայց այդպէս անողները հաղուագիւտ են եւ Սոցիալիզմի բոլոր յոյն էլ այդ տեսակների վրայ է դրուած։ Այդպիսիներն են զանգուածների իսկական պարագլուխները եւ ո՛չ թէ նրանց փճացնող — ապականողները»։

Լենինի, առաջին ձեռն տուած տեղեկութիւններից պարզ հետեւում է, որ վերջին պատերազմի ընթացքում ընդհանուր անապատ չի ստեղծուել Միջազգային Սոցիալիստների շարքերում, — այլ եղել են խմբակցութիւններ եւ անհատներ, որոնք փորձել են իրենց Միջազգային Սոցիալիստի պարտականութիւնը կատարել։

Բայց թէ ինչո՞ւ ամէնքը այդ մի եւ նոյն գծի վրայ չը կանգնեցան, — այդ մասին, այս բոպէին, մենք խօսք չունինք ասելիք, դա մեր դրած թէզերի հետ եւ ո՛չ մի առնչութիւն ունի։ Միջազգայինի իւրաքանչիւր հատուածի պատասխանատուները այդ մասին արտայայտուել են՝ սկսած Ֆրանսիացի Հէրվէից, որ պատերազմից առաջ յայտարարում էր թէ՝ «իր համար նոյնն էր թէ Սէն գետի հովիտը Գերմանական Բուրժուազիային կը պատկանէր կամ Ֆրանսիականին»։ Բայց պատերազմը սկսածչսկսած, ո՛չ միայն յետ կեցաւ իր առաջուան դիրքից, չը յորդորեց Ֆրանսիացի պրոլետար-զինուորներին հրացանի գնդակը դարձնել դէպի իրենց սպաները, այլ Ֆրանսիացի զինուորներին յորդորեց «գնդակները արձակել կոյսին, փոյթ չէ կոյսը բաղկացած է Գերմանացի պրոլետարներից կամ բուրժուաներից, բաւական է, որ Գերմանացիներ են»։

Սրանից յետոյ, առնենք առաջին եւ երկրորդ Սոցիալիստներին, ըստ Լենինի, մեր դիրքն ու հասկացողութիւնը է՛լ աւելի ճշտել կարենալու համար։

Ասացինք, որ Լենինը Սոցիալիստներին երեք դասերի, կարգերի էր բաժանել։ Երրորդ կարգինները տեսանք թէ որո՞նք եւ ինչե՞ր են։

Հիմայ անցնինք միւսներին. Առաջիններին եւ Երկրորդներին։

«1.— Սոցիալ Հայրենասէրներ, այսինքն՝ բառերով Սոցիալիստներ, իսկ գործքով՝ շովինիստներ, որոնք համաձայնում են իրենց հայրենիքը պաշտպանել իմպերիալիստական պատերազմի եւ, մասնաւորապէս, վերջին պատերազմի ժամանակ։ Դրանք մեր թշնամիներն են. որոնք գնացել են Բուրժուազիայի բանակները։ Սրանք իրենց մէջն են առնում ամէն ազգերի Սոցիալիստների պարագլուխների մեծամասնութիւնը, օրինակ՝ Պլեխանով եւ ընկերութիւն՝ Ռուսաստանում, Շայդեման՝ Գերմանիա-

յում, Ռընօդէլ, Գէդ եւ Սմբա՝ Ֆրանսիայում, Բիսսոլատի եւ ընկերութիւն՝ Իտալիայում, Հայդման, Ֆարիաններ եւ Աշխատաւորականներ՝ Անգլիայում, Բրանտինգ եւ ընկերութիւն Շուէդիայում, Տրօլեստրա եւ իր կուսակցութիւնը՝ Դանիայում, Վիկտոր Բերգեր եւ հայրենեաց ուրիշ պաշտպաններ՝ Ամերիկայում, եւայլն»:

Սոցիալ Դէմօկրատ Հնչակեանները ոչ «իմպերիալիստական ձգտումներ տածող հայրենիք» են ունեցած, ո՛չ էլ «իմպերիալիստական պատերազմ» վարած, որ եւ է «իմպերիալիստական մի նպատակի» հասնելու համար: Քանի որ այդպիսի մի իրականութիւն չը կայ, չի եղել, ուստի «խօսքով Սոցիալիստ, գործքով՝ շովինիստ» որակումները մեր Կուսակցութեան հետ գործ չեն կարող ունենալ: Մենք եղել ենք, մնացել ենք Գիտական Սոցիալիստներ, Մարքսիստներ եւ մտածել, դատել ենք համաձայն Հայ իրականութեան պայմաններին, այն պայմաններին՝ որոնց մէջ տապլտկել էր Հայ գիւղացին, Հայ գործաւորը, Հայ աշխատաւորը, մի իրականութիւն, որ տարբերուել է քաղաքական եւ տնտեսական շատ գծերով, Գերման, Ֆրանսիացի, Անգլիացի, Իտալացի իր դասակարգակիցներից: Ուստի միջավայրերի, կեանքի պայմանների սուր տարբերութիւններ կային, — մենք, որպէս զուտ Մարքսիստներ, առանց հետեւողականի որ եւ է շաղիկ առնելու մեր վրայ, մենք պիտի երթայինք, եւ գընացինք էլ, մեր սեպհական ուշքով, մեր սեպհական մըտածմունքներով: Ո՞վ կարող է յանդգնիլ ասելու, որ մեր արածը շիտակ չի եղել, եթէ նա ճշմարիտ Սոցիալիստ է. կամ պէտք էր շարժուել, գործել, կամ պէտք էր լռել, ականատես լինել.— շարժուելու եւ գործելու ուղին ընդունող Մարքսիստ Կուսակցութիւնը ճիշտ այն ընթացքը եւ վարքագիծը պիտի ունենար՝ այս պատերազմից առաջ, նրա ընթացքում եւ յետոյ՝ ինչ որ ունեցաւ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը:

Հիմայ տանք երկրորդի պատկերը:

«2.— Երկրորդ խումբը, ասում է Լենին, կարելի է կոչել Կեդրոն. սա տատանւում, երեւում է Սոցիալ Հայրենասիրութեան եւ իրական Միջազգայնութեան միջեւ: Սրանք ամէն սրբութիւններով երդւում են, որ իրենք Մարքսիստներ են, Միջազգայնականներ են, կողմնակիցներ են խաղաղութեան, կողմնակիցներ են ճնշում գործ դնելու կառավարութեան վրայ, որ իրենց ամէն տեսակի պահանջներ են ներկայացնում՝ ցոյց տալու համար ազգի ցանկութիւնը խաղաղութեան համար. որ իրենք խաղաղութեան պրօպագանդիստներ են եւ ուզում են խաղաղութիւն առանց կցումի, եւ խաղաղութեան պաշտպաններ են՝ Սոցիալ Հայրենասէրների հետ: Սա դէմ է ամէն տեսակի բաժանման եւ երկպառակութեան ու կողմնակից է միութեան: Սա, Կեդրոնը՝ երկինքն է փոքր Բուրժուազիայի շրթունքի միջազգայնութեան, երկինքն է վատարանց պատեհապաշտութեան, երկինքը՝ Սոցիալ-Հայրենասէրների հետ միաբանութեան: Իրողութիւնն այն է, որ Կեդրոնը համոզուած չէ թէ՝ անհրաժեշտ է յեղափոխութեան դիմել՝ իր սեպհական երկրի կառավարութեան դէմ. նա այդ տեսակ յեղափոխութիւն չի քարոզում. նա անողոք կռիւ չի մղում յեղափոխութեան համար, ուստի դիմում է շատ ստորին, դեր-Մարքսիստական խուսափանքների՝ դժուարութիւններէն մի կերպ դուրս գալու համար:

«Սոցիալ Հայրենասէրները մեր դասակարգի թշնամիներն են. նրանք բուրժուաներ են բանւորական շարժման մէջ: Նրանք ներկայացնում են գործաւոր դասակարգի այն խաւերը կամ խումբերը, որոնք գործնականի մէջ արդէն կաշառուել են Բուրժուազիայից՝ իրենց առատագեղ աշխատավարձերով, պատուոյ դրութեամբ, եւայլն, ու դրա համար էլ օգնում, սատարում են իրենց բուրժուազիային շահագործելու եւ ճնշելու փոքր ու թոյլ ազգերը ու այդ կերպով էլ մասնակցում կապիտալիստական աւարի բաժանումին:

«Կեդրոնի խումբի անդամները հնամոլութեան երկրպագուներ են, օրինականութեան փտախտից կերուածներ, ապականուածներ պարլամենտական կատակերգութիւնից, բիւրօկրատներ՝ որոնք սովոր են պաշտօնական ռոճիկների եւ պատրաստի թեթեւ, բայց արդիւնաբեր գործերի: Պատմականապէս եւ տնտեսապէս սրանք չեն ներկայացնում ընկերութեան որ եւ է մասնաւոր մի խաւը...:

«Կեդրոնի գլխաւոր պարագլուխը եւ ներկայացուցիչն է Կարլ Կաուցկի, որ Երկրորդ Միջազգայինի (1889–1914) մէջ իշխող դէմք հանդիսացաւ: Մարքսիզմի անկման գլխաւոր պատասխանատուն նա՛ է. նա անդրդուելի չեղաւ սկզբունքային տեսակէտից, ողբմելի կերպով տատանողական եղաւ եւ Սոցիալիստական Գործը դաւաճանեց 1914–ի Օգոստոսից սկսած:

«Կեդրոնի մէջն են Կաուցկի, Հասէ, Լեդեբուր եւ, այսպէս կոչուած Ռայխստագի Բանուորական խումբը: Ֆրանսիայում՝ Լոնդէ, Պրեսման եւ, այսպէս կոչուած, փոքրամասնութիւնը: Անգղիայում՝ Ֆիլիպ Սնոըդեն, Ռամզէյ ՄըկԴոնալդ եւ Անկախ Աշխատաւորական Կուսակցութեան ուրիշ անդամներ, ինչպէս եւ Բրիտանական Սոցիալիստ Կուսակցութեան մի մասը: Միացեալ Նահանգներում՝ Մօրիս Հիլքուիթը եւ ուրիշներ: Իտալիայում՝ Տիւրատի, Տրէվս, Մաքսիմալիանի եւ ուրիշներ: Զուիցերիայում՝ Ռոբէրտ Գրիմ եւ ուրիշներ: Աւստրիայում՝ Վիկտոր Ադլեր եւ ընկերութիւն: Ռուսաստանում՝ Մենշեւիկները, Աքսելրոդ, Մարտով, Զիսեիձէ, Յերեթելի, եւ ուրիշներ»:

«Երկրորդ խմբի, կամ «Կեդրոնի» եւ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեանի միջեւ ի՞նչ մի յարանմանութիւն կարելի է գտնել, որ նրան տրուած ստորոգելիները մեզ վրայ էլ անցնեն, — եւ ո՛չ մի. կատարեալապէս ո՛չ մի: Դիմադրծերը այնքա՞ն խորթ են, որ հարազատ ո՛չինչ կարելի է գտնել նրա եւ մեր միջեւ:

Եւ այդ ի՞նչ ասել է, — այն՝ որ բոլորովին տարբեր է եղել մեր միջավայրը, մեր իրականութիւնը, որի մէջ գործել, շարժուել ենք մենք երկար տարիների ընթացքում:

Ընդհանուրի մէջ՝ մենք ունեցել ենք մեր մասնայատուկ պայմանները: Եւ այդ պայմանները աչքի առաջ պէտք է ունենալ, երբ ուզում է խօսուիլ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան գաղափարաբանութեան եւ գործունէութեան մասին, որպէս Մարքսիստական տեսութիւններով առաջնորդուող Միջազգային Սոցիալիստ մի Կուսակցութեան:

Զ.

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ, ՎԵՐՋՆԱԿԱՆ ԴԻՐՔ

Կոմմունիստական Միջազգայինի մեր վերջին խօսքն է, որ մեր մասին իր տուած առաջին որոշումը չենք կարող ընդունել. նա կը մնայ անգործադրելի: Բանագնացութիւնները թող շարունակուին՝ խնդիրները էլ աւելի լաւ պարզաբանուելու համար. անհապարելու ո՛չ մի պէտք ու կարիք կայ:

Մենք հարցի վրայ նայում ենք ընդհանուր պրոլետարական, Սոցիալիզմի, Յեղափոխական Մարքսիզմի շահի տեսակէտից:

Ու տեսնում ենք, որ տրուած որոշումը չի համապատասխանում Հայ իրականութեան, ուրեմն եւ ամէն բանից առաջ, ամենէն աւելի տուժողը կը լինի պրոլետարական շահը, Յեղափոխական Մարքսիզմը, եթէ Եգիպտոսից, Սիւրիայից, Բալքանեան երկրներից, ինչպէս եւ Ամերիկայից, եւայլն, վերցուի, ասպարէզից հեռանայ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, քանի որ Հայ գործաւորը, պրոլետարը վարող ուրիշ մի ա՛յլ ոյժ նրա տեղը չի կարող բռնել:

Քանի որ քաղաքական–տնտեսական պայմանները, կապիտալիստական երկրներում բոլորովին բացառիկ դրութեան մէջ են դրել աստանդական կեանքի յանձնուող Հայ արտադրողին՝ պրոլետարիատին, աշխատաւորին:

Քանի որ նրան ո՛չ թէ վանում, հալածում են բոլոր երկրների կապիտալիստական քաղաքական–տնտեսական օրգաններն ու հաստատութիւնները, այլ եւ նաեւ նոյն ինքն իր դասակարգակից անդիտակից ընկերները:

Քանի որ Հայ պրոլետարիատը տասնեակ հարիւր հազարներով ոչ միայն զրկուել է իր տարիների արիւն քրտինքի արտադրոյթից, իր հալալ վաստակ տուն ու տեղից, այլեւ արդիլման տակ է առնուել՝ իր ծննդավայրը վերադառնալու:

Եւ այդ հարիւր հազարներին ինչո՞ւ թողնել առանց ղեկավարութեան, առանց դաստիարակութեան՝ երբ նրանց ո՛չ մի կերպ բաւականութիւն կարող են տալ այն երկրների Կոմմունիստ Կուսակցութիւնները, որոնք արդեամբ չը կան, եղածներն էլ մի բան չեն:

Եւ յետոյ՝ իրերի բնական ընթացքը չը պիտի՞ բերեն Կոմմունիստ Միջազգայինին հասցնելու այն եզրակացութեան, որ 17–րդ յօդուածը մեղմանայ: Առաջ որոշուեցաւ, որ բոլոր երկրների մէջ միայն մէկ հատ Կոմմունիստ Կուսակցութիւն լինէր — յետոյ՝ կեանքը ցոյց տուեց թէ կապիտալիզմը դեռ ի՛նչ սուր ճիրաններ ու ատամներ ունէր, ուստի Միջազգայինը ստիպուեցաւ համակերպել, թոյլ տալ, որ ուրիշ մի հոմանիշ անուն գործածուի, օրինակ Գործաւորական, Բանուորական Կուսակցութիւններ: Ամերիկայի եւ Բուլղարիայի անցքերը շատ աչքեր բացեցին:

Մենք այս մասին հրապարակով երկար չենք ուզում խօսել:

Եզրակացնում ենք ասելով միայն այն, որ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը անպայմանօրէն պիտի պահի իր Կուսակցական անհատական գոյութիւնը,

նա իր կեանքը պիտի շարունակի, հաւատարիմ մնալով իր յեղափոխական Մարքսիստական ուղղութեանը՝ Հայ իրականութեան մէջ: Եթէ Երրորդ Միջազգայինին չենք կարող ուղղակի անդամակցել կազմակերպչական տեսակէտով. կարող ենք մնալ համակիր, ինչպիսի դրութիւն որ ընդունուած է Միջազգայինի կողմից՝ մի քանի ա՛յլ երկրների Կուսակցութիւնների համար՝ իր կանոնագրային հասկացողութիւնների մէջ:

Մեր դիրքը է՛լ աւելի լաւ ճշտուած լինելու համար՝ ասենք Երրորդ Միջազգայինի Նախագահութեան մեր այս վերջին խօսքն էլ թէ՝ մեզ համար դեռ Արեւելեան Խնդիրը վերջացած, փակուած չէ. նա բաց է. եւ Հայ վտարանդի, բնաւեր պրոլետարիատը, գիւղացին, աշխատաւորը այդ «Խնդրի» վճռուելու ազդակ–պահանջատէրերից մէկն է մնում:

Սա շատ պարզ ու որոշ է. ականջ ունեցողը՝ թող լսի, աչք ունեցողն էլ՝ տեսնի, իմանայ:

Ո՛չ պատմութեան տեղատուութիւնը մեզ կարող է շփոթեցնել, ոչ էլ կապիտալիստ պետութիւնների դիրքը:

Արդէն Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը միակ կուսակցութիւնն է եղած, որ սկիզբից ի վեր ո՛չ միայն որ եւ է յոյս չի դրել Եւրոպական այս ու այն կապիտալիստ պետութեան եւ կամ նրա դիւանագիտութեան վրայ, — ընդհակառակը՝ նա հէնց առաջին օրից մերկացրել է այդ դիւանագիտութեան ոգին եւ նրանից զգուշացրել:

Վայր ընկած Արդարութիւնը կը բարձրանայ:

Եւ այն՝ ինչ որ բռնապետական, կապիտալիստական «արդարութիւն–անարդարութիւնը» վայր ձգեց, կոխկրտեց, — աւելի քան վստահ ենք, որ Պրոլետարական Արդարութիւնը կը դայ եւ կը բարձրացնի:

Ու մենք կը շարունակենք մեր կեանքը, ոգի ի բուն կ՝աշխատենք, որպէս զի ընդհանուր Պրոլետարական այդ

յաղթանակը օր առաջ գայ եւ իր Արդարութիւնը բաժին հանի այն Հայ պրոլետարիատին, որ այսօր անճնատուր է եղել բախտի ալիքներին, առանց իր պայքարը թողնելու։

ՎԵՐՋ Ա. ՄԱՍԻ

Բ. ՄԱՍ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՕՑԻԱԼ ԴԷՄՕԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷԻՆ

1·

Ուշացած մի պատասխան է, որ տալիս ենք Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի քարտուղարին՝ մեր Կուսակցութեան հասցէին ուղղած իր մի քանի դիտողութիւնների առթիւ:

Որովհետեւ եղածը լոկ դիտողութիւն է եւ ո՛չ թէ քննադատութիւն. ուստի մեր պատասխանն էլ կը լինի Բրոշիկ:

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան ոյժն ու ծաւալը հասկանալու համար՝ բանանք Կոմմունիստ Միջազգայինի Զորրորդ Համագումարի արձանագրութեան 292-րդ էջը: Գրուած է.— «Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութիւն: Մի պատուիրակ էր հրաւիրուած. երկուսն էին եկել: Մէկը ընդունուեցաւ քուէարկելու իրաւունքով. իսկ միւսին տրուեցաւ խորհրդակցական ձայն:

Նոյն գրքի 291-րդ էջի մէջ ասուած է.— «Ազերբէյջանի Կոմմունիստ Կուսակցութիւն: Երկու պատուիրակներ էին հրաւիրուած. երեքն էին եկել: Երկուսը ընդունուեցան քուէարկելու իրաւունքով. մէկն էլ՝ խորհրդակցական ձայնով»:

Մէջբերուած պաշտօնական արձանագրութիւնից պարզ երեւում է որ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութիւնը ամենից թոյլն է: Վրաստանի եւ Ազերբէյջանի Կոմմունիստ Կուսակցութիւնները շատ աւելի ուժեղ եւ տարածուն են, քան Հայաստանինը:

Կոմմունիստ Միջազգայինի Զորրորդ Համագումարի արձանագրութեան ընթերցումից երեւում էր, միջին չափով, 500-ից մինչեւ 1000 անդամ ունեցող Կուսակցութիւնները տուել են մէկ անդամ՝ քուէարկելու իրաւունքով:

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութիւնը տուել է քուէարկող մէկ ձայն. ուրեմն՝ այդ ժամանակ (1922-ին) իր անդամների թիւը 1000-ից աւելի եղած չը պիտի լինի:

Ասել է թէ, աւելաչափը առնելով, Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան անդամների թիւը, այսօր, [illegible]-ից անց չէ:

Չենք ծանրանում անցեալի մասին: Միայն ասենք [illegible], որ անցեալի մէջ՝ Ռուսաստանի Սոցիալ Դէմոկրատական Կուսակցութեան Մեծամասնական թեւին պատկանող Հայերի թիւը միշտ մատի վրայ համրուած է [illegible], էն է՛լ գլխաւորապէս, Բագուի մէջ. Թիֆլիզում եւ Թիֆլիսում չա՛տ, շա՛տ քիչ են եղել: իսկ այսօրուայ Հայաստանի շրջաններում՝ Դարալագեազ, Զանգեզուր, Եւդոկիա, Լենինական (Աղէքսանդրապոլ), Դիլիջան, եւ [illegible], եւայլն, նրանք, եթէ չասենք բնաւ գոյութիւն չունեին, ապա աւելի քան հազուագիւտ, ցանցառ էին:

Այսօրուայ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան գործիչ անդամները չեն կարող ժխտել, որ իրենց թերթերին ու գործիչներին՝ մենք շատ անգամ օրհասական ընթացքից ենք հանել, նիւթական օգնութիւն տալով:

Մատնանիշենք այս էլ.— Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, 1907-ին, Լենինականի (Աղէքսանդրապոլի) եւ շրջականների մէջ ունէր, արձանագրուած 14.000 անդամ: Թողենք Ղարսը եւ Երեւանը իրենց շրջաններով, ուր հազարաւորների են հասել մեր ընկերների թիւը:

Նախիջեւանի (Հին) շրջանում, ուրիշ գիւղեր մի կողմ ձգելով, մօտաւորապէս 1000 անից բաղկացած զուտ Հայ Գոնութ աւանը ամբողջապէս Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան էր: Եւ այդ Հայ աւանն էր, որ 1905-ի կռիւներին յաղթեց նոյն շրջանի մէջ գտնուող Թաթար Նէհրամ գիւղին, — այսօրուայ այն գիւղին, որ Անկախ Նախիջեւանի գաւառի ոյժի կորիզն է կազմում:

Զանգեզուրի՝ Բոնակոթը, Խնձորեսկը, Գորիսը, եւ այլն, եւայլն, մեր Կուսակցութեանն էին: Այդ տեղերում պատմական նշանակալից գործեր են կատարուել:

Ասել է, այսօրուայ Հայաստանի Կոմմունիստ Կու-

սակցութիւնը մեր մի շրջանի ոյժին հասնելուց դեռ չա՞տ հեռու է ... : Զենք խօսում միւս վայրերում ունեցած մեր ոյժերի մասին :

Այս թռուցիկ տեղեկութիւնները պէտք էին՝ յետադայ խօսելիքները լաւ հասկանալու համար :

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութիւնը մեզ համար մի հեղինակութիւն չէ, բնա՛ւ երբէք, որ իր դրած ասածները մի առանձին արժէք ունենային մեր մասին եւ մասնաւոր ազդեցութիւն գործէին մեր ընկերների վրայ : Պատմութիւնը, կեանքը, կատարուած գործերը նրան չեն տուել այդպիսի մի հեղինակութեան նեցուկ :

Ուստի խօսինք եւ պարզաբանուինք :

Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեան քարտուղարը ամբիոնական մի առանձին շեշտով ասում է որ՝ «Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան անունը լիկվիդացիայի է ենթակայ» — Ինչո՞ւ. փա՞ստ, պատճառաբանութի՞ւն — քննախօսութիւն չը կայ, այլ միայն դիտողութիւն :

Մեր պատասխանն է, — Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան անունը լիկվիդացիայի ենթակայ չէ՛, չի կարող լինել, նա կը մնայ, քանի որ այդ մասին դիտական հիմունքները չեն պակասում : Մենք ո՛չ արտագրողներ ենք եղած դաղափարական հողի վրայ, ո՛չ էլ պարզ հետեւողներ՝ գործնական դետնի վրայ : Մենք ունեցել ենք, ունինք, կը պահենք մեր ինքնուրոյնութիւնը, քանի որ նա այսօր էլ, ինչպէս եւ երէկ, լիակատարապէս համապատասխանում է Հայ իրականութեան եւ Գիտական Սոցիալիզմի տեսութեան :

Երրորդ Միջազգայինն, իր տուած որոշումներով, մեզ հետ համաձայնեց որ, Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, որպէս ամբողջութիւն, իր կազմակերպութիւններով ու օրգաններով, տասնեակ տարիների կեանք մաչելով Հայ միջավայրում, հետեւողական բանւորական, միջազգային՝ Կոմմունիստական (Մարքսիստական) վարքագիծ է ունեցել՝ տուեալ պայմանների համաձայն :

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի քարտուղարը այդ չի ընդունում, նա ասում է, որ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը մանր-բուրժուազական է, նա է՛ «հարազատ ծնունդ մանր բուրժուազիայի» :

Գլխիվայր սխալ :

Պատասխանը :

Ի՞նչ ասել է Մանր-Բուրժուազական կուսակցութիւն. որո՞նք են նրա ստորոգելիները, յատկանիշերը : — Ուրիշ ազրիւրների չը դիմենք : Վերառնենք Բուխարինի «Կոմմունիզմի Այբբենարանը» : Այդ գրքոյկի 63-րդ էջի մէջ տպուած է. «Մանրաբուրժուազական Սոցիալիզմը կախումն չունի պրոլետարիատից. այլ անհետացող արհեստաւորից, գաղաքների մանր-բուրժուազիայից, եւ մասամբ, մտաւորականներից : Փոքր կապիտալիզմի եւ «ազատութեան» անունով՝ նա բողոքում է խոշոր կապիտալիզմի դէմ : Գլխաւորապէս նա պաշտպանում է Բուրժուազական դէմոկրատիան՝ Սոցիալիստական Յեղափոխութեան դէմ. նա աշխատում է իր իդէալին հասնիլ «խաղաղ միջոցներով», — այսինքն՝ գործակցութեան (գործակցական ընկերութիւնների) եւ տնագործաւորների ընկերակցութիւնների տարածումով, եւայլն : Կապիտալիզմի ներքոյ՝ այդ ընկերութիւնները յաճախ վերածւում դառնում են սովորական կապիտալիստ կազմակերպութիւններ եւ այդպիսի ընկերութիւններով շահագրգռուողները հազիւ տարբերւում են Բուրժուազիայի անդամներից» :

Բուխարինի գրածները, ասած-խօսածները հեղինակութիւններ են Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան անդամների համար : Ուստի յենուենք հէ՛նց այդ աղբիւրի ասածների վրայ :

Հարցնում ենք. համապատասխանո՞ւմ է դա Սոցիալ

Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան գաղափարաբանութեանը, նրա գործունէութեան ու բաղկացութեանը, կազմակերպութեանը.— բնաւ երբէք: Համեմատութեան, զուգակշռի հետ անգամ չը կայ:

Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ծընունդը ամենախոշոր երեւոյթներից մէկն է մեր պատմութեան մէջ: Այդ ծնունդը հարկ է որ բացատրուի Մարքսիստականօրէն:

Որո՞նք էին այն ազդակները, որոնք ծնունդ եւ հող տուեցին այդ Կուսակցութեան.— դրանք հարցեր են, որ շատ պիտի զբաղեցնեն խղճամիտ պատմաբանին, եթէ նա ուզում է խօսել փաստերի, եղելութիւնների, թանձրացեալ տուիքների վրայ յենուած: Երբ այդպէս չի լինում, յառաջ են գլորւում շատ սովորական մաշուած բառեր, որոնց տակ թաղնուած են կուսակցական նեղմտութիւններ, հակամարտ զգացումներ, — դրանք, այլեւս, մեծ արժէք չեն ներկայացնում:

Առնենք կեանքը:

Մե՞նք «կախուած չենք եղել պրոլետարիատից» — մե՞նք չենք ունեցել պրոլետարական զանգուածներ մեր շարքերի մէջ: Այդպէ՞ս:

Ամբողջ Փոքր Հայքի՝ Ամասիայի, Թոկատի, Սեբաստիայի, Կեսարիայի, Արաբկիրի, Ատաբազարի, Պարտիզակի, Դուրթիլանի, Գրնճըլարի, Գէյվէի, Պուրսայի, Դոնիայի, Մանիսայի, Իզմիրի, եւայլն, եւայլն, մեծ ու փոքր արհեստանոցների, գործատեղիների, գործարանների մէջ աշխատող գործաւորներն ու գործաւորուհիները եղել են, բացառապէս, մեր Կուսակցութեան անդամները: Դրանց թիւը շա՞տ շատ է եղել. տասնեակ գործադուլներ ենք վարել՝ ո՛չ միայն 1909-ից յետոյ, այլ նրանից շա՞տ առաջ: Ո՞ր Կուսակցութեան անդամներն են եղած Կիլիկիայի ընդարձակ դաշտերի մէջ աշխատողները, — եթէ ոչ մեր: Ձե՞նք ունեցել որոշեալ ազդեցութիւն Թիւրքիայի հանքերի մէջ աշխատող՝ հանքագործների վրայ: — Եւ

դրանք բոլորը եղել են պրոլետարներ՝ այս բառի գիտական առումով:

Թողնենք Թիւրքիան. անցնինք նախկին Ռուսաստան. — հերքել կարելի՞ է. իրողութիւն չէ՞, որ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեանների թիւը քառապատիկն է եղել, Բաքուի մէջ, Հայ Մեծամասնականներից: Հայ Մեծամասնականները, այսօրուայ Հայ Կոմմունիստները, Թիֆլիզի մէջ յարդի բոցի նման փայլող եւ անմիջապէս մարողներ են եղել. նոյնը եւ Բաթումի մէջ, Սոխումի շրջանում, եւ եւայլն, եւայլն:

Հողազուրկների, հողային աշխատաւորների ո՛չ միայն հայ տարրեր ենք ունեցել, բաւականին մեծ թուով, այլեւ Թաթար (Զանգեզուր, Օրդուբաթ) գիւղացիներից բազմաթիւ ստորագրութիւններով փաստաթղթեր ունինք, ապացուցանող թէ ի՛նչպէս նրանց պաշտպանել ենք: — Ո՛չ. իրողութիւնն է, անժխտելի իրողութիւնը, որ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, իր բոլոր շրջաններում, ունեցել է ահագին թուով պրոլետարներ իր շարքերի մէջ, եւ մենք նրանցից «կախումն» ենք ունեցել: «Կախումն» գաղափարական, «կախումն» մարտական-տակտիկական, «կախումն» կազմակերպչական:

Ուրեմն Բուխարինի այն սահմանաւորումը թէ՝ Մանրա-Բուրժուազական Սոցիալիզմը կախումն չունի պրոլետարիատից, — մեր հասցէին բնաւ չի պատշաճում: Քանի որ մենք երէկ, եւ այսօր, մեր շարքերի մէջ ունեցել ենք ահագին թուով զուտ պրոլետարներ, որոնց թիւը միշտ էլ քառապատիկ աւելի մեծ է եղել այսօրուայ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան անդամների թըւից:

Եթէ իրական Սոցիալիստ (Մարքսիստ) Կուսակցութեան կազմակերպչական առաջին յատկանիշն է մեծ թըւով պրոլետարական տարրեր ունենալ իր մէջ.— այդ մենք ունեցել ենք. այդ յատկանիշը մեր Կուսակցութեան վրայ եղել է, եւ կայ:

2.

Բուխարինի տուած սահմանաւորումից երեւեց, որ Մանրա-Բուրժուազական Սոցիալիստ Կուսակցութիւնների գլխաւոր յատկանիշներից մէկն էլ այն է որ նրանք իրենց մէջ չեն բովանդակում պրոլետարական տարրեր:

Տեսանք, որ այդ յատկանիշը մեզ չէր կարելի վերագրել՝ այն պարզ պատճառով, որ մենք միշտ էլ, մեր բոլոր շրջաններում, ունեցել ենք ահագին թուով զուտ պրոլետարական տարրեր, որոնք մեր Կուսակցութեան մէջ գերակշիռ տեղ են բռնել:

Ուրիշ ի՞նչ ստորոգելիներ է տալիս Բուխարինը Մանրա-Բուրժուազական Սոցիալիստ Կուսակցութիւններին:

Նրանք յենւում են գլխաւորապէս, փաստում է մեր հեղինակը, «անհետանալու» դատապարտուած «արհեստաւորների, քաղաքների Մանրա-Բուրժուազիութեան եւ, մասամբ, Մտաւորականների վրայ»:

Առաջին իսկ հայեացքից շատ յստակ կերպով երեւում է, որ այդ յատկանիշներն էլ բնաւ տեղ չունին մեր հասցէին մէջ:

Մենք Կուսակցութիւն չենք հիմնել, չենք պահել — զարգացրել, մեծաղղորդ յեղաշրջումներ, անցքեր յառաջ քաշել՝ յենուելով այն կօշկակարների, գլխարկագործների, կաշեգործների, կտաւագործների, ատաղձագործների, դարբինների, երկաթագործների, դերձակների, եւ այլն, եւ այլն, վրայ, որոնք իրերի բնական բերումով անհետանալու, չքանալու շաւղի մէջ էին մտել հէնց այն օրից, երբ իրենց գործած-ապրած վայրերում կառուցուեցան հսկայ գործարաններ, որոնց արտադրութեան մըրցմանը չը դիմանալով՝ վարձու բանուորներ դառնալու վիճակին էին հասել, ու մենք էլ յառաջ նետուեցանք՝ նրանց մեր Կուսակցութեան մէջ առանք, որպէս զի իրենց արհեստների վերաբերեալ գործարանատէրերի դէմ՝ ի-

բենց շահերը պաշտպանենք: Ընդհակառակը՝ չքանալու, անհետանալու դատապարտուած փոքր արհեստաւորներին մենք միշտ էլ ասել, խօսել ենք, անվարան կերպով, որ իրենք վայր պիտի երթան, ընկնին, որպէս արդիւնք եւ հետեւանք ճարտարագործութեանց զարգացման բնական պրոցեսին: Մենք չենք աշխատել նրանց կանգնեցնել, արգելք լինել, թումբ հանդիսանալ իրենց բնական մահուանը: — Այժմ հարց. մեր ո՞ր շրջանի մէջ այդ տարրերի փաստաբան-զօրավիդն ենք եղել, կ՞այ այդ մասին՝ մեր մամուլի մէջ՝ մի տող անգամ.— ապա ինչո՞ւ, դիտմամբ, մեզ հագցնել այնպիսի զգեստներ, որ մերը չեն:

«Քաղաքների Մանրա-Բուրժուազիութեան վրա՞յ» ենք յենուել: — Այսինքն, ընտրովի ամէն տեսակի խանութպաններ՝ նպարավաճառներ, հացագործներ, բանջարավաճառներ, փոքր ծառայողներ ու պաշտօնակալներ... ենք լցրել մեր Կուսակցութեան մէջ: Մեր Կուսակցական գործերը միայն այդ ընտրեալներո՞վ ենք առաջ տարել, կուլ ենք գնացել սրա՞նց շահերով: — Զրի եւ անտեղի վերագրում չէ՞ մեզ՝ այս կէտն էլ:

Մի տող, մի բառ անգամ չի կարելի ցոյց տալ մեր գրականութեան մէջ, որով դայ հաստատուի այն իրողութիւնը, որ մենք առանձին, անկախ մտաւորական (ինտելիգենցիա) դասի կամ դասակարգի գոյութիւն ենք ընդունել: Այո՛, Մանրա-Բուրժուա Սոցիալիստները ընդունում են որ մտաւորականների (ինտելլիգէնտների) անկախ, զատ մի դասակարգ կայ, բայց դա մեզ համար, մեր Կուսակցութեան համար չէ:

Կայ Բուրժուա մտաւորական, կայ պրոլետարական մտաւորական, երկուսն էլ դասակարգային գծերի վրայ կեցած: Մէկը չի կարող միաժամանակ թէ Բուրժուազիայի մտաւորականը լինել եւ թէ Պրոլետարիատի: Երկուսից մէկը պիտի լինի, — կամ սրա, կամ նրա: Երբեմն, Թուրք դատարանների մէջ՝ կռուող երկու կողմերը միեւնոյն փաստաբանը կ՝ունենային. նոյն անձը երկու հա-

կառակորդ կողմերի շահերը կը պաշտպանէր՝ երբեմն սրա թէզը զարգացնելով, երբեմն նրա: Այդպիսի մի դիրք մտաւորականների համար՝ ընդունում են Սոցիալիստ Յեղափոխականները, Սոցիալիստ Ժողովրդականները, Սոցիալիստ Մանրա-Բուրժուազականները, — բայց ո՛չ թէ Մարքսիստները: Այդ ուղղութեամբ՝ մենք որեւէ շեղում կատարած չունինք եւ առաջ ենք քաշում, որպէս ապացոյց, մեր հարուստ եւ երկարամեայ գրականութիւնը:

Այդ նկատմամբ մատնանիշել ենք, որ դասակարգից դասակարգ գնացող մտաւորականներ կը լինեն, կը պատահեն, այս ու այն շարժառիթից մղուած: Օրինակ՝ ազնուական ծնունդ ունեցող Միրաբօն անցաւ, բռնեց Ֆրանսիական Բուրժուազիայի կողմը: Երբեմն Միլլերանը, Վիվիանին, Բրիանը... թունդ գործաւորականներ, պրոլետարականներ էին՝ հակառակ իրենց բուրժուազածին հանգամանքին... Հայերիս մէջ քիչ չի եղել դասակարգից դասակարգ գնացող մտաւորականների թիւը: Եղած են. պատմութիւնը այդպիսի իրողութիւններ ունի արձանագրած:

Պատմութիւնը ասել է, նաեւ, որ այդպիսիները շատ էլ վստահելի չեն... Նրանք փոփոխամիտներ են, յարատեւ կամքից զուրկ, եղէգի նման տատանուողներ, դասալքութեան հակամէտներ... եւ Միրաբօն ունեցաւ իր առհասարակ զգացումների ժայթքումները, — կաչառուեց, նորից անցաւ ազնուականների, արքայականների կողմը: Միլլերանը, Բրիանը, Վիվիանին...պակասը լրացրին, էլ կասկած չը թողեցին այն հաստատագրին թէ՝ դասակարգից դասակարգ գնացողները ո՛րքան տարակուսելի տիպեր են:

Նոր չեն մեր այս ասածները. դրանք շատ անգամ կրկնուել են:

Շարունակենք մեր խօսքը:

Բուխարինը հաւաստիացնում է, որ Մանրա-Բուրժուազական Սոցիալիզմը «բողոքում է՝ «ազատութեան» եւ փոքր կապիտալիզմի անունով՝ խոշոր կապիտալի դէմ»:

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան Բարտուղարը, ասում են, պատմաբան է: Արդ, կարո՞ղ է՝ մեր 38 տարուան կեանքից՝ մի գիծ, մի բառ, մի եղելութիւն մատնանիշել՝ ապացուցանելու համար, որ մենք, երբ եւ իցէ, «ազատութեան եւ փոքր կապիտալիզմի անունով բողոքած լինէինք խոշոր կապիտալի դէմ»: Որ եւ է մի շըրջանում՝ այդպիսի դիրքի մէջ գտնուա՞ծ ենք եղել. — Բնաւ երբէք: Ո՛չ գործնական կեանքը, ո՛չ մեր պայքարի շրջանները այդպիսի մի գիծ ունին, ոչ էլ մեր գրականութեան էջերը: Պարզ է, Մանրա-Բուրժուազական Սոցիալիզմի այդ յատկանիշն էլ մեզ հետ որ եւ է վերաբերութիւն չի կարող ունենալ: Այդ կողմից էլ բաց ճակատ ենք:

Մանրա-Բուրժուազական Սոցիալիզմի մի ուրիշ բնոյթագիծը.— «Նա, գլխաւորապէս, պաշտպանում է Բուրժուա-Դէմօկրատիան՝ Սոցիալիստ Յեղափոխութեան դէմ»: Ճիշտ հակադիրն ենք եղել: Մե՞նք ենք Բուրժուազական Դէմօկրատիան պաշտպանել Սոցիալիստական Յեղափոխութեան դէմ, — ե՞րբ, ո՞ւր, ո՞ր իրողութեամբ: Ընդհակառակը՝ ո՞վ, ո՞ր Կուսակցութիւնն է, որ մեզանից աւելի՝ գործքով եւ խօսքով, գրչով եւ բերանով, պայքարել է Բուրժուազական Դէմօկրատիայի դէմ: Ո՞վ ո՞ր կուսակցութիւնն է, մեզանից աւելի փայլուն կերպով պաշտպանել, զօրավիգն է հանդիսացել Սոցիալիստական Յեղափոխութեան անխուսափելիութեանը: Հայկական հատուկոտոր Բուրժուաները, իրենց տեսաբանները ուրիշ ո՞ր մի Կուսակցութեան դէմ այնքան ուժեղ կերպով պայքարած են, որքան Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան: Հայկական Բուրժուազական Դէմօկրատիայի դաւաճանութիւնները, մատնութիւնները այնտեղ են հաստատելու համար թէ՝ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեանները իրենց պաշտպանել թէ՞ հարուածել են այս երկար տարիների ընթացքում: Այն ժամանակ՝ երբ Հայ Դէ-

մօկրատական Բուրժուազիան կտրուկ կերպով բռնում էր Սուլթանիզմի, Իտիհատական Դէմօկրատիզմի, Ցարական Ֆէօդալիզմի եւ Ռուսաստանի նորածագ Բուրժուազիայի կողմը, ու կատաղի կռիւ էր մղում Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան դէմ, ու մենք մէն մենակ պայքարը տանում էինք, — այդ ժամանակ Հայ Կոմմունիստ Կուսակցութեան հին եւ նոր սերունդը դեռ ոչ ծնուել էր, ոչ էլ ասպարէզ իջել։— սխա՞լ է այս հաւաստումը, պատմութեան տուիքները այդպէս չե՞ն ասում։

Ասել է թէ այդ շապիկն էլ մեզ հագցնել չի կարելի, նոյն իսկ բռնի։

Կոմմունիստ տեսաբան Բուխարինը աւելացնում է եւ այն, որ Մանրա–Բուրժուա Սոցիալիզմը «աշխատում է իր իդէալին հասնիլ խաղաղ միջոցներով»—

Մենք մեր Սոցիալիստական իդէալին հասնելու համար «խաղաղ միջոցներո՞վ» էր, որ Խոյթի, Տաւրոսի բարձունքների վրայ ծածանեցրինք ԿԱՐՄԻՐ ԴՐՕՇԸ այն ժամանակ, երբ Մանրա–Բուրժուազիան Սոցիալիստ պիտակով մեզ որակողները դեռ աղօտ գաղափար անգամ չունէին Մարքսիզմի մասին։ Ո՞ր Կուսակցութիւնն է, որ առաջին անգամ Մայիս 1–ը տօնեց Թիֆլիզի մէջ հրապարակաւէս. ո՞ր Կուսակցութեան անդամն էր, որ այդ առթիւ, «փոխարքայի պալատին» առաջ՝ Կարմիր Դրօշը ձեռքին՝ կօզակների գնդակներից վայր գլորուեց, իր ընկերների ուսերի վրայ նստած տեղից։

«Խաղա՞ղ միջոցներ»։— Լօնտօնի «Թայմզ»ը, «Դէյլի Նիւզ»ը, եւայլն, մի քանի անգամ խմբագրականներ գրեցին, մատնանիշեցին, որ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ուղում է ուղղութիւն տալ Եւրոպական դիւանագիտութեան՝ իր ամէհի շարժումներով։ «Զկայ, չի կարող լինել անդորրութիւն։ Այդ անդորրութիւնը կարող է դալ միայն եւ միայն Սոցիալ Դէմօկրատ Հնչակեաններից»։ Մեր մղած հերոսական կռիւներն էին, որ այդ

եղրակացութեանն էին յանդեցրած զանազան «պետական անձնաւորութեանց» եւ որոնց կարծիքները տեղ գտան պաշտօնական գրութեանց մէջ։

Յեղափոխական Մարքսիզմի բանը եւ գործը մենք ենք մտցրել, առաջին անգամ, Հայ իրականութեան մէջ, եւ այդ ուղղութեամբ էլ շարունակ գնացել...

Մեր կեանքից ,մեր պատմութիւնից տեղեկութիւն ունեցողի համար պայծառ չէ՞ որ «խաղաղ միջոցների» տակտիկան մեզ չի կարելի վերագրել։ Դրանից էլ, ուրեմն, զերծ ենք։

Մանրա–Բուրժուազական Սոցիալիզմի յատկանիշները ըն են, նաեւ, որ նա «խաղաղ միջոցներով» իր իդէալին հասնելու նպատակով՝ կազմում է «Գործակցական ընկերութիւններ... որ կապիտալիզմի ներքոյ զարգանալով՝ դառնում են սովորական կապիտալիստ կազմակերպութիւններ... այդպիսի ընկերութիւններով շահագրգռողները հազիւ տարբերւում են Բուրժուազիայի անդամներից»։

Թէ՝ Մարքսիստական տեսակէտից՝ Գործակցական Ընկերութիւններին ինչ տեղ, դիրք եւ ուղղութիւն պիտի տալ, — այդ մասին չէ խօսքը, այս բոպէիս. այլ այն՝ որ մեր Կուսակցութիւնը ո՛չ մի շրջանի մէջ մասնաւոր ջանք է թափել Գործակցական Ընկերութիւններ կազմելու, որպէս զի այդպիսի «խաղաղ միջոցներով» Սոցիալիզմի իրականացմանը հասնենք։ Մենք չենք ունեցել, եւ ո՛չ մի տեղ, այդպիսի ընկերակցութիւններ, որ բարգաւաճին, զարգանան եւ մեզ էլ, մի գեղեցիկ օր, Բուրժուաներ դարձնեն....

Այդպիսի գործունէութիւն տեսնելը մեր Կուսակցութեան մէջ՝ անհեթեթութեան դլուխ գործոց պիտի լինէր՝ իրողութիւնները ապաւաղելու տեսակէտից։

Այսպէս, Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան Քարտուղարը դիտողութիւն էր արել, որ Սոցիալ Դէմօկ–

բատ Հնչակեան Կուսակցութեան Սոցիալիզմը եղել է «Մանրա-Բուրժուազական Սոցիալիզմ»:

Բուխարինի «Այբբենարանից» մէջ բերուած սահմանաւորումից տեսանք, որ «Մանրա-Բուրժուազական Սոցիալիզմի» յատկանիշները կատարելապէս եւ ամբողջապէս բացակայում են Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան հասկացած Սոցիալիզմից:

Իր դիտողութիւնները գրի առնելիս եւ հասարակութեան ներկայացնելիս, երեւում է, որ Հայաստանի Կոմունիստ Կուսակցութեան Քարտուղարը բազմազբաղ մէկը լինելով՝ ժամանակ չի ունեցել կարդալու Մարքսիզմի եւ, Օ, Ֆէ-ն. բայց ի՞նչքան լաւ եղած պիտի լինէր, որ նախապէս, գէթ, կարդացած լինէր իր հեղինակաւոր ընկերոջ գրած՝ Մարքսիզմի Այբ, Բէն, Գիմը... եթէ այդ արած լինէր, մեր ժամանակն էլ խնայած կը լինէր, իրենն էլ:

3.

Հայաստանի Կոմունիստ Կուսակցութեան քարտուղարը՝ իր հովուական (pastoral) նամակի մէջ՝ մեր Կուսակցութեան մասին իր դիտողութիւնները առաջ տանելով՝ ասում է, որ «Նա կիրառել է ազգայնական պրոպագանդա»:

Երկու եղբեր իրարու հետ չը պիտի չփոթել.— «ազգային» (national) եւ «ազգայնական» (nationaliste):

«Ազգային» եզրի մէջ ամփոփւում են այն բոլոր բաղադրիչները, որոնք բնորոշող, յատկանշող մասերը, դծերն են կազմում այն պատմա-անհատական հաւաքականութեան, որ կոչւում է ազգ (nation):

«Ազգայնական» (nationaliste) եզրով արտայայտւում է տուեալ Ազգի մէջ գոյութիւն ունեցող ա՛յն հոսանքը, ա՛յն ձգտումը, որ մի Կուսակցութիւն, մի Դասակարգ (բուրժուազական, միապետական) իրացնելով՝ իրեն նը-

պատակն է անում այդ Ազգի ընդհանրական յատկանիշները, բնորոշիչ գծերը տարածելու, նոյն իսկ բռնի, միւս բոլոր Ազգերի վրայ:

«Ազգայնական»ը ուրիշ ազգեր կոփող, հարստահարող, նուաճող, ստրկացնող, ի հարկին՝ բնաջնջող մարդ գազանն է: «Ազգայնական»ի համար՝ «իր Ազգը» Ազգն է գերազանցօրէն. նա ընտրեալն է բոլոր Ազգերի միջից, նա ապրելու արժանի ամբողջ մարդկութիւնն է. մարդկային ամենաբարձր ստորոգելիներով միայն նա է օժտուած, անով՝ բացառապէս՝ պիտի իրագործուի մարդկային ամէն գործ.— ամէն ինչ նրանով եւ նրա համար: Նա առանցքը, կեդրոնն է բոլոր Ազգերի: Եւ որովհետեւ ինքը ընտրեալն է, ամէնից վերինը, ուստի նրան ենթարկուիլը, նոյն իսկ ոյժով, բարիք է թէ՛ ենթարկուողների եւ թէ՛ մարդկային յառաջդիմութեան համար... Տարբալուծում, ջնջում ստորին բոլոր Ազգերի, բոլոր ցեղերի համար, որպէս զի գերազանցօրէն Ազգը բաց դաշտ, լայն ասպարէզ ունենայ՝ առանց խոչընդոտի յառաջ երթալու եւ մասից վերածուելու ամբողջականութեան՝ ծովի աւազի պէս բազմանալով»:

Արծիւը՝ իր մագիլների մէջ առած՝ ճչացող աղաւնուն բզիկ-բզիկ է անում. — բնազդ է, իր տեսակը պիտի մնայ. ուրիշը պիտի ուտուի, որպէս զի ինքը ապրի:

Առիւծը յօշոտում է այծեամին.— կեանքը կռիւ է, եւ զօրաւորն է միայն, որ պիտի վերապրի, — թոյլը կեր պիտի դառնայ:

Գայլաձուկը կլանում է կարմրախայտին, — մէկի մահը պայման է միւսի կեանքին...:

Կենդանա-գազանային այդ բնազդը, Հերբերտ Սպենսերեան բանաձեւով կոկելով՝ «Ազգայնականը» փոխադրում է մարդկային ընկերութեան մէջ, նո՛յն խստութեամբ, նո՛յն անողոքութեամբ, նո՛յն «իրաւունքով»: «Ազգայնական»ի համար անառարկելի է. Ցեղը՝ Ցեղին, Ազգը՝ Ազգին պիտի ուտի, — դա «բնական օրէնք է»:

Հետեւապէս՝ «բնական օրէնքի արդիւնքով» է որ «իր Ազգը» պիտի ենթարկի, նուաճի, սարկացնի, բնաջնջի, բոլոր միւսներին, չէ՞ որ նա ընտրեալը, վեհագոյնը, բարձրագոյնն է եւ միակը արժանի ապրելու, յաւիտենականանալու:

Ժիւլ Ֆերրիի սահմանաւորումով՝ իր Ազգի գրօչը ծածանեցնել ամէն կէտի վրայ, ուր որ կարող է, ուր որ իր ոյժը կը պատի» — դա է «Իրաւունքը եւ միանգամայն պարտականութիւնը ամէն ճշմարիտ ազգայնականի»:

Ռուս «ազգայնականը» — Կատկով, Մենշիկով, եւ այլն, — աշխատել են ուտել ոչ-ռուս ազգերին:

Ֆրանսիացի «ազգայնականը» — Դերուլէդ, եւայլն — նպատակ էր դարձրել «Գերման Ազգը» փճացնել:

Տրէյչկէն փաստել է, որ միայն «Գերման Ազգը» ապրելու իրաւունք ունի:

«Թուրք Հանրապետութիւնը» կազմում է՝ «Թուրք-Թուրքերից», «Հայ-Թուրքերից», «Յոյն-Թուրքերից»... Սուլթան Համիդը, Իտտիհատը, Միլլին «Ազգայնական» այդ հասկացողութիւնը ունին.— մի՞յն Թուրք:

«Ազգայնականութիւնը» (nationalisme) Բուրժուազականութեան միջազգային յատկանիշներից մէկն է:

Մենք «Ազգայնական պրոպագանդա» ենք վարել!... Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ձգտել է ստորադասել, նուաճել, ուտել Տաճկին, Պարսկին, Քիւրդին, Լազին, Չերքէզին, Աւշարին, Ռուսին!.

Իրա՞ւ այդպիսի ձգտում ենք ցոյց տուել, — է՞բր, ո՞ւր: Ի՞նչպէս է որ մենք տեղեկութիւն չունինք: Այդ մասին ամենափոքր հետք, նշանացոյց կարելի՞ է գտնել մեր օրգանների եւ հրատարակութիւնների մէջ:

«Ազգայնական» ասելով մէկին՝ ազգայնական չի լինիլ. հարկաւոր է մատնանիշել փաստը, նրա սխրած գաղափարը, արտադրած գործը՝ «ազգայնական» ոգւով եւ ուղղութեամբ:

Մեր Կուսակցութիւնը ո՛չ միայն «ազգայնական» չէ եղած, այլ «ազգայնականութեան» դէմ երկարաշունչ կռիւներ է մղած թէ՛ Ռուսաստանում եւ թէ՛ Տաճկաստանում:

«Ազգայնական պրոպագանդա» ե՞նք վարել.— Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարին յանձնարարում ենք անողոտոր աչքերով կարդալ մեր Կուսակցութեան Ծրագրի (Տաճկաստանի) երրորդ մասը:

Էջ 4-րդ, գրուած է.— «Ազգային խնդիրների նկատմամբ՝ պաշտպանել բաղկացուցիչ ազգութիւնների քաղաքական լիակատար իրաւունքները: Ժխտել մէկ Ազգի ստորադասումը միւսին: Ազգութիւնները, որպէս պատմական-անհատականութիւններ ազատօրէն զարգանալու, յառաջդիմելու ամէն պայմաններ պիտի ունենան, առանց ոեւէ սեղմումի մէկի կամ միւսի կողմից:

«Սոցիալական, տնտեսական, քաղաքական ո՛չ մի խոչընդոտ պիտի լինի մի ազգութեան անկաշկանդ յառաջդիմութեան եւ բարգաւաճման առաջ.— այնպէս որ՝ «ազգութիւնների բացարձակ հաւասարութիւնը եւ ինքնորոշման սկզբունքը անձեռնմխելի եւ անժխտելի իրաւունք է համդիսանում»:

«Հնչակ»ի, «Երիտասարդ Հայաստան»ի ու մեր ա՛յլ հրատարակութիւնների մէջ՝ այդ թէզերն են զարդացուել: Մեր Վեցերորդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը (1909) բիւրեղացրեց վերեւ յիշուածները՝ Ծրագրային առանձին մասով:

Ուրիշ երկիրներ եւ այդ երկրների մէջ գործող Սոցիալիստ Կուսակցութիւնների մասին թողնում ենք:

Անցնում ենք Ռուսաստան:

Ռուսաստանի Սոցիալ Դէմոկրատ Բանուորական Կուսակցութիւնից՝ Պլեխանովը, այդ հարցի մասին, առաջները խառնաշփոթ տեսութիւններ է ունեցել, աւելի պաշտպան է եղել ազգա-ձուլման գաղափարին: Թէեւ վերջը —

1915–ին — բոլորովին հակադիր թէզերի վրայ կանգնեց(*)։

Ստեփան Շահումեանի «Սոցիալ Դէմօկրատիա եւ Ազգային խնդիր» գրքոյկն էլ շատ որոշ գծերով չի արտայայտում խնդրի բոլոր կողմերը։ Բազուի մէջ գործող Հայ Մեծամասնականների հրապարակախօսները բացորոշ կերպով խուսափել են այդ հարցին մօտենալուց։ Իրենց լղարիկ գրականութիւնը այդ մասին շատ աղքատ է եղել։

Այդ հարցով լուրջ եւ բազմակողմանի կերպով զբաղուողը եղել է Լենինը, մասնաւորապէս 1913–ից սկսած, անստորագիր յօդուածներով։

Նորերս հրատարակուած «ՀԱՏԸՆՏԻՐ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ՝ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ» գիրքը կը մնայ դասական մի գրուածք՝ Մարքսիստական տեսակէտից։

Գրքի բովանդակութիւնը եւ յօդուածների շարայարութիւնը հետեւեալն է։

1։— «Գործաւոր դասակարգ եւ Ազգային խնդիր»։

2։— «Ազգային կուլտուրական» ինքնավարութեան մասին»։

3։— «Պետական պարտադիր լեզու պէ՞տք է»։

4։— «Կեդրոնական Կոմիտէի 1913–ի Խորհրդաժողովին ընդունուած՝ Ազգային խնդրի տրուած վճռորոշումները»։

5։— «Բնաղատական դիտողութիւններ ազգային խնդրի մասին»։

6։— «Ազգի ինքնորոշման իրաւունքի մասին»։

7։— «Մեծ ռուսների ազգային պարտութեան մասին»։

8։— «Վիճաբանութիւնների ամփոփումը՝ ինքնորոշման մասին»։

9։— «Ռուսաստանի Կոմմունիստ Կուսակցութեան Ութերորդ Համագումարի մէջ արտասանած ճառը։

(*) Տես Սոցիալիզմ եւ Հայրենիք պրակ Բ։—

10։— «Թէզիսների սկզբնական ուրուագիծ՝ ազգային ու գաղութային հարցերի մասին»։

11։— «Կոմմունիստ Միջազգայինի Երկրորդ Համագումարի մէջ արտասանած ճառը»։

Եթէ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը նեղութիւն քաշի, ուշի ուշով կարդայ Լենինի այդ գրածները եւ ապա բարեխղճօրէն համեմատութեան, զուգակշռի մէջ դնի մեր Ծրագրի մէջ արտայայտուած գաղափարների եւ թէզերի հետ, — կը տեսնի որ գրանք նոյնութիւններ են։ Լենինը տարբեր բան չէ ասել՝ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան ծրագրի՝ այդ մասին՝ ասուածից։

Եւ գրանք եղել են իրարուց բոլորովին անկախ, առանց մէկի գրութիւնից միւսը տեղեկութիւն ունենալու։ Մարքսիստը Մարքսիստ է, ուր էլ, ինչ միջավայրի մէջ էլ, որ նա գործելու, արտայայտուելու լինի։

Հարցնում ենք։— Լենինը «ազգայնական պրոպագանդա՞» է վարել։ «ազգայնակա՞նի» է եղել նա։— ո՛չ եւ ո՛չ։

Արդ, երբ մենք էլ արտայայտել, ունեցել ենք նո՛յն այն գաղափարները, ազգային խնդիրների առթիւ, ինչ որ Լենինը, եւ նա ազգայնական չէ։— ապա մեր վարած կուսակցական քաղաքականութիւնը ինչո՞ւ համարուի «ազգայնական» ու մենք էլ լինինք «ազգայնականներ»։— Ինչո՞ւ երկու չափ եւ երկու կշիռ։ Գիտութիւնը երկու երես չունի։

Ո՛չ։

Իրողութիւնն է, որ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը երբէք չէ վարած «ազգայնական պրոպագանդա», նրա անդամները ո՛չ մի ժամանակ եղել են «Ազգայնականներ», այլ համոզուած եւ անվերածելի Մարքսիստներ՝ Հայ իրականութեան եւ միջավայրի մէջ։

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարի՝ մեզ ընծայած «Ազգայնականութեան» դիտողու-

թիւնն էլ աւելորդ, անտեղի դուրս եկաւ, մի բանի չը ծառայեց։

Արդեօք ի՞նչ մի մասնաւոր հեռանկարով առաջնորդուած լինելուն համար է, որ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը մեզ դնում է «Ազգայնական պրոպագանդա» վարողի դերի մէջ, երբ Գ. Միջազգայինի Ներկայացուցչական Մարմինը ո՛չ միայն այդպիսի որակում չի տալիս մեզ, այլ ճիշտ դրա հակառակն է հաստատում՝ իր տուած նախադրեալներով։

Այս օրերիս՝ ո՛չ թէ կուսակցական նեղմտութիւնը պիտի խօսի, այլ լայնախոհութիւնը, աւելի սերտ կերպով իրերահասկացողութեան գալու համար։

Եւ այդ է պահանջում Հայաստանի եւ Պրոլետարիատի շահը՝ պատմական այս օրերիս մէջ։

Ուրեմն, պարզաբանուելու, թիւրիմացութիւնները բառնալու մտքով՝ շարունակենք մեր խօսակցութեան թելը։

Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ունեցել է՝ «խմբապետական գործելակերպի մեթոտներ», ասում է Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը։

Այդ դիտողութիւնն էլ բացարձակապէս անճահ է եւ սխալ։

Մեթոտ կոչւում է այն ճանապարհը, միջոցը, որով մէկը հասնում է մի որոշեալ նպատակի։

Մեր մտքովն անգամ չի անցել «խմբապետական գործելակերպի մեթոտով» հասնիլ մեր Կուսակցական նպատակներին։

«Խմբապետական գործելակերպի մեթոտով» տակտիկական մաս՝ մենք երբէք չենք ունեցել։

Կազմակերպչական տեսակէտով՝ մենք ունեցել ենք, ի պահանջել հարկին եւ Կանոնադրային որոշ տրամադրութեանց համաձայն, խմբապետական ժողովներ միայն, ուրիշ ոչինչ։

«Խմբապետական գործելակերպի մեթոտներ» ասելով՝ Հայ Մեծամասնականները հասկացել, հասկանում են տակտիկական գործունէութեան այն եղանակը, որով մի խմբապետ կամ մի քանի խմբապետներ, ուղած եւ ցանկացած ժամանակին, առաջնորդուելով իրենց անձնական տեսութիւնից, իրենց գլխին են հաւաքում զինուորներ, մարտիկներ եւ նրանց առաջնորդում դէպի կռիւ, դէպի ապստամբութիւն, դէպի յեղափոխական գործունէութիւն։ — Մտածմունքը, խորհելակերպի հիմունքը անարխիստական է, մեթոտը՝ Բլանքիստական։ Այդպիսի «խմբապետական գործելակերպի մեթոտներին», որ բղխում է կազմակերպչական Ապակեդրոնացման գրութիւնից, մենք միշտ հակառակել ենք եւ հարուածել, որպէս գործունէութեան վնասակար եղանակ։

Կազմակերպչական տեսակէտից՝ մենք ունեցել ենք խիստ կեդրոնացեալ գրութիւն։ Համակուսակցական բնոյթ ունեցող, պատասխանատու, լուրջ հետեւանք յառաջացնող ո՛չ մի շարժում, ո՛չ մի գործ կարող էր կատարուիլ՝ առանց Կանոնադրային նախատեսուած բարձրագոյն մարմինների կանխահաճ հաւանութեանը եւ հրահանգին։ Բացառութիւն կարող էին կազմել միայն զուտ տեղական բնոյթ եւ տարողութիւն ունեցող մանր խնդիրները։

25–30 տարի իլլէգալ գործունէութեամբ յեղափոխական գործ վարել Տաճկաստանի, Ռուսաստանի մէջ, — դա դիւրին գործ չէ։

Երրորդ Միջազգայինը, երբ ընդունեց, որ Ամերիկայի Նախկին Կոմմունիստ Կուսակցութիւնը լէգալ հողի վրայ կանգնի՝ գործի, իր պատճառաբանութիւններից մէկն էլ այն եղաւ, որ Ամերիկեան պրոլետարական շարժման գլուխ անցնողները շատ վարժ, ընդունակ չէին իլլէգալ հողի վրայ կանգնելով՝ իրական պրոլետարական մարտական գործ յառաջացնելու՝ կապիտալիզմը տապալելու ասպիճան։

Հաւաքոյթների ազատութիւն չկար. ունէինք Մասնաճիւղեր, — Կ. Պոլիս, Սամսոն, Մարզուան, Ամասիա, Թոքատ, Սեբաստիա, Կեսարիա, Վան, Բագու, Բաթում, Թիֆլիզ, եւայլն, եւայլն — 100ից մինչեւ 1000ի հասնող. ի՞նչպէս կարելի էր բոլոր անդամներին միատեղ բերել եւ Կուսակցական գործ կատարել: Իւրաքանչիւր տասնեակ ունէր իր խմբապետը եւ խմբապետները միասին գալով՝ Վարչութեան հետ ժողովի էին նստում եւ իրենց գործերը վարում: Տուեալ խումբի մէջ գտնուողը՝ բացի իր խմբի անդամներից եւ խմբապետից՝ ուրիշ եւ ո՛չ մէկ ուրիշին ճանաչելու իրաւունք ունէր: — Եւ սա, սովորական մտքով հասկացուած, «խմբապետական գործելակերպի մեթոտ» չէ: Մեր «խմբապետական ժողովը» կազմակերպչականի հետ է գործ ունեցել, կազմակերպչական մասին է վերաբերել:

Իսկ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան կատարած մանր կռիւները եւ ցոյցերը (Կ. Պոլիս, Փոքր Հայք, Սասուն, Վան, Կիլիկիա, Արաբկիր, Սեբաստիա, Կեսարիա, եւայլն, եւայլն) — դրանք սկզբնական անհրաժեշտ տարրեր էին զանգուածային ընդհանուր շարժումների հասնելու համար: Եւ ո՞ր երկրի մէջ կատարուած յեղափոխական շարժումը այդ սկզբնական փուլերից չի անցել՝ որոշեալ եզրակացութեան, յառաջադրուած նպատակին հասնելուց յառաջ:

Մանր կռիւների եւ ցոյցերի շրջանը այլեւս անցած լինելով, 1896–ից մենք ընդգրկեցինք Ընդհանուր Ապրատամբութեան գաղափարը:

Մեր Կուսակցութեան գաղափարը չը պիտի անենք. բայց արդարադատ լինելու համար՝ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը շատ մեծ դժուարութիւն չը պիտի քաշէր, եթէ Երեւանի գրադարանը երթար եւ այնտեղից ձեռք բերէր մեր Ներքին Կանոնագիրը, տեսնելու համար թէ իր հասկացած «խմբապետական գործելակերպի մեթոտի» մասին, այնտեղ որ եւ է տրամաբանութիւն կա՞յ, եւ ի՞նչ է եղել մեր «խմբապետական ժողովների» բնոյթն ու նպատակը:

«Խմբապետական գործելակերպի մեթոտ»ի դիտողութիւնն էլ գլխովին սխալ է՝ մեր Կուսակցութեան հասցէին:

4.

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը՝ սիրաբ լցուած մարդու պէս՝ փոռոխ է, որ թափում է մեր Կուսակցութեան հասցէին: Իր հոգեկան տագնապը շատ ցայտուն է:

Շարունակենք, եւ է՛լ աւելի լաւ կը տեսնուի այդ:

Դիտողութիւն եղած է իր կողմից, նա՛եւ, թէ՝ «Հընչակեան «Սոցիալիզմը» ըէալ յեղափոխական գործօն չի եղել»:—

Վերլուծենք այդ դիտողութիւնը:

Նախ՝ մեր Սոցիալիզմը որակած է չակերտաւոր Սոցիալիզմ — որոշ է թէ դա ի՞նչ հոգւոյ արտայայտութիւն է: Քարտուղարը, այստեղ, Կոմինտերնի Գործադիրի Նախագահութիւնից աւելի բարձր դիրքի վրայ է դնում իրեն եւ հէնց դրա համար էլ իր որակիչը դառնում է աւելի քան կասկածելի:

Եւ յետոյ՝ մոռնալով իր ասածը, որ մեր Սոցիալիզմը չակերտաւոր է, ուզում է որ չակերտաւոր այդ սոցիալիզմն էլ «ըէալ յեղափոխական գործօն» եղած լինէր. թէ՝ եւ չակերտաւոր սոցիալիզմը երբէք չի կարող լինել «ըէալ յեղափոխական գործօն»: Մտքի ապակեղրոնացում, կիրք կայ. ուստի իրարու հակասող երկու մտքեր քով քովի դրուելով՝ ձեւակերպուել է անիմաստ նախադասութիւնը:

Եթէ մեր չակերտաւոր սոցիալիզմը «ըէալ յեղափոխական գործօն» չի եղել. — ասել է թէ, դիտող Քարտուղարը լուսեւոյն ընդունում, զէթ, որ նա եղել է տեսական «յեղափոխական գործօն»:

Պատասխան։

Մեր Սոցիալիզմը չակերտաւոր չի եղել. նա եղել է Գիտական Սոցիալիզմ։— *եւ այդ ընդունել են շատ հեղինակաւոր հաստատութիւններ եւ Քարտուղարի ուսուցիչներն իսկ։ Հետեւաբար իր խօսքը դառնում է աւելի քան չակերտաւոր։*

Մեր սոցիալիզմը եղած է իրականապէս *յեղափոխական գործօն։ — Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ոչ միայն յարել է, այլեւ գործօն դեր կատարել Ռուսաստանի սոցիալիստական յեղափոխական շարժումների մէջ՝ սկզբից մինչեւ վերջ։ Դրա շատ աղօտ արտացոլացումը կայ նոյն իսկ «Նորք»ի մէջ, թիւ 2։*

Եթէ մեր սոցիալիզմը «բէալ յեղափոխական գործօն» եղած չը լինէր, նա չէր յարիլ Պրոլետարական Յեղափոխութեանը։ Եթէ յարած է — եւ դա անտարակուսելի ու անառարկելի է, ընդունուած մի ճշմարտութիւն — ապա այդ ասել է, որ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը մի քիչ շատ եւ աւելորդ եռանդ է ցոյց տալիս։

Ուրիշ փաստ։

Կարդանք Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան նամակը — 7 Նոյեմբեր 1922, թիւ 569–ը — ուղղուած Ամերիկայի Շրջանի մեր Վարիչ Մարմնին։

Գրուած է։— «Հնչակեան Կուսակցութիւնը Հայաստանում եւ Վրաստանում պաշտօնապէս կառավարութիւնների կողմից ճանաչուած է, լեգալիզացիայի ենթարկուած եւ ազատ գործելու համար հարկ եղած գրաւոր արտօնագրեր տրուած»։

Երբ Հայաստանի եւ Վրաստանի կառավարութիւնները «պաշտօնապէս» ճանաչել եւ լեգալիզացիայի էին ենթարկել մեր Կուսակցութիւնը, — ասել է թէ նրա սոցիալիզմը չէր կարող լինել չակերտաւոր եւ ո՛չ էլ ոչ–«բէալ

յեղափոխական գործօն»։ — Մասնաւոր ուշադրութիւն նամակի թուականին։

Կեդրոնական Վարչութեան նոյն այդ նամակը շարունակում է։— «Կեդրոնական Վարչութիւնս՝ Կովկասեան ընկերների համաձայնութեամբ՝ յատուկ մի ընդարձակ եւ հիմնաւորուած դեկլարացիայով դիմել է Երրորդ Կոմմունիստական Ինտերնացիոնալի 4–րդ Կոնգրէսին եւ իւր կողմից երկու ընկերների պատուիրակներ է նշանակել դեկլարացիան ներկայացնելու եւ զեկուցումներ տալու համար։ Մեր ցանկութիւնն է պաշտօնապէս ընդունուիլ Երրորդ Ինտերնացիոնալի մէջ, պահպանելով մեր Կուսակցութեան ինքնուրոյնութիւնը մի շարք պատճառներով, որոնց հետ համաձայն են նաեւ Կոմմունիստ ընկերները»։

Նամակը գրուած է Թիֆլիսից, 7 Նոյեմբեր 1922, ունի 569 թուահամարը. ստորագրուած է Կեդրոնի ատենապետի եւ ատենադպրի կողմից՝ վաւերացուած՝ կնիքով։

Կոմմունիստ Միջազգայինի Գործադիրի Նախագահութեան պատասխանը գիտենք ի՞նչ է եղած։— մեր Կուսակցութեան ազգամիջեան կազմակերպչական սիստեմը արգելք է եղել մեր ընդունուելուն եւ բանաձեւութիւնները շարունակւում են։

Բայց առանձին ուշադրութեան արժանի կէտն այն է, նամակի այդ մասի մէջ, որ Հայաստանի եւ Վրաստանի Կոմմունիստ Կուսակցութիւնների մէջ կան Կոմմունիստ ընկերներ, *որոնք, նոյնպէս, ցանկանում են, որ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը պահի իր* «ինքնուրոյնութիւնը մի շարք պատճառներով»։

Այդ իրողութիւնը շատ վաղուց մեզ յայտնի էր։ Գիտէինք եւ այն՝ որ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան մէջ, մասնաւորապէս, կային Կոմմունիստ ընկերներ էլ, որոնք ո՛չ միայն չէին ցանկանում, որ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը պահէր իր «ինքնուրոյնութիւնը մի շարք պատճառներով, այլ նրանք աշ-

խաւում էին ամէն կերպ մեր ընկերներին հալածել, Կուսակցութիւնը անանբողջականացնել, տարրալուծել: Եւ այս վերջին շարքի Կոմմունիստների մէջն է գտնւում Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը... հիմա այլեւս իր հոգու խաղացքից մեզ ո՛չինչ անծանօթ չի մնում. իր դիտողութիւնների արժէքը հիմայ է՛լ աւելի պարզւում է:

Վրաստանի Սոցիալիստ Խորհրդային կառավարութիւնը ո՛չ միայն մեզ գործելու ամէն ազատութիւն էր տուած, այլ եւ յատուկ շէնք-կեդրոնավայր:

Ռուսաստանի Սովիետական կառավարութիւնը եւ ո՛չ մի ժամանակ, եւ ո՛չ մի պարագայի տակ՝ ամենաթեթեւ ատոիճանով անգամ՝ խէթ աչքով նայեցաւ մեր Մասնաճիւղերին եւ ընկերներին — նոյնը՝ մասնաւորապէս Ուկրայինիայի մէջ — այլ նրանք երթեւեկութեան լիակատար ազատ իրաւունք ունէին՝ բաւական է որ ներկայացնէին մեր Կուսակցութեան պաշտօնական վկայականը:

Դառնանք, նոյից, մեր կէտին:

Մեր Կուսակցութեան Սոցիալիզմը «բէալ յեղափոխական գործօն չի՞ եղել.— կ'ուզէինք որ մեր հակառակախօս «Կոմմունիստները» յառաջ քաշէին, մատնանիշէին մի դէպք, մի իրողութիւն, որ մինչեւ 1914-ի Օգոստոս 4-ը, մինչեւ համաշխարհային վերջին պատերազմի յայտարարութիւնը, նախկին Սոցիալ Դէմօկրատ Բանւորականները (Բոլշեւիկները) եւ այժմեան Կոմմունիստները որ եւ է սոցիալիստական գործ կատարած լինէին Բագուի, Բաթումի, Թիֆլիզի մէջ՝ առանց մեր Կուսակցութեան մասնակցութեանը: — Չկայ Սոցիալիստական այդպիսի եւ ո՛չ մի դէպք, եւ ո՛չ մի իրողութիւն:— Իսկ մենք՝ մէն մինակ՝ սոցիալիստական այդպիսի գործեր կատարել ենք՝ հէնց այդ քաղաքների, մասնաւորապէս Բագուի, եւ Բաթումի մէջ:

Բագուի մէջ, 1918-ին, տեղի ունեցած Սոցիալիստական շարժումները եւ գործերը առանց մեր ընկերների եւ

մասնաճիւղերի աջակցութեա՞նն են եղել.— ո՛չ: Մենք էլ բերել ենք մեր բաժինը:

Ուրիշը:

1906-1907-ի, Սոխումի շրջանում ապրում էին մօտ 15,000 Հայ գաղթականներ. սրանք ունէին իրենց ծխախոտի տնտեսութիւնները: Փոխարքայի տեղակալ Մալամայի յատուկ աջակցութեամբ եւ հրամանով՝ այդ 15,000 գաղթականները նոցից Տաճկաստան պիտի քշուէին, Սուլթան Համիտի Եաթաղանի տակ ապրել-կոտորուելու համար: Այդ աշխատող ձեռքերի առաջ կանգնած էին միջազգային գիւղական տզրուկները: Ո՞ր Կուսակցութիւնն էր որ Մալամայի հրամանագիրը պատռեց եւ թոյլ չը տուեց, որ այդ 15,000 Հայ գաղթականները իրենց տընտեսութիւնները լքեն եւ սահմանից անցնելով՝ մահուան ընդառաջեն: Եւ այդ շրջանի աշխատաւորներն են, որ այսօր աջդասարերում են Հայաստանի ծխախոտի մշակութիւնը: Մեր այսօրուայ «Կոմմունիստ» հակառակախօսները ո՞ւր էին այդ ժամանակ, իրենց Պրօլետարական, Միջազգային «բէալ յեղափոխական» սոցիալիզմը ինչո՞ւ յառաջ չեկաւ, չը գործեց: Է՞ր դա սոցիալիստական, թէ՞ ո՛չ:

Ցարիզմը՝ Թաթար բէգերը ձեռք առնելով՝ հոգաներ էր մղում Հայ աշխատաւորութեան դէմ՝ կոտորելու, անհետելու նպատակով. այսօրուայ մեր «Կոմմունիստների» «բէալ յեղափոխական» սոցիալիզմը ինչո՞ւ չերեւցաւ այդ օրերին, չէ՞ որ կոտորւում էր Հայ Պրօլետարիատը, Հայ գիւղացին, նոյնպէս եւ Թաթար պրօլետարիատը, Թաթար գիւղացին: Մեր «բէալ յեղափոխական» սոցիալիզմը երեւեց, իր դերը կատարեց, փրկեց ամբողջ աշխատաւորութիւնը՝ առանց ցեղի եւ ազգի խտրութեան. — հարիւրաւոր շնորհակալական համախօսականներ ունինք Թաթար գիւղացիներից եւ աշխատաւորներից: Մեր հակառակորդները, այդ ժամանակները (1904-1906) չը

կայ՞ն, թէ՞ իրենց «բէալ յեղափոխական» սոցիալիզմը չուզեց գործել...

Ակամայ խոստովանութիւն: Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը մի ակամայ խոստովանութիւն է անում:

«Մայիսեան Ապստամբութիւնը» իր յօդուածի մէջ («Նորք» թիւ 2) գրում է.— «Տարօրինակ է ինքնին, որ յետամնաց Հայաստանում Կոմմունիստ պրոպագանդան ու գործը ընդամէնը մի կամ երկու տարուայ կազմակերպչական աշխատանքի եւ յեղափոխական պայքարի հետեւանքով կարող էր պետական նոր մեքենայի դեկավար դարձնել Հայաստանի բանուոր դասակարգը, տալ նրա ձեռքը երկրի շահագործող աշխատաւորութեան սոցիալ քաղաքական նակատագրի տնօրինութիւնը»:

Անշուշտ «տարօրինակ» է:

Բայց այդպիսի դէպքերում «Տարօրինակ» ոչինչ կայ, եւ շատ դիւրին էլ բացատրելի,— եթէ պատմագիրը ընդունի, որ պատեր, պարիսպներ են լինում, Երիքովինի նման, որոնք իրենք իրենց՝ յանկարծուստ փլչում են...

«Տարօրինակ» ոչինչ կայ, երբ պատմաբանը գրում, անցնում, հաղորդում է թէ ի՛նչպէս Բուդդայի ընչացքից արձակուող կայծերը համատիւռ կայծակների ու փայլակների են վերածւում, ու մի ակնթարթում ամբողջ աշխարհը՝ Աբեւելքից Արեւմուտք, Հիւսիսից Հարաւ՝ լուսաւորում:

Ծովը ճեղքւում է, ջրէ պարիսպներ են գոյանում եւ ընտրեալ ժողովուրդը անցնում է, որպէս ցամաքի վրայ... Ասում է «Պատմուածքը»: Ջուրը դինիի է փոխւում. մէկ նկանակը հազարաւորներ է կերակրում... հաւատացնում է «Պատմագիրը»:

Եթէ այդպիսի «Պատմաբանների» մեթոդով վերլուծենք իրողութիւնները՝ այդտեղ «Տարօրինակ» ոչինչ չի լինիլ:

Իսկ եթէ պատմութեան գիտական մեթոդը ձեռք առնուի՝ այդ «Տարօրինակը» շատ շուտով օրինական, բնականոն, նորմալ կերպով դուրս կը գայ:

Անշուշտ մէկ տարուան ընթացքում այդպիսի տարօրինակութիւններ չէին կարող կատարուել «մեշչանական», «յետամնաց» Հայաստանում: Բայց ինչքա՞ն բնական եղած պիտի լինէր, եթէ առնուէր իրերի յաջորդական զարգացման փուլերը, ասուէր որ այդ «յետամնաց», «մեշչանական» Հայաստանում շա՞տ վաղուց, Հայ Կոմմունիստների երեւալուց շա՞տ առաջ, քարոզուել, տարածուել են Գիտական Սոցիալիզմի սկզբունքները եւ այդ ուղղութեամբ էլ զանգուածային շարժումներ տեղի ունեցել:

Եթէ անաչառ պատմագիրը այդ ասէր, եւ աւելցնէր, որ շատ երկար տարիներ շարունակ, այդ վայրերում սոցիալիստական «բէալ յեղափոխական գործօն» է եղել Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը,— ապա ասուած կը լինէր ճշմարտութիւնը եւ «Տարօրինակ» երեւոյթի կերպարանքը ինքնին կը չքանար:

Եւ պատմութիւնը այդ կ'արձանագրի, կը վաւերացնի: Բաւական է:

Անցնենք սահմանից միւս կողմը, Տաճկաստան:

Մանիսա, կտաւ գործող գործաւորները գործադուլներ էին անում,— հաւաքում էին իրենց կկոցները՝ տանում, դնում գործատիրոջ դռան առաջ — դա էր գործադուլի ձեւը, Սուլթան Համիտի ժամանակ: 15–16 ժամ աշխատող եւ չնչին աշխատավարձ ստացող այդ գործաւորները (Արարկիր, Մանիսա, Եւայլն) ժամերի կրճատում եւ աշխատավարձի յաւելումներ էին ստանում՝ շնորհիւ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան «բէալ յեղափոխական գործօն» լինելու սոցիալիզմին.— Յեղափոխական Մարքսիզմը տուժե՞լ, թէ՞ վաստակել է այդտեղ:

Ատարազարի, Պարտիզակի, Եւայլն, Եւայլն, մետաքսի գործարանների մէջ աշխատողները առողջապահական

դժոխային պայմանների մէջ էին գտնուում, նրանք գործում էին 15–16 ժամ, մի քանի դուրուչ ստանալով. շահագործումը հասած էր իր գագաթնակէտին. — գործաւորները շատ ու քիչ տանելի պայմաններ ունեցան՝ շնորհիւ մեր Կուսակցութեան միջամտութեան, որի պատճառով մի քանի անգամ ընդհարում ունեցանք Իտիհատական կառավարութեան հետ.— «բէյալ յեղափոխական» սոցիալիստական «գործօն» եղե՞լ է մեր Կուսակցութիւնը, թէ՞ ո՛չ:

Իսկ թէ սոցիալիստական ի՛նչ գործեր ենք կատարել Մարզուանի, Սամսունի, Սեբաստիայի, Կեսարիայի... մէջ, այդ մասին բաւականին յիշատակութիւններ կան «ՓՈՔՐ ՀԱՅՐԻ ՑԻՇԱՏԱԿՆԵՐ»ի մէջ:

Սալոնիկի մէջ՝ Իտիհատի «տնտեսագիտութեան» տեսարան Զավիդ բէյի խօսած հակասոցիալիստական ճառի ազդեցութիւնը ջնջող, գլխիվայր բերողը եղաւ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Տաճկաստանի օրգան «Նոր Աշխարհը»:

Այդ մասին շա՞տ ասելիքներ կան. բայց թողնում, անցնում ենք:

Ո՛չ: Իրողութիւնները դալիս, անտարակուսելի կերպով վկայում, հաստատում են, որ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Սոցիալիզմը հայ իրականութեան, իր գոյծունէութեան ապարէզ եղող բոլոր շրջաններում, եղել է «բէյալ յեղափոխական գործօն». համոզուելու համար՝ հարկաւոր է անկողմնակալ ոգի, անպղտոր միտք, ինչոր, դժբախտաբար, կատարելապէս բացակայում է Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարի մէջ:

5.

Գրաւոր թէ բերանացի վիճաբանութեան, հակառակախօսութեան ժամանակ՝ ոչ–յանձնարարելի, խօսքից ուղղակի խուսափելու, դիմացինին դէթ ժամանակաւորապէս հաղուածելու մի ձեւ, մեթոտ կայ.— տալ իր հակառակախօսին յատկութիւններ որ նա իրօք չունի, վերագրել նրան արարքներ, որոնց մէջ նա չի գտնուել, եւ ապա պահանջել որ նա ինքնարդարացում կատարի:

Այդ արուեստի մէջ մասնագէտներ են Դաշնակցական գործիչները եւ հակառակախօսները: Նրանք՝ իրենց հակառակորդների եւ հակառակորդների նկատմամբ՝ «դօկումէնտների» մասնաւոր տրցակներ ունին, որ իրենք են թրխել, դարբնել. եւ ահա՛, տեղ եկած ժամանակին, անմիջապէս առաջ են բերում այդ «դօկումէնտները» եւ պահանջ դնում, որ իրենց հնարածների դէմ հակառակ կողմը խօսի, ինքնապաշտպանութիւն ու արդարացում կատարի:

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը, եթէ Դաշնակցութենէ կոչեցեալ չէ ի Կոմմունիստութիւն,— ապա նրանց չրջանում շատ է ապրել, ուստի եւ ազդուել է. այդ երեւում է բանակուելու իր ձեւից:

Հետեւեալը հաստատում է մեր դիտողութիւնը իր մասին:

«Ցարելով Սոցիալ Դէմոկրատիային՝ Հնչակեան մարմինները ենթարկուել են շարունակ Մենշեւիկեան դիրեկտիւներին», գրում է.

Տեսնենք թէ իր այդ դիտողութիւնը ո՛րքան համապատասխան է իրականութեան. լուսաբանունք:

Նախ՝ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը «յարել է» ա՛յն Սոցիալ Դէմոկրատական հասկացողութեան, որ հոմանիշ է եղել Մարքսիզմին, Գիտական Սոցիալիզմին. եւ նա ա՛յդ արել է շատ առաջ, քան Սոցիալ Դէմոկրատ Մենշեւիկների եւ Սոցիալ Դէմոկրատ Բոլշեւիկների ծնուիլը:

Մենք ո՛չ միայն մեր անցեալը չենք ուրանում, չենք ժխտում, անուանափոխութեան ենթարկում, այլ պինդ կառչում ենք նրանից եւ մեր կեանքը շարունակում։

Պարզ է, ո՛չ 1914–ի Օգոստոսի 4–ից յետոյ եկող Եւրոպական Սոցիալ Դէմոկրատիային էինք մենք յարել, ո՛չ էլ այդ թուականից յետոյ եկող Մենշեւիկ կամ Բոլշեւիկ Սոցիալ Դէմոկրատիաներին։

Նետուած քարը իր նպատակին չի հասնում... որովհետեւ պատմական, ժամանակագրական ճշմարտութիւն չը կայ մեզ վերագրուածին մէջ։

Նախադասութեան հիւսուածքը գրգռիչ է. բայց ազդեցութիւնը անմիջապէս չէզոքանում է, երբ իրականութիւնը առաջ քաշուի։

Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան քարոզարշաւը ուզում է Մենշեւիկների անցեալ եւ ներկայ խօսքի ու գործքի, արարքների ամբողջ բեռը մեր ուսերի վրայ դնի... եւ հէնց այդտեղ է, որ իրականութեան դէմ մեղանչողը ինքն է, եւ ո՛չ թէ մենք։

«Հնչակեան մարմինները ենթարկուել են շարունակ Մենշեւիկեան դիրեկտիւներին»։ Սա հակառակախօսի վերագրումն է.— Փա՞սա, տուիքնե՞ր, — չը կան։ Կեանքը հիմունքներ, եղելութիւններ չի տուել՝ մեզ այդպիսի վերագրումներ անելու համար։

Մեր իրականութիւնը իբենցինի չափ սահմանափակ չի եղել։ Իբենցը եղել է՝ «Երթամ Սամսոն, դամ Տրապիզոն». Բագու–Թիֆլիզ... Հայ իրականութիւնը, որի մէջ գործել ենք, եղել է շա՛տ աւելի ընդարձակ։

Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան պաշտօնական մարմինները գտնուել են Բուլղարիա, Ռումանիա, Ամերիկա, Տաճկաստան, Եգիպտոս, Պարսկաստան, եւայլն, ուր կամ բնաւ կամ հապիւ լսուած է եղել Մենշեւիկների անունը, մանաւանդ համաշխարհային պատերազմից առաջ, հետեւապէս մենք մեր այդ շրջանների Մասնաճիւղերի Վարչութիւնները, Գործադիր Յանձնախում-

բերը, Շրջանային Պատգամաւորական Ժողովները ի՞նչպէս կարող էին «ենթարկուել շարունակ՝ Մենշեւիկեան դիրեկտիւներին», երբ այդ վայրերում Մենշեւիկների հետք անգամ չի եղել։

Եթէ հարցը ձեռք է առնում համակուսակցական աստիճանացոյցով, ապա ցոյց պիտի տար մի հատ արձանագրութիւն՝ մեր որ եւ է Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի, ապացուցանելու համար, որ այնտեղ որոշումներ են անցուել՝ Մենշեւիկների «դիրեկտիւներով շարունակ» առաջնորդուելու։ Մեր եւ ո՛չ մի համակուսակցական՝ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի մէջ այդպիսի «դիրեկտիւների» մասին ակնարկ անգամ կայ. — բնաւ երբէք։

Կա՞յ մի փաստաթուղթ որ մեր որ եւ է շրջանի Կեդրոնական Վարչութիւնը համաձայնագիր կնքած լինէր Մենշեւիկների հետ, — եւ ո՛չ մի, ո՛չ մի ժամանակ։

Ուրեմն՝ համակուսակցական աստիճանացոյցով ո՛չ մի եղելութիւն կայ, որ մեր Դիտողին իրաւունք տար այդպիսի եզրակացութեան յանգելու։

Իսկ եթէ հարցը վերցուում է Կովկասեան աստիճանացոյցով.— այդտեղ մի փոքր կանգ պիտի առնել՝ վերջին խօսքը ասելու համար։

Իրողութիւնն է։

Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը եղել է անկախ, ինքնուրոյն մի Կուսակցութիւն. նա կեանքի յառաջադրած, ներկայացրած խնդիրների վրայ նայել է իր սեպհական աչքերով, իր սեպհական ուղեղով։ Նա եւ ո՛չ մէկին է ենթարկուել, ո՛չ մէկի յետեւից գնացել, — ո՛չ Մենշեւիկի, ո՛չ Բոլշեւիկի։ Նա գնացել է իր սեպհական ճանապարհը. եւ եթէ այդ ճանապարհի մէջ պատահել են ուրիշ ճամբորդներ էլ, նա համերաշխել, համաձայնել է միատեղ քայլելու՝ երբ իր Կուսակցական սկզբունքները այդ թոյլ են տուել։

կեանքը բնազանցական չրջանակ չէ, որ մենք բոլորովին կզգիանայինք՝ յամենայն դէպս եւ ամէն բանի մէջ։

Եթէ բոպէն պահանջել է ժամանակաւոր համագործակցութիւն,— մենք գործօն ազդակներից մէկն ենք հանդիսացել. ուրիշ Կուսակցութիւնների հետ գալով՝ միջկուսակցական գործ ենք կատարել թէ՛ Կովկասի եւ թէ Տաճկաստանի մէջ։

Թիֆլիզի, Բաթումի, Վրաստանի ա՛յլ չրջանների մէջ՝ գերակչիռ դիրք են ունեցել Մենշեւիկները։ Եթէ համապրօլետարական չահը պահանջել է ժամանակաւորապէս միատեղ քայլել,— քայլել ենք, համագործակցել ենք նրանց հետ։ Այս պարագային՝ մէկի կամ միւսի «դիրեկտիւներին» ենթարկուելու խօսք չի կարող լինել. քանի որ կողմերը միասին գալուց առաջ՝ համազօր իրաւունքով ներկայացած գործը քննում եւ ապա որոշում միատեղ քայլել՝ մէկ ոյժ ձեւացնելով.

Նոյնը պատահել է ե՛ւ Բաքուի քաղաքի ու իր չրջանների մէջ։ Այստեղ, Մենշեւիկների վրայ՝ թուական բազմութիւն են ունեցել Բոլշեւիկները։ Գործաւորական իրաւունքների պաշտպանութեան գործը մեզ համագործակցել է տուել Բոլշեւիկների հետ։ Շատ գործարանների եւ գործադուլների մէջ՝ Սօցիալ Դէմօկրատ Բոլշեւիկների հետ միատեղ, միակամ ենք գործել։ Այս մասին առարկութիւն չի կարող լինել. քանի որ իրականութիւն կայ. եւ Սօցիալ Դէմօկրատ Բոլշեւիկները ո՛չինչ, դրական եւ ո՛չ մի գործ կարող էին կատարել — եւ չեն էլ կատարած — առանց Սօցիալ Դէմօկրատ Հնչակեանների աջակցութեան ու համագործակցութեանը։ Համագործակցութեան այսպիսի պարագաներին՝ մէկի կամ միւսի «դիրեկտիւներին» ենթարկուելու մասին խօսք կարո՞ղ է լինել։— Եթէ, նոյն իսկ, կազմուած արձանագրութիւնից երեւայ, որ առաջարկը բերողը եղած է այս ինչ կողմը։ Երկու կողմերին էլ գործաւոր ընկերակիցներ են. տեսնում են զրկանքը, անարդարութիւնը, խօսք անում երկու

կողմերի պատասխանատու վարչութիւններին յայտնել, կուռի պատրաստուել, կազմակերպուիլ... ու գործը սկսում է։

Եթէ իրականութեան նայենք, մենք աւելի Բոլշեւիկների հետ ենք համագործակցել, քան Մենշեւիկների։ Բաքուի, Թիֆլիզի, եւայլն, մէջ պատահած անցքերը մեզ այդ հաւաստիացումն են տուել։

Թիֆլիզի քաղաքային Դումաների ընտրութեան մէջ մենք մասնակցել ենք անկախ կերպով, մեր Կուսակցական սեպհական թեկնածուները ներկայացնելով։

Նոյն դիրքն ունեցանք եւ Պետական Դումաների նրկատմամբ։— պարտուեցանք. բայց մեր առանձին Կուսակցական ընտրատոմսակը ունեցանք։

Պետական Դումաները յուսախաբութիւն բերին,— ենթարկուեցան Բոյքոտի եւ ուժեղ թափով պաշտպանուեցաւ Հիմնադիր Ժողովի գաղափարը։— Սօցիալ Դէմօկրատ Բոլշեւիկները եւ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեանները այդ միեւնոյն թէզերը ունեցան. հակառակ ուրիշ Կուսակցութիւնների։

Բայց հարցը դրանով չի փակւում. լուսաբանուելու համար ուրիշ յենակէտեր էլ կան։

Եւ այստեղ «յետամնաց», «մեշչական», Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարոզչարին հրապարակապէս ասպարէզ է կարդացւում՝ ճշտելու, ապացուցանելու հետեւեալները, քանի որ ասում է թէ՝ մենք «ենթարկուել ենք շարունակ Մենշեւիկեան դիրեկտիւներին»։

— Մենշեւիկները Նոյեմբեր 7-ը պատմական «ոճիր» են համարել եւ համարում են մինչեւ ցարդ։

Մենք կ՚ուզէինք որ ցոյց տրուէր մի տող մեր գրականութիւնից, որով ապացուցուէր թէ մենք էլ այդ մի եւ նոյն թէզն ենք պաշտպանել երբ եւ իցէ՝ երէկ կամ այսօր։ Ո՛չ միայն մեր հրապարակախօսները Նոյեմբեր 7-ը պաշտպանել են, այլ մեր բանաստեղծներն էլ լի զգացմունքով երգել։

— Մենշեւիկները չեն ընդունում պրոլետարական դիկտատուրութիւն ընդհանրապէս. նրանք չեն էլ ուզում լսել պրոլետարական դիկտատուրայի մասին՝ «յետամընաց» եւ «երկրագործական» Ռուսաստանում:

Մեր 38-ամեայ գրականութիւնից մի կէտ կարելի՞ է մատնանիշել, որ մենք դէմ ենք եղել Պրոլետարական Դիկտատուրային՝ որ եւ է ձեւի տակ, երէկ կամ այսօր:

Մենք՝ սկզբունքային տեսակէտից՝ միշտ էլ պաշտպանն ենք հանդիսացել Պրոլետարական Դիկտատուրութեանը. դրա ամենակարճ ապացոյցը այն կարող է լինել, որ Պրոլետարական Դիկտատուրայի գաղափարը որոշ կերպով արտացոլացուած է մեր Ծրագրի մէջ, ուր փոխանակ Պրոլետարական Դիկտատուրայի դրուել է Պրոլետարական Գերիշխանութիւն եզրը:

Ժխտե՞լ, կուե՞լ ենք Պրոլետարական Դիկտատուրայի դէմ՝ այս 5–6 տարիների ընթացքում. չե՞նք պաշտպանել մեր բոլոր շրջաններում, մեր համակուսակցական բընոյթ կրող ամբողջական գրականութեան մէջ:

Սրանք ապացոյցներ են, որ մենք չենք «ենթարկուել Մենշեւիկների դիրեկտիւներին»:

Ուրիշ. մի քիչ յետ երթանք, Մարքսիզմի հասկացողութեան փիլիսոփայական մասը վեր առնենք:

— Մենշեւիզմը քարոզել, պաշտպանել, հիմայ էլ քարոզում, պաշտպանում է այն թէզը թէ՝ պիտի օգնել, որ Ռուսաստանի մէջ կապիտալիզմը զարգանայ իր լրումին հասնի եւ դառնայ Ամերիկայի Միացեալ Նահանգների նման կապիտալիստական մի երկիր, որպէս զի, ապա, իսկական Սոցիալիստական գործ սկսուի: Իսկ մինչ այդ՝ միայն Բաբենորոգչական դեր ունենալ:

Կա՞յ մեր գրականութեան մէջ համանման մի թէզ. — ո՛չ մի ժամանակ: Մենշեւիկների այդ գաղափարը հակա-Մարքսիստական է իր ամբողջութեամբը, եւ մենք չէ թէ չենք բաժանել, այլ նրա դէմ կռուել:

— Հողային լիակատար կեղրոնացում պիտի յառաջանայ՝ ճարտարագործական կեղրոնացման պէս. հողային ծաւալուն պրոլետարիզացիա պիտի ստեղծուի, հողագուրկների էլ պահեստի բանակներ պիտի մէջտեղ գան, — որպէս զի գիւղական-երկրագործական խնդիրներով հնարաւոր լինի զբաղուիլ. իսկ մինչ այդ՝ բացասականութիւն, ձեռնպահութիւն: Մենշեւիկները չը մտան, մտնել չուզեցին գիւղերի, երկրագործական աշխատանք ունեցողների մէջ: Եւ դա էլ ցոյց է տալիս թէ ինչո՛ւ համար գիւղերի եւ երկրագործական արտադրողների հետ գործ ունեցողները՝ քաղաքների մէջ՝ նախընտրում էին յարիլ Մենշեւիկներին աւելի, քան Բոլշեւիկներին:

Ա. Երզնկեանը այդ ուղղութեամբ Կովկասի զանազան շրջանների մեր կազմակերպութիւնների դէմ շատ կրակ է բաց թողել, բայց այդ կրակն էլ շուտով մարել, անհետք է մնացել:

Եզրակացութիւն:

Ճշմարտութիւն չէ. իրականութեան տուեալների համապատասխան չէ, ուրեմն, երբ ասում է թէ՝ Սոցիալ Դէմոկրատ «Հնչակեան Մարմինները ենթարկուել են շարունակ Մենշեւիկեան դիրեկտիւներին»:—

Զենք երկարացնում, անցնենք ուրիշ կէտերի:

6.

«Հնչակեանները գործօն մասնակցութիւն են ունեցել իմպերիալիստական պատերազմին եւ Կիլիկիայի վերջին ապստամբային»:

— Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան քարտուղարը իր այս հաստատումով (assertion) ուզում է վերջին՝ ջախջախիչ մի հարուած տալ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան. նախապէս հաւատալով որ, այլեւս, անվերականգնելի կերպով տապալուած ենք.

Որովհետեւ երբ մի Սոցիալիստ կամ մի Սոցիալ Դէմոկրատ անուն կրող Կուսակցութիւն հաստատուի, որ

«Գործօն մասնակցութիւն է ունեցել վերջին իմպերիալիստական պատերազմին», այլեւս՝ գաղափարական եւ գործնական տեսակէտից՝ նրա բանը վերջացաւ։— Սա է տիրապետող, ընդհանուր, ընթացիկ, կարծիքը։

Մասնաւորապէս Սոցիալիստ Խորհրդային Հանրապետութիւնների Միութեան սահմանների մէջ, «Վերջին իմպերիալիստական պատերազմին գործօն մասնակցութիւն» ունեցող Կուսակցութիւնները նկատւում են՝ «Դաւաճաններ», «Պատեհապաշտներ», «Սոցիալիստ Հայրենասէրներ», «Մարքսիզմը ուրացողներ», «Բուրժուաների գործիքներ», «Շահախնդիրներ», «Պրօլետարիատը ծախողներ», «Պրօլետարիատի գաղտնի թշնամիներ», եւայլն, եւայլն...

Ուրեմն, այդ բոլոր որակականները Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը, լռելեայն, թափում է մեր գլխին՝ իր վերեւ տրուած հաստատումովը։

Երրորդ (Կոմմունիստ) Միջազգայինի կողմից խօսողները մի այդպիսի դիտողութիւն չարեցին մեր բանագնաց ընկերներին եւ իրենց տուած նկատումների մէջ էլ ոչինչ չը մացրին՝ այդ մասին, թէեւ՝ աւելի քան վստահ ենք, որ նրանք էլ գիտէին մեր Կուսակցութեան «գործօն մասնակցութիւնը վերջին իմպերիալիստական պատերազմին։

Երկու թուցիկ դիտողութիւն մեր կողմից և կանցնենք.

Հայաստանի Կոմմունիստ կուսակցութեան քարտուղարը կարո՞ղ է ժխտել այն իրողութիւնը, որ իր ընկերներից էլ շատ շատերը պատերազմական ճակատներին վրայ են գտնուել. ոմանք մինչեւ Վան հասել, զանազան մարտական պաշտօններով։ Եթէ բարի լինինք, կուսակցական հանդամանք չընդունինք իրենց վրայ,— անուրանալին է, որ նրանք «իմպերիալիստական պատերազմին» մասնակցեցան, որպէս Ցարի հպատակներ։ Սա մի կողմ, եւ վերաբերում է իրենց այն դիրքին, որ տարածւում է 1914–ից մինչեւ 1917–ը։

Սարդարապատը, Ղարաքիլիսան... Կատալինեան դաշն էր։ Հին Ատաբլային փոխանորդել էր նոր Իտիհատը։ «Ցանկա–Հայաստանի» Հայութիւնը տասանորդելուց յետոյ՝ նա մտաւ՝ «Ռուսա–Հայաստան»։ լինել–չը լինելու վեհադոյն, վճռական բոպէն էր։ Արդեօք իրենք այդ կուսին չը մասնակցեցան՝ «իմպերիալիստական պատերազմին» մասնակցելու փաստի մէջ չը բռնուելո՞ւ համար....

Մենք այդ պատերազմին էլ մասնակցել ենք, եւ պէտք է որ մասնակցէինք։

Այս կէտը փակենք։

Մենք խսկական «Դաւաճաններ», «Մարքսիզմը ուրացողներ», «Բուրժուաների գործիքներ», «Շահախնդիրներ», «Պրօլետարիատի թշնամիներ» եղած կը լինէինք, եթէ չը մասնակցէինք «իմպերիալիստական պատերազմին»։

Մենք՝ մեր անցեալը, մեր գաղափարաբանութիւնը, մեր սկզբունքները, մեր ազատագրական գործը լքած, ուրացած, ստրուկներ, ռայեաներ եղած կը լինէինք, եթէ մեր Կուսակցական «գործօն մասնակցութիւնը» տուած չը լինէինք։

Եւ հպարտ ենք, ճակատաբաց՝ մարդկութեան, պատմութեան, Պրօլետարական գաղափարաբանութեան առաջ, որ յետ չենք ընկրկել եւ մարտական դիրք ենք ունեցել։

Մենք ահաբեկուողներից չենք, ո՛չ էլ մեր պատասխանատուութիւնից յետ կեցողներ. ինչոր արել ենք՝— արել ենք, եւ լա՛ւ ենք արել։

Հիմայ քա՛ղցր–քա՛ղցր խօսենք Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարի հետ։

Լենինը գրել է.— «Մենք Մարքսիստներս միշտ ընպաստել, աջակցել ենք այն պատերազմին, որ մղուել է հակայեղափոխական մի ազգի դէմ»։ (էջ 102, «Պրօլետարական Յեղափոխութիւնը Ռուսաստանում»)։

Երբ անկողմնակալ մի պատմաբան նկարագրի Արեւելեան խնդրի վերջին փուլերը, պատկերացնի Հայ իրականութիւնը, Հայ ժողովրդի դրութիւնը, նրա քաղաքական՝ տնտեսական, ընկերային կեանքի պայմանները, դընի ա՛յդ կեանքի համադրութիւնը, դանի գործօն ազդակները, ճշտի պատասխանատուութիւնները ու ապա խօսի փաստերի վրայ կանգնած՝ նա անհերքելի կերպով կ՚եզրակացնի որ դեռ 1860-ից, յառաջադէմ, կուլտուրական, յեղափոխական մի ժողովուրդ կուում էր՝ գերազանցօրէն «հակա-յեղափոխական» մի ա՛յլ ազգի դէմ։

Իսկ վերջին «իմպերիալիստական պատերազմի» ժամանակ, մեր առաջը կանգնել էր ո՛չ միայն «հակա-յեղափոխականը», այլեւ Թուրք ազգայնականութիւնը մարմնացնող՝ հրէշածին Իտտիհատը, որի շարունակական նըշանաբանն է եղել Հայերի ամբողջական բնաջնջումը՝ մանաւորապէս Հայաստանից, առանց դասակարգի, եւ հասակի եւ սեռի խտրութեան։

Իտտիհատի դէմ պէ՞տք էր կռուել, թէ՞ ոտքերը-ձեռքերը ծալած անձնատուր լինել... Ու մենք կռուեցանք, եւ պէտք է որ կռուէինք, որովհետեւ «Մարքսիստներ» էինք։

Ուրեմն, եթէ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը ընդունի իր Ուսուցչի՝ Լենինի հաստատումը, այն ժամանակ հարցը շուտով կը փակուի եւ մենք կ՚արդարանանք «վերջին իմպերիալիստական պատերազմի գործօն մասնակցութիւն» տալերնուս համար, եւ պէտք է որ ընդունի, չէ՞ որ ասուած թէ՝ «Ո՛չ է առաւել աշակերտ, քան զվարդապետ իւր»։

Զգում ենք, յարգելի Քարտուղարը հեգնական ժպիտ պիտի արձակի, ասի թէ դա «Հին գլխի» ասած է եւ անմիջապէս ապացոյց բերի թէ՝ շատ յաճախ «Աշակերտը առաւել է քան իր վարդապետը»։— օրինակնե՞ր են պակասում. փիլիսոփայութեան, մարդկային մտածմունքի զարգացման պատմութեան մէջ՝ հարիւրաւոր այդպիսի

օրինակներ կան։ Եւ վերջապէս իրաւունք ունի աւելցնելու. միթէ՞ Լենինը ինքը առաւել չեղաւ քան իր նախկին վարդապետ՝ Պլեխանովը։

Այդ առարկութեան դէմ՝ շնորհալից կերպով գլխարկ ենք հանում յարգելի Քարտուղարի առաջ եւ նահանջում։

Կարլ Մարքսը, 1848-ի Եւրոպական շարժումների առթիւ իր գրած «Հակա-Յեղափոխութիւն» գրքի մէջ՝ ո՛չ միայն դառն խօսքեր ունի այդ ժամանակուայ հակա-յեղափոխական ազգերի եւ ժողովուրդների դէմ, այլ աւելի յառաջադէմ, կուլտուրական, յեղափոխական ազգերին իրաւունք է տալիս այդպիսիների վրայ ճնշում գործ դնել, նրանց իրենց ենթարկելու ասպիճան. օրինակ Ռուսներին եւ Սլաւ ուրիշ ցեղերին։— Լենինը ինքը Մարքսի այդ տեսութեան ու գիրքին հաւանութիւն ունի տուած։

Էնգէլսը, 1859-ին, Գերման ազգային ատելութիւնն է բորբոքում, բոցավառում ընդդէմ Նապոլէոն Գ.-ի եւ Ռուսաստանի Ցարի։ Եւ Լենինը այդ գիրքը գտնում է շա՞տ իրաւացի եւ համապատասխան՝ Պրոլետարական ընդհանուր շահի տեսակէտից։

Եթէ կշիռքի մի թաթի մէջ դրուի Հայ ժողովուրդը, իսկ միւսին Իտտիհատը, կը տեսնուի որ այս վերջինը եթէ ո՛չ մէկ թիզ աւելի, դէթ հաւասար է եղել Նապոլէոն Գ.-ին, Ռուսական Ցարերին եւ 1848-ի «հակայեղափոխականներին»։

Պատերազմի ենք դուրս եկել։ Ահա թէ պատմական ինչ հոսանքի առաջ ենք դուրս եկել։

Որպէս աշակերտներ՝ մենք հետեւել ենք Մարքսի եւ Էնգէլսի ցոյց տուած ճանապարհներին։

Ու նորից առաջ ենք գալիս, ասում Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարին, որ.— «Ո՛չ է առաւել աշակերտ, քան զվարդապետ իւր»։

Մեզ Դիտողութիւն անող Քարտուղարը այս տեղ էլ, գուցէ, ժպիտի սլաքներ արձակի՝ եւ մեզ չուարումի մատնի, որովհետեւ Հեգէլի աշակերտ Կարլ Մարքսը ինքը իր

ուսուցչի դէմ դարձրեց մտածմունքի դիալեկտիկական եղանակը եւ ո՛չ միայն իր վարդապետի «գլխի վրայ կեցած» գաղափարների աշխարհը վայր գլորեց եւ ուղիղ «ոտքի վրայ դրեց», այլեւ ջրեց նրա «Իրաւունքի» հակացողութիւնը, որ մինչեւ այդ ժամանակ «գիտական եւ անառարկելի» էր նկատւում:

Այստեղ էլ նահանջում ենք եւ, նորից, գլխարկի յարգանք մատուցանում՝ յարգելի Բարտուղարին:

Շարունակենք:

Առաջին հարցն է. ի՞նչ է իմպերիալիզմ. ո՞րտեղից է նա գալիս, ի՞նչ ազդակների հետեւանք է նա, ի՞նչ են նրա միտումները.

«— Իմպերիալիզմը կոչւում է աշխարհակալական այն քաղաքականութիւնը, որ ֆինանսական կապիտալը հետապնդում է նոր շուկաներ, հում նիւթեր եւ նոր տարածութիւններ ձեռք բերելու: —

«Ինչպէս որ վագրը չի կարող բուսական կերակրով ապրել. նոյնպէս էլ ֆինանսական կապիտալը ուրիշ ոչինչ չի կարող անել, եթէ ո՛չ հետապնդել նուաճողականութեան, յափշտակութեան, բռնագրաւման եւ պատերազմի քաղաքականութեան»:

Գաղափարները պատկանում են Լենինին. բայց վերեւ տրուած ձեւով խտացնողը Բուխարինն է:

Ընդունելով Բուխարինի խտացումը որպէս աստիճանացոյց, կրկնենք. հարցնում ենք՝

Քանի՞ միլիարդների էր հասել Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան «ֆինանսական կապիտալը», որ նա դուրս գար՝ փնտռէր նոր շուկաներ, ձեռք բերէր հում նիւթեր, աշխարհակալութիւններ անէր, որպէս զի իր «վագրը» միսով կերակրուէր, փոխանակ «բուսական կերակրի»:

Եւ ո՞ր դրամատների մէջն էին դիզուած եղել մեր «ֆինանսական կապիտալները», որպէս զի աշխարհակալութիւնների յետեւից լինէինք, «տնտեսական շահեր» պաշտպանէինք, ուրիշ «ազգերի պրոլետարները» մեր «բուրժուազիային» ենթարկէինք.

Բրիտանական իմպերիալիզմը ուզում էր է՛լ աւելի «Մեծն Բրիտանիա» ունենալ.— այսինքն ամբողջ աշխարհը: Ֆրանսիականը ցանկանում էր է՛լ աւելի ընդարձակ «Մեծն Ֆրանսիա» ունենալ, նոյնը եւ Ռուսականը, Գերմանականը.— Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութի՞ւնն էլ այդ տեսակի իմպերիալիզմի էր ձգտել. մեր «կապիտալիստական իմպերիալիզմն» էլ այդպիսի ձգտումներ էր ցոյց տուե՞լ.— Ո՞ւր, ե՞րբ, իր ո՞ր գործքով, ո՞ր խօսքով:

Եւ մեր այդ «իմպերիալիզմով» ո՞ր ազգի պրոլետարական շահերին էինք սպառնում:

Փտած, զառամած ո՞ր բուրժուազիային ուզում էինք պաշտպանել. ո՞ր «փոքր ազգերին» ցանկանում էինք մեր լծի տակը առնել:

Ո՞ր երկրի արտադրող, աշխատաւոր դասակարգին թշնամութեան մէջ լողացրինք:

Եթէ Հայաստանի Կոմունիստ Կուսակցութեան քարտուղարը բաւականաչափ տուեալներ արդէն հաւաքել, դասաւորել է եւ դրական, ջախջախիչ պատասխան տար մեր դրած հարցերին՝ ամէն ինչ տեղն ու տեղը մատնանշելով,— այն ժամանակ, արդարեւ, հաստատած կը լինէր, որ մենք «իմպերիալիստներ» ենք եղել եւ որպէս «իմպերիալիստներ» էլ մասնակցել ենք «վերջին իմպերիալիստական պատերազմին»:

«Գործօն մասնակցութիւն ենք ունեցել իմպերիալիստական պատերազմին». — եթէ անաչառ դրիչը խօսէր, եւ ո՛չ թէ կուսակցական հակամարտութիւնը,— ապա այդ հաստատումին պիտի ընկերանար «ինչո՞ւ»ները, «ի՞նչպէս»ները եւ մեր հետապնդած նպատակները:

Խօսողը կուսակցական կիրքը, նեղմտութիւնը, անհամբերողութիւնն է, որ պատմական եղելութիւնները աղաւաղուած ձեւով է ներկայացնում:

Մի կէտ էլ, եւ մեր պատասխանը կը տանք։

Հեգէլեան թէօրիաների ներշնչման տակ՝ պատերազմների պատմութեան մասին հեղինակութիւն ճանչցուող՝ Կարլ Ֆոն Կլովիցը գրում է,— «Ամէն ոք գիտէ, որ ազգերի եւ կառավարութիւնների միջեւ եղած քաղաքական յարաբերութիւնների հետեւանքն է պատերազմը... Մենք կրկնում ենք, որ պատերազմը ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ քաղաքական միեւնոյն յարաբերութիւնների շարունակութիւնը՝ միայն ուրիշ միջոցների ներմուծումով»։

Լենինը այդ կարծիքը հիմնապէս բաժանելով, ասում է որ այդ միեւնոյն կարծիքն են ունեցել ե՛ւ Մարքսը, ե՛ւ Էնգէլսը, որոնք, նոյնպէս, «Պատերազմը համարել են զանազան չահագրգիռ պետութիւնների եւ զանազան ազգերի տարբեր դասակարգերի քաղաքականութեան շարունակութիւնը, տուեալ մի ժամանակամիջոցում»։

Այո՛, մենք վերջին պատերազմին մասնակցեցանք, որովհետեւ այդ «նոր միջոցով» ստիպուած էինք շարունակել այն «քաղաքականութիւնը», որ ունէինք։

Հայաստանի Կոմունիստ Կուսակցութեան քարտուղարը մետաֆիզիքական մթնոլորտի մէջ էր ապրում, թէ՞ իրականութեան։ Արդեօք Տաճկաստանի մէջ գտնուող Հայ ժողովրդի վիճակը ա՞յդքան անծանօթ է եղել.

Պատերազմին մասնակցեցանք։

Հիմայ Քարտուղարը թող համբերութիւն ունենայ, ուշի ուշով կարդայ՝ այս վերջին պատերազմի նախօրեակին բաց թողած՝ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան Մանիֆեստը. թող կարդայ, եւ ո՛ր կէտի հետ որ համաձայն չէ, ձայն բարձրացնի, ապացուցանելու համար թէ՝ ի՞նքն է եղած Մարքսիստը, պրոլետարականը, թէ՞՝ մենք.

Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան արձակած Մանիֆեստի գլխաւոր մասերը՝ 1914, Օգոստոս 4–ի պատերազմի նախօրեակում։

«...Մենք սարսափելի ենք դատում ամէն պատերազմ, որ նկատում ենք իբրեւ ոճրագործութիւն եւ քաղաքակիրթ մարդկութեան համար ամօթալի։ Մենք կրում ենք մեր սրտում անհաշտ եւ անսահման ատելութիւն դէպի այն պատերազմները, որոնց նպատակն է յափշտակութիւն, նուաճումն եւ մի ժողովրդի տիրապետութիւնը միւսի վրայ։ Մենք բուռն սաստկութեամբ դատապարտում ենք ամէն միտք՝ ազգերի միջեւ ընդհարման։ Եւ հէնց այդ պատճառով՝ մեզ հարկադրուած ենք տեսնում հարցնել թէ՝ Թիւրքիայի ներքին վիճակը իրապէս խաղաղութե՞ան վիճակ է արդեօք։ Կարո՞ղ ենք արդեօք ասել, որ ամբողջ դարերի, եւ մանաւանդ վերջի դարու ընթացքում, Թիւրքիայի՝ այսպէս կոչուած՝ ներքին խաղաղութիւնն արդարեւ խաղաղութիւն է մասնաւորապէս Հայ ժողովրդի վերաբերութեամբ։ Չէ՞ կրում արդեօք նա, այդ ժողովուրդը, միշտ եւ անդադար, սարսափելի հալածանքներ, որպիսին կարելի է գործադրել միայն զէնքի ոյժով նուաճուած մի ժողովրդի վրայ։

«Ինչո՞վ է նրա ներկայ, եւ ամէն ժամանակեայ, վիճակը տարբերւում այն վիճակից, որ ստեղծւում է պատերազմից յետոյ։ Ցարատեւ պատերազմ չէ՞ արդեօք, իր աւերներով ու կոտորածներով, որ հրահանգել ու կատարել են, դարերի ընթացքում, Թիւրք կառավարութիւնները ընդդէմ անպաշտպան Հայ ժողովրդի։ Եւ, հետեւաբար, բնական չէ՞ արդեօք, որ, յանուն մարդկութեան եւ յանուն ժողովրդների ազատագրութեան, նոյն իսկ նրա՛նք, որոնք առաւելապէս ատելութիւն ունեն դէպի պատերազմները եւ ցանկանում են խաղաղութիւն, կոչուած լինեն բարձրացնելու իրենց ձայնը՝ իրերի այդօրինակ դրութեան դէմ։ Աղդարացի չէ՞ արդեօք, որ նրանք բողոքեն ընդդէմ այդ յարատեւ պատերազմի Հայաստանում, պատերա՛զմ, որի նպատակն էր բնաջինջ անել մէկ աշխատասէր, կուլտուրական ու կորովի ազգ....

«Մեր սկզբունքով՝ մենք դատանող ենք ժողովրդների

եղբայրութեան, նրանց ազատ զարգացման խաղաղութեան մէջ, որ անհրաժեշտ պայմանն է նրանց առաջխաղացութեան դէպի մարդկութեան ամբողջական ազատագրութիւն, դէպի իրագործումն արդարութեան ու հաւասարութեան իդէալի, դէպի որը ձգտում են աշխատանքի ու մտքի բոլոր կենդանի ոյժերը քաղաքակիրթ աշխարհում։ Եւ հէնց այդ սկզբունքների տրամաբանութեամբ է, որ Հայ ժողովրդի ազատագրութիւնը ներկայանում է հիմնական անհրաժեշտութիւն,— ազատագրութիւն... մի կործանուող Թիւրքիայի բռնապետական ու տմարդի լուծից... Մենք ո՛չ մի թշնամութիւն չունինք Թիւրք ժողովրդի դէմ, որ ինքն իսկ Օսմանեան կառավարութիւնների մի զոհն է։ Բայց անգիտակ իր վիճակի՝ Թուրք ժողովուրդը հնազանդութեամբ ենթարկւում է իր տխուր բախտին եւ նոյն իսկ դառնում է կառավարիչների ձեռքին ֆանատիկոսութեան մի զէնք՝ ուղղուած գեավուրների դէմ .... Եւ Հայ ժողովուրդը, իբրեւ ճնշուած ժողովուրդ, կարողացաւ հասկանալ իր սուրբ իրաւունքը, իրաւունք յեղափոխութեան՝ իր սեպհական ազատագրութեան նպատակով...»

Մանիֆէստը պաշտպանում է՝

ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ։

Համարեա՛յ թէ բոլոր երկրների գլխաւոր սոցիալիստական եւ դէմոկրատական թերթերը ճանաչեցին Մանիֆէստի մէջ դրուած դաղափարների արդարացիութիւնը, եւ արձագանգ տուեցին։

Ի՞նչ ունի սրան ասելիք՝ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը։

Պատերազմի նախօրեակին, օրական ամենաքիչը, միջին հաշուով, 10–20 Հայ էր սպանւում Հայաստանում։ Կ. Պոլսում՝ Ազգային Ժողովի մէջ, ամենապահպանողական երեսփոխաններն անգամ «բնաջնջման ձգտումով» որակեցին իրերի այդ դրութիւնը։

Ու դալիս են հարցերը.

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը ճանաչո՞ւմ, ընդունո՞ւմ է ժողովրդների ցեղափոխական, Ազատամրական Իրաւունքը։

Ճանաչո՞ւմ, ընդունո՞ւմ է Ինքնապաշտպանութեան Իրաւունքը։

Եթէ այո՛,— այլեւս ասելիք չունինք, ինքը կը մտնի մեր դիրքի, մեր բանակի մէջ. իսկ եթէ ո՛չ՝ ապա ինքը ամէն բան կարող է լինել, բացի Մարքսիստից եւ Կոմմունիստից։

Այո՛, մենք մտանք պատերազմի մէջ, եւ պէտք է որ մտնէինք։

Ռուսական Ցեղափոխութեան՝ «Բոլշեւիզմը նուաճում է» (էջ 286) գլխակարգութեան մէջ — թւում է որ գրիչը Լենինն է — պատմում է թէ ինչպէս Համա-Ռուսական Սովիետների Գործադիր Կոմիտէն խաղաղութեան իր պայմաններից երկրորդը արել էր՝ «ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԹՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ»։

Խաղաղութեան այդ երկրորդ պայմանը՝ Պարիզում կայանալիք Դաշնակիցների Խորհրդաժողովի մէջ՝ պիտի պաշտպանէր Աշխատանքի Նախարար Սկոբելեւը, Համա-Ռուսական Սովիետների լիազօր պատուիրակը։ Ու պատմւում է թէ ինչպէս Կերենսկու «Ժամանակաւոր Կառավարութիւնը» դաղտնի դրդած, հասկացրած է եղել Ֆրանսիական արտաքին գործոց Նախարար Ժիւլ Կամբոնին, որ նրան չընդունեն։ Եւ այդպէս էլ եղաւ։

ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ — պաշտպանում էր Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը։

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ պնդում էր Սոցիալ Դէմոկրատ Բոլշեւիկ Կուսակցութիւնը։

Իսկ Ժամանակաւոր Կառավարութիւնը՝ հարկադրուած լինելով երեսանց ընդունելու Ինքնավար Հայաստանի գաղափարը, տակից խարդաւանանքներ է յօրինում...

Մեր «իմպերիալիզմը այդտեղ էր հասնում. դրամատների մէջ դիզուած միլիարդների!! հասնող մեր «Ֆի-

նանական կապիտալը» դէպի այդ շուկան, այդ հում նիւթը... այդ կողմն էր գնում՝ նուաճումներ անելու...

Ի՞նչը մեզ ստիպեց «վերջին պատերազմին գործօն» դեր ստանձնել:

Բայց այդ կէտը սերտ կապակցութիւն ունի՝ Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեան քարտուղարի մեր դէմ արձակած մի ա՛յլ, է՛լ աւելի ահաւոր մեղադրանքի դէմ թէ՝ մենք Միացեալ Անկախ Հայաստանի գաղափար ենք պաշտպանել:

Այդ մասին էլ կը բացատրուենք:

Իսկ ինչ որ վերաբերում է Կիլիկիայի մեր «աւանտիւրային», առ այժմս միայն այսքանը ասենք, որ երբ ամէն ինչ յաջողութիւնից յաջողութիւն էր գնում. երբ Բէմալականներին դուրս քշած՝ Անկախ Կիլիկիա էինք յայտարարած ու ձայնը մինչեւ Թիֆլիզ հասած,— այդ ժամանակ Կասեանի խմբագրութեամբ՝ Սոցիալ Դէմօկրատ Բոլշեւիկների թերթի մէջ հրաչունչ մի յօդուած երեւցաւ՝ ներբողելով «Հինաւուրց Մեծ Կուսակցութեան» Կարմիր Դրօշի ծածանումը Տաւրոսի վրայ....

Երբուանի՞ց սկսեց այդ «աւանտիւրան»։— այդ մասին էլ դեռ առիթ կ՚ունենանք անդրադառնալու:

7.

Սոցիալ Դէմօկրատ Հնչակեանների եւ նեղկայ Հայ Կոմմունիստների միջեւ անանցանելի մի «մեծ վիհ» կայ: Այդ «մեծ վիհ»-ը բացող, ներկայացնող ազդակներից մէկն էլ այն է, որ մենք պաշտպանել ենք «ՄԻԱՑԵԱԼ ԵՒ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆ»: Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը այդ կէտն էլ է ներմուծել իր մեղադրական ցանկի մէջ՝ իր արձակած հովուական (pastoral) կոչ-նամակով:

Այստեղ, մի փոքր շեղում:

1908-ի աշնանը, մի օր, Ընկեր Մուրատի հետ անցնում էինք Կ. Պոլսոյ «Իւքէֆ Գալտրրըմ» փողոցով. դընում էինք վարից վեր: Փողոցի ծայրին նշմարուեց բարձրահասակ, թիկնեղ, մօրուքաւոր մի Թուրք՝ խոջայի փաթթոցով, որ վերեւից վար էր գալիս:

Ընկեր Մուրատը ասաց.— «Վար իջնող խոջան Աֆրիկեան Տրիպոլիս աքսորուած «Երիտասարդ Թուրքերից» է, որ մեղանից մի քանի օր յետոյ փախաւ. «զատրիւն միւսլիման» է. տեսնենք ինձ պիտի ճանաչի՞:

Խոջան մօտեցաւ մեզ. Ընկեր Մուրատը ճանապարհը կտրեց, ասաց.— «Սարահլաբ խայր օլսըն, խոջա...» (բարի լոյս, խոջայ)...:

Խոջան, առանց բարեւը առնելու, շիտ-շիտակ կանգնեց, մէջքը ուղղեց, մօրուքը շփեց, աչքերը չոռեց, շանթալից շեշտով ասաց.— «Ա՜ դեավուր, ա՜ մամլաքեաթ խայինի, նէ՛ իւշիւն Ֆիրաբ էտտըն» (Ա՜յ դեավուր, ա՜յ հայրենիքի դաւաճան, ինչո՞ւ փախար):

Բարկութեանս առաջին թափը զսպել չը կարողանալով՝ ասացի.— «Սանդա Ֆիրաբ էդմիշսըն, խոջա. դէմաք սէ՞նտա դեավուր, սէ՞նդա մամլաքեաթ խայրնիսրն» («դու էլ փախել ես, խոջա. ուրեմն դո՞ւ էլ դեավուր ես, դո՞ւ էլ հայրենիքի դաւաճան ես»):

Խոջան ձայն չը հանեց. քիթ ու պուդը ծռեց, թրթռուեց, ֆրնչաց, մոլտալով հեռացաւ...

Ընկեր Մուրատը կուշտ-կուշտ ծիծաղեց, բան չասաց:

Վրայ հասաւ Թոդատցի Ընկեր Յակոբ Իսկենտէրեանը, որ նոյնպէս աքսորուել էր Տրիպոլիս... «Էս մեր խոջան է» ասաց եւ յետեւից պոռաց.— «Խոջա՛յ, խոջա՛յ Ֆիրաբ էդմա, սէօղիմ վար», («խոջա՛յ, խոջա՛յ, մի՛ փախիր, խօսք ունիմ»):

Ու Ընկեր Յակոբը իր բանտային կեանքից վերյիշումներ անելով՝ պատմեց.— «Տարօրինակ էր բանտային այն ընկերութիւնը, այն մթնոլորտը, որի մէջ մենք ապրում էինք Տրիպոլսում: Բանտի կեանքը ամէն տեսակ սրտնեղութիւն է բերում բանտարկեալի վրայ. մի առիթ ես փնտռում, որ լեցուած սիրտդ բանաս եւ մէկի վրայ

թափես, թէկուզ դիտնալով՝ որ դրա հետեւանքը ո՛չինչ չի բերիլ··· Բանտի կեանքի մէջ՝ մեր բախտակից Թուրքերը (խալամները)— լինի քաղաքական թէ քրէական — յարատեւ սովորութիւն ունէին՝ իրենց ցեղակից-կրօնակից բանտարկեալներին պատահելիս կամ սենեակէ սենեակ խօսելիս՝ ամէն տեսակ լուտանքների, հայհոյանքների տեղատարափ թափել Սուլթան Համիդի հասցէին··· Թրքական հայհոյիչ լեզուի շատ հարուստ բառամթերքը բացւում էր··· Ասիական յիշոցների բոլոր ձեւերն ու եղանակները գլորւում էին.— «Շուն, կաւատ, դաւաճան, անամօթ, հայրենավաճառ, տմարդի, դազան···» Սրանք մեղմերն էին: Մթնոլորտը տոգորուած էր հայհոյանքով, ամէն օր, ամէն ժամ: Մեղաւորն էլ էր հայհոյում, արդարն էլ···

«Մենք էլ վարակուեցանք· մենք էլ սկսեցինք բանալ մեր տրաւունքների, բողոքների տոպրակի բերանը· մենք էլ կամաց-կամաց սկսեցինք հայհոյանքներ թափել այն «կարմիր դազան»ի գլխին, որ մեզ ա՛յնքան անարդար տեղը խաչում, այրում, մրկում էր Տրիպոլսի դժոխային բանտի պատերի մէջ··· Մի օր, Թուրք (խալամ) բանտարկեալների մի խումբ — նրա մէջն էր եւ այս խօսքան — մեր վրայ յարձակեցան, պոռալով՝ —«Գեավուրներ, ի՞նչպէս էք համարձակում ձեր պիղծ բերանը բանալ եւ մեր Սուլթանին, մեր Խալիֆային հայհոյել», ու սկսեցին զարկել: Պատասխանեցինք —«Հապա դո՞ւք ինչու էք հայհոյում»: — Ասացին· —«Մենք խալամ ենք· մենք իրաւունք ունինք ասելու՝ ինչոր ուզենք···»

Ու այսպէս, երբ հայհոյողը «խալամ» էր,— իրաւունք ունէր· երբ Հայ էր,— իրաւունք չունէր, որովհետեւ «գեավուր» էր:

Ճիշտ այդ հոգեբանութիւնը ունին մեզ հանդէպ՝ Հայ «Կոմմունիստներից» ոմանք — ո՛չ բոլորը — երբ խնդիրը գալիս է Մարքսիզմին: Երբ Կարլ Մարքսի, Լենինի խօսքերը մենք ենք մէջբերում· մեր թէզերը նրանց գրածասածների վրայ դնում,— մեզ ասում են՝ չէ՛, չեղա՛ւ· այդպէս չէ· սխալ է· իսկ երբ նոյն այդ խօսքերն իրենք նիւթ դարձնում, նրանց վրայ են յենում իրենց ասածները ասում են թէ՝ եղաւ· սխալ չը կայ:

Եւ այդ ինչո՞ւ·— որովհետեւ իրենք «խալամ» են, իսկ մենք՝ գեավուր»:

Խնդիրները է՛լ աւելի լաւ պիտի լուսաբանուին, երբ մեր հակառակախօս «Կոմմունիստների» այդ տխուր եւ այլանդակ հոգեբանութիւնը աչքի առաջ ունենանք:

Օրինակ:

Իրենց ընկերներից Կոմոն, Թիֆլիզի մէջ, պետական փոստան զարկեց, բռնագրաւեց: Նա նկատեց հերոս.— Ճիշտ է ասում ենք, Կոմոյի արածը հերոսութիւն էր եւ արդարութեան պահանջն էր, որ նրա յիշատակը վառ պահուէր: Ու լաւ են արել, որ Թիֆլիզի փողոցներից մէկի անունը դրել են Կոմո: Կոմոն Հայ էր:

Իսկ Կոմոյից շատ երկար տարիներ առաջ՝ մեր ընկեր Փէշլիվանը Թոդաթի փոստան զարկեց,— նրա արարքը համարում են ո՛չ-սոցիալիստական, ո՛չ-հերոսական, այլ «ազգայնական»···

Երկուսն էլ կռուել են բռնապետութեան դէմ· երկուսն էլ մի եւնոյն նպատակով գործ են կատարել, մէկը դատնում է հերոս· իսկ միւսը՝ ոչինչ:

Եւ այդ հոգեբանութիւնը հետեւանք է չար նախանձի, ատելութեան, չուզողացութեան,— որ ո՛չ մի արդարացում կարող է ունենալ:

Մինչդեռ եթէ մի փոքր լայնախոհութիւն տեղի ունենար, Մարքսիստական արդարութեան չափովը խօսուէր,— ապա չէին ծագիլ այն «մեղադրանքները» որոնք մեր գլխին են թափուել, առանց որեւէ լուրջ հիմունքների:

Շարունակենք պարզաբանուիլ եւ պէտք է որ լուսաբանուինք· աւելի լաւ է սրտաբաց խօսել, քան՝ հայկական բարի սովորութեամբ՝ «փորի մէջը ձգել, պահել»:

Բաժանելիք ոչինչ ունինք. ընդհակառակը՝ իրարու մօտենալու, ընդհանուր հասկացողութեան գալու պէտքը ունինք, մի շարք շատ կարեւոր խնդիրների մասին,— իրաքանչիւր Կուսակցութիւն իր սեպհական միջոցներով։

Շեղումը վերջացաւ։

Անցնինք օրակարգին։

«Անկախ Հայաստան», «Քաղաքական Ինքնավար Հայաստան», «Միացեալ եւ Անկախ Հայաստան», «Միացեալ Ազատ եւ Անկախ Հայաստան»,— այս եզրերն են, որ տեղ են գտել — զանազան ժամանակամիջոցներում — մեր Ծրագրի եւ դրականութեան մէջ։

8.

Անհրաժեշտ սկզբնական բացատրութիւններ։

Ներկայ քաղաքագիտական բառամթերքի մէջ, ինչպէս եւ Մարքսիստական Սոցիալիստական, «Անկախ» եւ «Քաղաքական ինքնավար» եզրերը հոմանիշ են։ Միեւնոյն է՝ մի երկրի համար ասել «Անկախութիւն» կամ «Քաղաքական Ինքնավարութիւն»։ Հետեւաբար մենք իմաստի շեղում կատարած չենք, երբ ասել ենք «Անկախ Հայաստան» կամ «Քաղաքական Ինքնավար Հայաստան»։ «Միացեալ Անկախ Հայաստան» եզրը գործ ենք ածել 1916-ից յետոյ. դարձեալ առանց ընկրկելու մեր պաշտպանած պատմական թէզից. մենք Հայաստան ասելով չենք հասկացել, առաջին իր ծագման օրից, միայն «Տաճկա-Հայաստան» այլ ամբողջական-պատմական Հայաստան,— այսինքն՝ «Տաճկա-Հայաստան», «Ռուսա-Հայաստան» եւ «Պարսկա-Հայք»։

Խնդիրը տակտիկայի եւ ո՛ր մասից սկսելու մասին չէ. մի կտորը առաջ, միւսը՝ յետոյ. մենք երեք կտորի միութեան ենք ձգտել։

«Ռուսա-Հայաստանի» առանձին պետական գոյացութիւն (entite') դառնալուց յետոյ է, որ մէջտեղ եկաւ «Միացեալ» եզրը,— ձգտումն էր, որ «Տաճկա-Հայաստան» էլ միանար առաջինին։ «Ազատ» եզրը դրւում էր անջատողականութեան մտքով Թիւրքիայից։

Երբ մեր հակառակախօս «Կոմմունիստները» մեզ մեղադրում են «Միացեալ Անկախ Հայաստան» եզրի համար.— դրանով ուզում են հասկացնել. որ ներկայումս Սոցիալիստ Խորհրդային Հայաստանը չենք ճանաչում անկախ եւ ազատ։

Մինչդեռ դա աւելի քան սխալ է։

Մեր մտքովը, մասնաւորապէս «Երիտասարդ Հայաստան»ը առաջինն է եղել, որ առանձին յօդուածաշարքերով եւ խմբագրականներով փաստել, ապացուցել է, որ ո՛չ միայն ներկայ՝ Սոցիալիստ Խորհրդային Հայաստանը ազատ է եւ անկախ, այլ սոցիալիստական տեսակէտով նա կարող էր լինել այն, ինչ որ է այսօր։ Մենք երկարօրէն բացատրել ենք թէ ազատ եւ անկախ պետութիւն եզրը ա՛յլ է բուրժուազական քաղաքագիտական հասկացողութեամբ, այլ՝ Սոցիալիստական-Մարքսիստական։

Եւ հետաքրքիրն էլ հէնց այն է, երբ Սոցիալիստ Խորհրդային Հայաստանի հակառակորդները ուժգին կերպով այն թէզն էին պաշտպանում, որ ներկայ Հայաստանը ո՛չ ազատ է, ո՛չ էլ անկախ.— մեր մտքովն էր միայն, որ երկարօրէն վերլուծելով իրերի դրութիւնը եւ Սոցիալիստական զաղափարաբանութիւնը՝ դրեց հակա-թէզը թէ՝ իրօք ազատ եւ անկախ Հայաստան ունինք։ Դրանից ուղիղ մէկ տարի յետոյ էր, որ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան անդամներից ոմանք ձայն բարձրացրին եւ պաշտպանեցին ա՛յն՝ ինչ որ մենք ասել, պնդել էինք մի տարի առաջ։

Անկա՞խ է ներկայ Հայաստանը,— այո՛։ Ազա՞տ է նա,— այո՛։ Այդ մասին որ եւ է առարկութիւն չենք ունեցել, չունինք էլ։ Ուստի, այդ կողմից, առանձին ջանք թող չը թափուի «մեծ վիհեր» բանալ, տարօրինակ թիւրիմացութիւններ ստեղծել։

Այս՝ «Անկախ» եւ «Ազատ» եզրի նկատմամբ.

Գանք «Միացեալ»-ին։

Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան բարեմիտներից նրանք, որոնք անդադար յեղյեղում են այդ բառը, նրա պատմական ծագման եւ այն ժամանակուայ պայմանների մասին չեն խօսում, այլ տալիս են այն միտքն ու ներշնչումը, մասնաւորապէս իրենց մասսաներին, թէ մենք հիմա ձգտում ենք «Ցաճկա-Հայաստանը» միացնելու «Ռուսա-Հայաստան»ի (Սօցիալիստական Խորհրդային Հայաստանի) հետ Եւրոպական Կապիտալիստական պետութիւնների միջոցով եւ հայդուկային ապստամբական տակտիկայով։— Ինչոր մեր մտքովն անգամ չի անցել, չի էլ անցնում։

Մեր հակառակախօսները չը պիտի մոռանան մի իրողութիւն, այն՝ որ գոյութիւն ունեցող քաղաքական հոսանքներից եւ կուսակցութիւններից մէն մինակ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը եղաւ, որ «ազգային» ամէն տեսակ հաստատութիւններին եւ «պատուիրակութիւններին» հակառակելով՝ սկզբից մինչեւ վերջ՝ պարսաւեց, չընդունեց «Մանդատ»-ի գաղափարը։ Նա էր, որ առաջին անգամ, դեռ հազիւ Սովիետական Ռուսաստան մէջտեղ եկած, փաստեց՝ երկարաշունչ խմբագրականներով եւ յօդուածներով՝ Ռուսական օրիենտացիան եւ նրա վայրէջքի պատմական եւ գաղափարական օգտակարութիւնը ցոյց տուեց՝ Հայաստանի եւ Հայ ժողովրդի ամբողջականութեան, մօտաւոր եւ հեռաւոր շահի տեսակէտից։

Մեր մտքովն անգամ չի անցել, չի էլ անցնում, որ տեղական խլրտումներ, ապստամբական ձեռնարկներ անենք՝ Բէմալիստանի «Ցաճկա-Հայաստան» մասը կցենք ներկայ Հայաստանի հետ։ Մենք այդպիսի տակտիկական գործունէութիւն չենք ունեցել, չունինք էլ։ — Թող թոյլ տրուի, առանց տկարութեան նշանի տեղ ընդունելու, որ մեր ներկայ՝ այդ մասին՝ տակտիկայի մասին չը խօսուի։ այս քանը միայն ասենք։

Պրոլետարական յեղափոխութիւն կ՞այ։ պիտի գա՞յ։ Արեւելքն էլ պիտի սովիետականանա՞յ։

Մենք ձգտում չունինք ամբողջ Արեւելքի մէջ պրոլետարական դիկտատուրա յառաջ բերել՝ մէն մենակ մեր ոյժերով, ինչպէս ոչ դիտողութիւն էր եղած «Խորհրդային Հայաստան»ի մէջ։ Այդ մասին հոսանքներ, ազդակներ շատ կան։ եւ մենք նրանց հետ համընթաց ենք՝ մի կարգ տէրրիտորիալ խնդիրների եւ տակտիկական որոշ տարբերի նկատմամբ։

Հետեւապէս, դարձեալ յանձնարարելի մեթոդ չէ, որ մեր Կուսակցութեան դէմ զրպարտութիւններ են գրգռւում, նախապաշարումներ յառաջացնում՝ գոյութիւն չունեցող շարժառիթներ պատրուակելով։

Զեռք առնենք բուն հարցը։

Անկախ Հայաստան։

Ընդունելով Հայաստանը որպէս ամբողջականութիւն։

Հարց՝ տուեալ մի երկրի համար անկախութեան թէզ պաշտպանելը հակա-սօցիալիստական՞ն, հակա-մարքսիստական՞ն, հակա-կոմունիստական՞ն է։

Հարցը դնում ենք որպէս գաղափար-հիմունք։

«Կոմունիստական Մանիֆեստ»ի չորրորդ գլխի վերատուութիւնն է։— «Կոմունիստների դիրքը գոյութիւն ունեցող զանազան ընդդիմադիր Կուսակցութիւնների վերաբերմամբ»։

«Երկրորդ հատուածը յստակ կերպով պարզաբանում է թէ՝ Կոմունիստները ի՞նչ յարաբերութիւն պիտի ունենան՝ գոյութիւն ունեցող գործաւորական կուսակցութիւնների նկատմամբ, ինչպիսին են Զարտիստները Անգլիայում եւ Հողագործական բարենորոգչականները Ամերիկայում»։

Դրանից յետոյ՝ երրորդ հատուածը ընթերցւում է՝

«Լեհաստանի մէջ նրանք (Կոմունիստները) աջակցում են այն կուսակցութեան, որ հետապնդում է հողագործական յեղափոխութիւն, որպէս առաջին պայման

ազգային ազատագրութեան,— այն Կուսակցութեան, որ խմբեց 1846-ի Կրակովի ապստամբութիւնը»:

Այստեղ, ո՛չ միայն Կարլ Մարքսը, Էնգէլսը, եւ այդ ժամանակուայ (1847) բոլոր Կոմմունիստները, այլեւ, նրանից յետոյ, Առաջին Միջազգայինի բոլոր գործօն դեկավարները, ուժեղ կերպով պաշտպանել են Անկախ Լեհաստան. որովհետեւ երեք կտորների բաժնուած Լեհաստանի միացումովն էր, որ այդ երկրի «ազատագրութիւնը», անկախութիւնը պիտի դար:

Դրա դիմացը դնում ենք, պատմականօրէն, Անկախ Հայաստան, Միացեալ Անկախ Հայաստան:

Շատ սիրելի պիտի լինէր մեզ լսել՝ Մարքսից եւ Էնգէլսից աւելի բարձր «Մարքսիստների եւ Կոմմունիստների» այդ մասին տուած առարկութիւնները: Խնդիրը գաղափարական է:

Ուրեմն գաղափարական տեսակէտից մենք չենք մեղանչել Գիտական Սոցիալիզմի ծնողների առաջ:

Այն ժամանակ, երբ Մարքսը ծայրայեղ թշուառութեան մէջ էր եւ «Նիւ Եօրք Տրիբիւն»ի մէջ յօդուածներ գրելով էր, մի կերպ, ապրում, այդ ժամանակուայ ա՛յն յօդուածները, որոնք առնչութիւն ունէին 50-56 թուականների պատերազմների հետ, դրանք բոլորը հաւաքուած, կազմում են մի ստուար գիրք «Արեւելեան խնդիրը» անունով: Այդ յօդուածներից մէկի մէջ Մարքսը ասում, փաստում է, որ՝ «Թիւրքերը իրենց ճամբու պայուսակները պիտի կապեն եւ դուրս դան Եւրոպայից»:

Անել է թէ՝ այդ նախադասութեամբ՝ Մարքսը ընդունում էր ազգերի (Ռումանիա, Բուլղարիա, եւայլն) անկախութիւնն ու ազատագրութիւնը, որոնք գտնուում էին Թրքական կայսրութեան այդ մասի մէջ:

Աշխարհագրական դիրքը նշանակութիւն չունի: Հայաստանը Ասիայի մէջն է: Մարքսը խտրական ոգիով չէր առաջնորդուել, որ Եւրոպայի մէջ գտնուող մի ազգի համար եղած գաղափարը Ասիականի մէջ եղածին յարմար չը տեսնէր, կամ նրան հակառակէր:

Միացեալ Անկախ Հայաստան:— Արդեօք բացուած «մեծ վիհը» Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը չի՞ ուզում դոցուած, լցուած, հարթուած տեսնել: Եթէ ուզի՝ ինչո՛ւ չէ: Ենթադրում ենք, որ ինքը այս բոլորից տեղեկութիւն ունէր: Բայց եւ ինչո՞ւ «մեծ վիհ» է տեսնում, հէնց այդ կէտի նկատմամբ:

Շարունակենք առաջ երթալ:

Սոցիալիզմ-Կոմմունիզմի պատմութեան մէջ կը մնայ եզակի այն պատմական, իրական մեծ ժեստը, որ արաւ Ռուսաստանի Սոցիալ Դէմոկրատ Բանուորական Կուսակցութեան Բոլշեւիկեան թեւը, հէնց առաջին օրից:

Առաջին անդամն էր, որ պատմութեան մէջ, կարուկ, յստակ, որոշ կերպով ճեւակերպուեց, կիրառութեան մէջ դրուեց Սոցիալիզմ-Կոմմունիզմի, Սոցիալիզմ-Մարքսիզմի ճշմարիտ հասկացողութիւնը Ազգային խնդիրների նկատմամբ:

Լենինի այդ մեծութիւնը կը մնայ անզուգական, մարդկային ազգի պատմութեան մէջ:

Այդ մեծ Կուսակցութիւնը, հէնց սկզբնական օրից, հակառակ դիզուած ահագին դժուարութիւններին եւ հակահոսանքներին՝ ընդունեց Ռուսաստանը բաղկացնող ազգութիւնների կատարեալ անկախութիւնը՝ «ինքնորոշման» սկզբունքը պաշտպանելով՝ գործքով, եւ ո՛չ թէ խօսքով:

Ի թիւս այլոց, նա պաշտպանեց Հայաստանի անկախութիւնը (Ռուսա-Հայաստանի) եւ իր՝ Կոմմունիստական ներկայ Սահմանադրութեան մէջ որոշ կերպով անցրեց Հայաստանի անկախութիւնը, որպէս անհատ պետութիւն-գոյացութիւն:

Ռուսաստանի Սոցիալ Դէմոկրատ Կուսակցութեան Բոլշեւիկեան թեւը, դեռ առաջին օրից պաշտպանեց, դրեց Տաճկա-Հայաստանի «ինքնորոշման» իրաւունքը, որպէս

անհրաժեշտ մի իրաւունք. ասել է թէ՝ Տաճկա-Հայաստանի էլ կատարեալ ազատագրութիւնը, անկախութիւնը ընդունեց:

Ազգերի ինքնորոշման իրաւունքի մասին Լենինի խօսած ճառերը, նրա պաշտպանած թէզերը, պատճառաբանութիւնները, այսօր, մի կողմ ենք թողնում, այն հասկացողութեամբ, որ դա շատ շատերին արդէն ծանօթ է: Ցաւալին է միայն, որ մինչեւ ցարդ դրանք չեն թարգմանուել, չեն ցրուուել մասնաւորապէս Հայ ժողովրդի մէջ: Դա բոլորիս պարտականութիւնն էր, եւ դրա մէջ թերացել ենք:

Այդ կողմից Տրոցկու «Ինքնորոշման իրաւունք» ճառը նոյնպէս կայ: Գրել է.

«Սոցիալիզմը, ազգային պետական խմբերի եւ կազմակերպութիւնների դաշտի մէջ՝ մի նոր տեսակի թանձրացեալ լուծում ունի, այն է՝ նա կարող չէ ուրիշ քայլ առնել, առանց կանխապէս ընդունելու ազգային ինքնորոշման իրաւունքը. — այն՝ որ ազգային ամէն խմբակցութիւն իրաւունք ունի վճռելու իր սեպհական բախտը. ուրեմն ամէն մի ազգ իրաւունք պիտի ունենայ բաժնուելու, անջատուելու՝ տուեալ մի պետութիւնից (օրինակ՝ Ռուսաստան եւ Աւստրիա)... Ազգային ինքնորոշման իրաւունքը չի կարող մասը չը կազմել պրոլետարական խաղաղութեան ծրագրի...»:

Եւ պրոլետարական յեղափոխական Ռուսաստանը կատարեց իր խօսքը՝ գործքով:

Նա ընդունեց՝ Արեւելեան բոլոր ճնշուած ազգերի կատարեալ անկախութեան իրաւունքը:

Անկա՞խ Հայաստան, Միացեա՞լ Անկախ Հայաստան, — ինչո՞վ ենք դարտուղել մեծ և բեղմնաւոր գաղափարից:

Հայաստանի Կոմունիստ Կուսակցութեան քարտուղարը այս բոլորը շատ լաւ գիտէր, ենթադրում ենք, էլ ինչո՞ւ է «մեծ վիհ» տեսնում, գաղափարի տեսակէտից, մեր այդ թէզի մէջ:

Անկախ Հայաստան, Միացեալ Անկախ Հայաստան՝ մենք չենք հասկացել բուրժուազական մտքով. այլ պրոլետարական:

Անկախութիւնը նկատել ենք ժամանակաւոր ձեւակերպութիւն, ժամանակաւոր միջոց Սոցիալիզմին-Կոմունիզմին հասնելու համար, Հայաստան երկրամասի մէջ էլ. ինչոր ուրիշ կերպով ձեւաւորուել է մեր Կուսակցութեան ծրագրի նախաբանի եւ նկատումների մէջ:

Բացի դրանից.

Անկա՞խ Հայաստան.— իր անկախութիւնը ունեցող Հայաստանը (ամբողջականը, եթէ կ'ուզէք) չը պիտի կզգիանար, այլ Դաշնակցային կապերով պիտի կապուէր շրջակայ պետութիւնների, նոյն իսկ մնացեալ Թիւրքիային հետ. ճիշտ այնպէս, ինչպէս որ այսօրուայ Սոցիալիստ Հանրապետութիւնների Միութիւնն է: Մեր ծրագրի երկրորդ հրատարակութեան մէջ՝ դա շատ որոշ, ցայտուն կերպով գրուած է. այնպէս որ ե՛ւ ո՛չ մի կասկածի տեղ է թողնում:

Ու սրանից յետոյ չի՞ փակւում «Միացեալ Անկախ Հայաստանի» պատճառով բացուած «մեծ վիհը»:

Փակւո՞ւմ է.— շատ լաւ:

Չի՞ փակւում.— այն ժամանակ «խլամի» եւ «գեավուրի» հոգեբանութիւնը պիտի մատնանշենք, որի մէջ մենք եւ ո՛չ մի մեղադրուելիք կէտ ունինք:

Այդ տեսակէտից էլ մենք եղել ենք այն՝ ինչոր պիտի լինէինք,— այսինքն ճշմարիտ, հետեւողական Մարքսիստ-Կոմունիստներ:

Եթէ մեր թէզերի իրականացումը՝ կեանքը չը տար, կարելի էր, գուցէ, խծբծանքներ կատարել. բայց կեանքը եկել արտայայտել է իր թանձրացեալ օրինակներով, եւ ուրախ ենք որ կեանքի այդ պատկերը գծող ճարտարապետը եղել է Ռուսաստանի Կոմունիստ Կուսակցութիւնը.

Հետեւաբար Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարն է, որ մեղանչում է իր Կուսակցութեան գաղափարաբանութեան եւ գործի դէմ, եւ ո՛չ թէ մենք:

9.

Կարլ Մարքսը՝ երկար տարիների աքնաջան աշխատանքով՝ դասակարգերի, դասակարգային կռուի, յաւելեալ արժէքի, կապիտալիզմի կեղրոնացման, պատմութեան մատերիալիստական (նիւթապաշտական) ընթացքի վրայ խօսելուց յետոյ միայն՝ արձակեց իր անմահ կոչը. — «Պրոլետարներ բոլոր երկրների՝ միացէք»... Կռուեցէ՛ք... Որովհետեւ «Ի՞նչ ունիք կորսնցնելիք, եթէ ոչ՝ ձեր շղթաները»:

Ուրեմն՝ գրոհ բուրժուազիայի վրայ. թշնամին նա է:

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը ա՛յդքան դժուարին ճանապարհներից չի ուզում անցնել: Նա գտել է դիւրինը: Կազմել է դաւանաբանական (դոգմատիկական) ոճով մեղադրանքների մի ահագին ցանկ մեզ դէմ եւ դրանով էլ ամէն բան պարզուած է համարում:

Այնպէս որ, եթէ այդ դոգմատիկական վճռորոշումները մի մի օղակ դարձնուի, կը դառնայ մի ահագին շղթայ, փաթաթած Հայ աշխատաւորութեան ուքերին, որից էլ ազատուելու համար՝ ինքը հովուական Կոչ է անում իրեն լսող ու հետեւող Հայ բանուորներին, որ խումբեր կազմեն, գրոհ տան Սոցիալ Դէմոկրատ Հնչակեանների վրայ, որպէս զի նրանց հագցրած շղթայից ազատուին:

Կուսակցական հակառակորդներ չա՞տ էինք տեսած, լսած. բայց ա՛յսքան անհամբերողութիւն... իրօք արգահատելի է:

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան մեղադրական շղթայի օղակներից մէկն էլ այս է թէ՝ «Փետրուարեան հակա-յեղափոխութեան օրերին՝ Երեւանի Հընչակեանները հաւատարիմ հպատակութիւն են յայտնել Ս. Վրացեանին»:

«Վիհ», չա՞տ մեծ «վիհ»:

Հաւատա՞նք:

Պատմագրողը ճշմարտապատում մէ՞կն է:

Խօսենք:

Սկսենք Մայիսեան Շարժումներից. տեսնենք թէ նա ի՞նչ տեղ է բռնում Հայաստանի խորհրդայնացման մէջ, ի՞նչ կերպով է նա գնահատւում. ի՞նչ դեր է կատարել մեր Կուսակցութիւնը:

Նախ խօսքը մեզ դիտողութիւններ անողին պիտի տանք:

«Հայաստանի Յեղափոխութեան Յուլիսն ու Հոկտեմբերը», վերտառութեամբ («Նորք», թիւ 2, էջ 96) իր նախայօդուածի մէջ՝ պատմաբան-քարտուղարը գրում է.— «Հոկտեմբերեան յեղափոխութիւնը նոր Հայաստանի կազմակերպման առաջին գործողութիւնը չէր միայն, այլեւ հնի կազմալուծման վերջին արարը: Մայիսեան ապըստամբութիւնը բանուոր-գիւղացիական յեղափոխութեան նախընթաց Յուլիսն էր»:

Ուրեմն, իր ասելով, Մայիսեան Շարժումները վճռական նշանակութիւն են ունեցել:

«Մայիսեան ապստամբութիւնը» յօդուածի մէջ (էջ 107) նոյն հեղինակը գրում է.— «Մայիսեան տօնը յեղափոխական ուժերի զօրահանդէս պիտի լինէր»:

Եւ, արդարեւ, եղած է:

Մի քիչ վարը, աւելցնում է.— Մայիսեան ցոյցը Երեւանում շարժում յառաջացրեց անդամ էս-էրական(*) կազմակերպութեան ճահճի մէջ: Մայիս մէկի նիստին Հայաստանի էս-էրական կազմակերպութեան կոմիտէն մեծամասնութեամբ որոշում է հերթական համարել Հա-

(*) Էս-էրները՝ Սոցիալիստ յեղափոխականներն են:

յաստանի սովիետացիայի խնդիրը, Կոմունիստների եւ Դաշնակցութիւնից պաշտօնապէս հեռացողների հետ, ձեռնպահ մնալ Կոմունիստների զինուած ապստամբութեան դէպքում...»

Մայիսեան Շարժումները, ուրեմն, ազդել են ե՛ւ Խէրների վրայ. նրանք էլ որոշել են պարզ համակրութիւն, որովհետեւ «Կոմունիստների զինուած ապստամբութեան դէպքում» պիտի մնային «ձեռնպահ»:

Մայիսեան Շարժումների ընդարձակութեան մասին՝ յօդուածագիրը գրում է.— «Բանուորական, զինուորական, գիւղացիական լայն մի շարժում էր Մայիսեան ապրստամբութիւնը, որ բռնկեց Հայաստանի տարբեր վայրերում»:

Հետեւաբար շարժումները եղել են զանգուածային:

Ի՞նչ ոյժ ունէր, այդ ժամանակ, Հայ Կոմունիստ Կուսակցութիւնը:

Պատմիչը հետեւեալ թուանշաններն է տալիս.— «Մօտաւոր հաշուով կազմակերպութեան մէջ մտնում էին Երեւանի գաւառում 200 անդամ եւ թեկնածու. Նոր-Բայազիտի գաւառում 60–80. Իջեւանի եւ Դիլիջանի շրջաններում 150–200: Աղէքսանդրապօլի գաւառում՝ 200. Ղարսի եւ Սարիղամիշի շրջաններում 100»:

Ասել է թէ իր ոյժի նուազագոյնը եղել է 710 հոգի, իսկ առաւելագոյնը՝ 780:—

Այս ամբողջ ոյժի դէմ դնելու էր Աղէքսանդրապօլի գաւառի Դիւզքէնդ գիւղը, որ ամբողջապէս Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան էր: Այդ մասին ո՛չ մի բառ, ո՛չ մի խօսք: Թողնում ենք մեր Աղէքսանդրապօլի, Երեւանի, Ղարսի, եւայլն, եւայլն, ոյժերը: Ինչո՞ւ չէ յիշած, չէ՞ որ «գիւղացիական լայն» այդ «շարժման» մէջ նրանք էլ մտել էին: Անկողմնակա՞լ է պատմիչը. կ՚այ այդ մասին ամենափոքր յիշատակութիւն անդամ:

Ո՞վ կազմակերպեց Մայիսեան Շարժումները: Յօդուածագիրը այդ մասին ասում է.— «Հայաստանի Մայիսեան ապստամբութիւնը կազմակերպչօրէն սաղմնաւորուեց Կոմունիստական Կուսակցութեան ընդյատակեայ աշխատանքի ծոցում: Բանուորական շարժումն այդ աշխատանքի մասսայական անդրանիկ յայտարարն էր»:

Համապատասխա՞ն է սա իրականութեան. եղելութիւնները ճշգրտօրէն արտացոլացուա՞ծ են այստեղ:

Սաղմնաւորումի այդ պրօցեսում համահաւասար աշխատանք չե՞ն կատարել ե՛ւ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեանները:

Ուրանալը, աչքի տակով զարկել անցնելը նշանակութիւն չունի:

Անկողմնակալութեան բացակայութիւնը ակներեւ է: Դեռ կենդանի մնացած, ողջ-առողջ չա՞տ ընկերներ, անկողմնակալ անձեր կան. որոնք պատմական այդ պրօցեսի զարգացումը լիովին կը բացատրեն եւ մեր Կուսակցութեան բաժինը ի յայտ կը բերեն:

Հետեւեալ կտորը է՛լ աւելի պարզում է հոգեկան պատկերը.— «..Զտեսնուած ծաւալ ընդունեց Կոմունիստական շքերթը մանաւանդ Հայաստանի մայրաքաղաքում: Անդամ Հնչակեան Կուսակցութեան խմբակը լքեց սեփական դրօշը եւ միացաւ Կոմունիստներին»:

Երբ բարտուղարը ասում է «խմբակ, դէթ այդքանը ընդունում է, ապա համարձակօրէն կարելի է եզրակացնել թէ՝ եթէ իրենցիններից աւելի չի եղել, ապա պակաս էլ չի եղել մերոնց թիւը:

Բայց տեսէ՛ք, «շքերթը» սկսուած է, մեր ընկերները դուրս են գալիս սեպհական դրօշով, եւ «շքերթը» տեսնելուն պէս, անմիջապէս ծալում, մի կողմ են դնում մի քիչ առաջ ծածանող իրենց դրօշը եւ միանում Կոմունիստներին...

Սա պատմիչի դի՞րք, պատմիչի դրի՞չ է:

Նշանակալից է, նոյնպէս պատմիչի հետեւեալ կտորը.— «Ապստամբութիւնը ճնշուեց սրի եւ հրի ուժով. մասսաների առաջնորդները բանտեր նետուեցին: Վտան-

գաւորներին չէզոքացրեց դահիճների արդարադատութիւնը: Սոսկալի տանջանքներից յետոյ՝ հրացանագարկ եղան Եկոր Սեւեան, Փանեան, Արա. Մելքոնեան, Ենովք Մկրտումեան, Բաղիկ Բաղիկեան...».

Այո՛ Դաշնակցութիւնը այդ «անօրէնութիւնը» գործեց:

Բայց այդ բոլոր թուումների մէջ չը կայ մեր առիւծսիրտ ընկերներից՝ նոյն իսկ Մշեցի Մարգարի անունը, դեռ միւսները թողնենք. արդեօք նրա գործը պակա՞ս էր եղած անուանուածներից. չէ՞ որ Մարգարն էլ խողխողուել էր. նրա անունը ինչո՞ւ չի յիշւում. մի՞թէ նրա համար, որ նա Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան էր:

Անկողմնակա՛լ պատմաբան.

Շարունակենք հատուածի ընթերցումը.— «...Սկսուեց համատարած ռեակցիայի մի շրջան: Խմբապետական բռունցքը խորացաւ Հայաստանի յեղափոխական բանուորների ու գիւղացիների վրայ: Ծեծն ու աքսորը, թալանն ու սպաննութիւնը կենցաղային երեւոյթների շարքն անցան: Հայ քաղքենիութիւնը եւ իր կուսակցութիւնը տօնում էին յաղթանակի աբիւնոտ խրախճանքը: «Դիմադիր» կազմակերպութիւնները, Հայ լիբերալներն ու Մենշեւիկները, Սոցիալիստ-յեղափոխականներն ու «անկուսակցականները» հաւատարմութեան տուրք տալով հայրենիքի «անկախութեան», բոլորեցին ղեկավարող կուսակցութեան պարզած դրօշակի շուրջը ու հակա-յեղափոխական միասնական ֆրոնտ յայտարարեցին Հայաստանի աշխատաւորութեան եւ նրա մարտական կազմակերպութեան – Կոմմունիստական Կուսակցութեան դէմ» (էջ 140):

Տեսնում է. պատմաբանը չի ասում թէ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեաններն էլ, «Հայ լիբերալների ու Մենշեւիկների», «Սոցիալ-Յեղափոխականների» ու «անկուսակցականների» նման «հաւատարմութեան տուրք տալով... հակա-յեղափոխական միասնական ֆրոնտի» մէջ մտան: Բայց դժուարանում էլ է ասելու, թէ նրանք այդ

բաղկացութեան մէջ չը մտան եւ մինչեւ վերջ չարունակեցին հաւատարիմ մնալ իրենց դրօշին...

Անկողմնակալ պատմաբանը այդ մասին լռելեայն չէր անցնիլ, կը խօսէր:

Մի կէտ էլ.

«Մայիսի 7-ին Դաշնակցականները բանտարկում են մօտ 20 Կոմմունիստ բանուոր...»

Ո՛չ. դրանք Սոցիալ Դէմօկրատ Հնչակեաններ էին:

Ապստամբութիւնը սանձուեց, հակայեղափոխութիւնը յաղթանակը տարաւ. Կոմմունիստներից ամէն մէկը իր գլխի ճարը տեսաւ:

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը չը գիտէ՞ր, թէ՞ դիտմամբ չի ուզում յիշել.— Այդ օրերի մէջ, երբ յաղթող Դաշնակցականները նուագներով էին տօնում իրենց արիւնոտ յաղթութիւնը, Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան Երեւանի Մասնաճիւղը որոշեց կռիւը վերաբանալ, ու ամէն պատրաստութիւն տեսնելով՝ իր անդամներից մի քանիսին, բժշկապետ Ընկեր Բենիամին Աղոյեանին (Խարբերդցի) առաջնորդութեամբ ուղարկեց վարչապետ Օհանջանեանի մօտ: Ընկեր Աղոյեանը կարդացել էր Մասնաճիւղի պահանջը.— «Ներկայացողներս յանուն Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան Երեւանի Մասնաճիւղի պահանջում ենք անմիջապէս բանտից արձակել մեր 20 ընկերներին, եթէ ո՛չ՝ չատից՝ չատ, քիչից՝ քիչ»:

Երբ ընկերները վեր են կենում, պատրաստւում դուրս գալու, վարչապետ Օհանջանեանը խնդրում է մի-երկու րոպէ նստել. անցնում է անմիջապէս հեռախօսի գլուխը...

Հաղիւ «պալատից» դուրս եկած՝ պատգամաւոր ընկերները ողջագուրւում են բանտից արձակուած իրենց 20 ընկերների հետ:

Վարչապետ Օհանջանեանը գիտէր, որ «չատից՝ չատ, քիչից՝ քիչ» ինչ ասել էր:

Երբ մի պատմագրող, իրերը արձանագրող, դասաւորող մի անձնաւորութիւն, ինչպիսին է Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը՝ ա՛յդքան կողմնակալութիւն, աչառութիւն է անում, երբ ա՛յդքան թերութիւններ է ցոյց տալիս. այլեւս մենք մեզ եւ ո՛չ մի իրաւունք ենք տալիս չիւղի չափ անգամ հաւատ ընծայելու իր այն հաւաստումին թէ «Փետրուարեան հակայեղափոխութեան օրերին՝ Երեւանի Հնչակեանները հաւատարիմ հպատակութիւն են յայտնել Ս. Վրացեանին»:

Ի՞նչ կայ այս բոլորի տակը. ի՞նչ է «հաւատարիմ հպատակութեան» առասպելը: Այդ՝ վաղուց յայտնի է եւ այդ դանգատը նոր չէ:

Փետրուարեան հակա-յեղափոխութեան օրերին՝ Ընկեր Լազոն, Բրդերի այդ Լուսաւորիչը, նրանց դպրոցների վարիչը, իր կրթական գործը շարունակեց. չը փախաւ: Այս է, որ քարտուղարը, ուռեցնում, «լուն ուդտ է» դարձնում, մասնաւորը ընդհանրացնում:

Երբ զօր-զօրական չը կայ. մարտական ոյժը դուրս է եկել գծից. տիրել է պարտութիւնը... Ծերունի Լազոն ի՞նչ պիտի անէր...

Հիմայ ճակատ ճակատի:

«Փետրուարեան հակա-յեղափոխութեան օրերին՝ Երեւանի Հնչակեանները հաւատարիմ հպատակութիւն» յայտնեցին...» Իսկ դու ինքդ, դու, Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան ներկայ քարտուղար, դու ի՞նքդ «այդ օրերին» ի՛նչ արեցիր...

Դու փախա՞ր, փախա՞ր.

Երեւի Բէօռ Օղլու խօսքին հետեւեցար թէ՝ «գաչմաք տա բիր մարդլըգ տըր», («փախչիլն էլ մի տղամարդութիւն է).

Բայց դու միայն չը փախար. դու թաղնուեցար, պահուեցար: Աւելի ուղիղ կը լինէր դրարառի «զօղեալ» բառը գործածել:

«Զօղեալ եղեւ», միայն իր կաչին մտածելով. մոռնալով բանտերի ընկերները, դաշտերը ընկնողները, թափառողները...

Եւ այս մարդն է, որ մեր ընկերների երեսին է չպրտում մի մեղադրանք, որի մէջ է՛ն առաջինը, է՛ն խիստը իրեն է վերադառնում:

Պատմութիւն կայ. Սոցիալ Դէմօկրատ Հնչակեանները մի անգամ բռնած իրենց դիրքից փախչողները չեն: Այդ մասին ասելիքներ կ՚ունենանք:

Ուրացէ՛ք, ժխտեցէք, ինչքան կ՚ուզէք. իրողութիւնն է, որ Հայաստանի խորհրդայնացման պատմական գործի մէջ՝ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ունեցել է իր որոշ դերը:

Զգում ենք. ցաւը, մրմունը խորունկ է: Պարտուել՝ բայց տղամարդից պարտուիլ. դա շատ մեծ կսկիծ չի պատճառիլ:

Մեր Խորենացին սուր ճիչ է արձակում, ուզում է որ Զարմայր Նահապետը սպանուած լինէր Աքիլլէսից, եւ ո՛չ թէ հասարակ, երկրորդական բազուկներից:

«Համիդի գնդապետը ոտքիս առաջը չոքեց, հրճուանքով ասաց՝ «զա՛րկ. մեռնում եմ, բայց մեռնում եմ մի տղամարդից եւ ո՛չ թէ ոչինչ մէկից: Այս ասա՛ իմ ազգային», պատմում էր Փոքր Հայքի սարսափը եղող՝ Ընկեր Յովհաննէս Մինասեանը:

Տղամարդութեան առանձին արժէք է տալիս ոյժի երկրպագուն:

Մրմուռ է — պարտուել.— «չախմուր» աչքերով մի ոչինչ Վրացեանից:

Փոխանակ «զօղելու» Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղար, թող չուրջդ առնէիր մի քանի տղամարդիկ, յառաջ խիզախէիր եւ գետին գլորուէիր...

Եթէ այդ արած լինէիր, է՛լ քեզ խօսեցնել կարելի չը պիտի լինէր, յետնորդներին պիտի ստիպէիր քեզ «նոր խմն» Նարուգողոնոսոր պաշտելու... ծնծղաներով, օրհներգներով...

Բայց ո՛չինչ. ժամանակը սպեղանին կը բերի. նա անցուկը մոռցուկ կը դարձնի։

Սպին փակւում է. այդ «չախմուրին» Սոֆիայի Սոցիալ Դէմոկրատ Հնչակեանները հարկադրեցին կանանց յետեւը պահուրտիլ։ Թէեւ «Խորհրդային Հայաստան»ը այդ եղելութիւնը հրատարակեց, «Մարտակոչ»ի հետ միասին, բայց «Կոմմունիստական» լայնախոհութեամբ ձեզ թոյլ չը տուեցիք ասելու, որ անցքի գործօնները որոնք էին։ Լուրը, թղթակցութիւնը, որպէս թէ, Երեւան գընացել էր Վիեննայից...

Ո՛չինչ. ինչ էլ որ լինի, սա մի սպեղանի է։

Երբ Ֆրիդերիկոսը (ապագայ Ֆրիդերիկոս Մեծը) իր առաջին ճակատամարտը սկսաւ, լսեց թնդանօթների որոտալը, տեսաւ ձիաւորների բաղխումը, հասկացաւ որ եղածը գրքերի մէջ կարդացուածի նման բերկրանք չի բերում. կաշի խնդիր կայ, ուստի ձիու գլուխը յետ դարձրեց, փախա՜ւ, փախա՜ւ. մտաւ մի մարագ. որոճում էր ինքնասպանութիւն գործել. բայց «Կուդէի ապրիլ. ապրիլ՝ որ թշնամուս հոգին էլ թունաւորէի...»։ Այս մըտքերի մէջն էր, երբ թիկնապահը մարագը մտաւ, ասաց. «Արքայ, յաղթեցինք»։ Ու Ֆրիդերիկոսը ձին աշտանակեց, ճակատամարտի վայրը սլացաւ. զօրք-զօրական դոչեցին «Կեցցէ՛ մեր արիասիրտ, մեր յաղթական հրամանատար արքան»։

Փախա՜ր, թաղնուեցա՜ր, «զօղեալ եղեր». բայց «բանուոր-գիւղացի» ընկերները յաղթութիւնը տարան, ու քեզ էլ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղար պատմաբանը դարձրին... «Պարտութեան, նըւաստացումի» զգացմունքները իրենց սրութիւնը կը կորսընցնեն։

Ներքին վշտին ամենամեծ սպեղանին բերողը, մոռցընել տուողը ժամանակն է.— ասում է հոգեբանութիւնը։ Նա անցուկը մոռցուկ կը դարձնի։

Անցուկը մոռցուկ, Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղար։

Ցոյս ունինք որ մեղադրանքի «վիհը» մի փոքր նեղցաւ։

Այս էլ թող երթայ. տեսնենք գալիքը։

Բայց, հէնց հիմայ, դու, դարձեալ, դողի մէջ ես, «ես չեկու» ես բացականչում. ամէն կանխազգուշութեան միջոցներ Զեկայից ես սպասում։ Հետեւաբար, որպէս կանխապատրաստութիւն փորձանքի օրերի, քեզ յանձնարարում ենք, որպէս թիկնապահ, Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Լզեցի Աւիկը. մտիր նրա պաշտպանութեան տակ, էլ փորձանքի օրերին չես փախչիլ եւ «իսլամ» ու «գեավուր» Կոմմունիստներին էլ հաւասարապէս նկուն չես դարձնիլ քո փախչելովդ եւ նորանոր մեղադրանքների տրցակներ հիւսելովդ։

Սոցիալ Դէմոկրատ Հնչակեանները չղթայ չեն բերում, այլ ամրողջական ազատագրութիւն՝ պրոլետար, աշխատաւոր դասակարգի համար՝ Հայ իրականութեան մէջ։

10.

Եթէ չարախնդաց, նեղ հոգին չը խօսի, առողջ աչքերը կամաւորապէս կոյր չը դառնան,— կայ մի իրականութիւն, որ չի կարելի չը գնահատել, հոգեւին չը հըրճուիլ, տեսնելով որ կան երիտասարդ՝ աննկուն, անչահախնդիր, գաղափարից տարուած ոյժեր, որոնք երէկուան աւերակների կոյտից կռում, կոփում, կերտում են մի նոր՝ Վերածնուող Հայաստան։

Այն աշխատանքը, որ Սոցիալիստ Խորհրդային Հայաստանի կառավարչական ոյժերը թափում են,— դա ո՛չ միայն գովելի, խրախուսիչ է, այլեւ օրինակ թէ՝ հասարակական բարօրութեան գործին նուիրուող մի երիտասարդութիւն ի՛նչ կարող է անել։

Մեղուաջան աշխատանք կայ. խօսքը չէ, որ հովի ալիքներին է տալում, այլ գործ՝ շինարար, վերակենդանացնող, ստեղծագործող:

Աշխատանքը, բացառապէս աշխատանքն է, որ հարստութիւններ (richesses) է ստեղծում, բարեկեցութեան ամէն պայմաններ բերում:

Ներկայ Հայաստանը տալիս է այդ հաստատումը: Նրա յառաջդիմութիւնը ակնարկս է, վաղքը՝ զգլխիչ:

Այս երեք տարուայ ընթացքում՝ 30–40 տարուայ գործ ստեղծուեց.— սկսած երկրագործականից, ճարտարագործականից, բնակարանային, առողջապահական հաստատութիւններից՝ մինչեւ դպրոցականը, բարձրագոյն մշակութականը:

Կապիտալիստ Ֆրանսիան իր միլիարդներով այնքան արագ կազդուրում չի բերում իր քայքայուած վայրերի անտեսութեանը, որքան մեր փոքրիկ Հայաստանը՝ իր ամենանեղ պայմաններով: Այստեղ գործողը դաղափարականը, անշահախնդրական է:

Հայաստանի վարիչները գործքով ցոյց են տալիս թէ՝ մի երկրի Սոցիալիստ–Կոմմունիստ կառավարութիւն ի՛նչպէս է հասկանում իր պարտականութիւնը եւ նա ինչեր անելու ընդունակ է:

Այդ մասին ամէն առարկութիւն՝ պարզ խծբծանք, կամաւոր կուրութիւն, աններելի փոքրոգութիւն պիտի նկատուի:

Այդ ուրախարեր փաստը արձանագրելով հանդերձ՝ հարց ենք դնում թէ՝ արդեօք Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութիւնն էլ, նոյն չափով կատարո՞ւմ է իր պարտականութիւնը. նա էլ բարձրագոյն կէտի վրա՞ն է դաղափարը՝ Սոցիալիստական–Կոմմունիստական սկզբունքները ծաւալելու, ժողովրդականացնելու բոլոր խաւերին՝ գիւղական թէ պրոլետարական՝ հաւասարապէս մատչելի, մարսելի դարձնելու տեսակէտից:

Մարքսիզմը գիտութիւն է. խաւար ոյժերը կարող են նրա դէմ ժամանակաւոր խոչընդոտներ հանել.— բայց ժամանակաւոր միայն: Երբ մի անգամ գիտութեան լոյսը սփռուի, նրա ճառագայթները ամէն կողմ տարածուեն՝ այլեւս պժոտ աչքեր չեն մնալ, խաւարը կը փարատի:

Բայց պայմանով, որ այդ գիտութիւնը տարածուի, մատչելի դարձնուի, ներկայացուի այնպէս, ինչպէս է:

Իսկ Մարքսիզմը տարածելը ամէն գլխի, ամէն բեղանի գործ չէ: Դրա համար պէտք է կանխապատրաստութիւն, ձեռնհասութիւն:

Կարլ Մարքսի եւ Բակունինի ընդհարման գլխաւոր կէտերից մէկն էլ հէ՛նց այդ էր՝ Առաջին Միջազգայինի տեւողութեան ընթացքում:

Որպէս զի իսկական Սոցիալիզմ–Գիտութիւնը տարածուէր, նա շեղումների, վարկպարազի մեկնաբանութիւնների չենթարկուէր,— Մարքսը պահանջում էր կեդրոնացեալ դրութիւն. հարկադրում էր որ բոլոր երկրների գործիչ–պրոպագանդիստները, ինչպէս եւ կազմակերպիչները, ենթարկուէին Կեդրոնական Ընդհանուր Խորհրդին. նրան հաշիւ տային իրենց գործունէութեան մասին եւ իրանից էլ հրահանգներ ստանային անելիք–գործելիքի մասին: Ո՛չինչ չը պիտի թողնուէր պատահականութեան. ո՛չ մի մտքի բացատրութիւն կախումն պիտի ունենար գործիչ–պրոպագանդիստի անձնական տեսութիւնից, նրա նախասիրութիւնից: Գործիչ–պրոպագանդիստները հաբատատ թարգմանը պիտի հանդիսանային այն բոլոր վճռորոշումներին, այն սկզբունքներին, որոնք նախապէս մշակուել, կանոնադրուել, արձանագրուել էին:

Եւ այնքան ժամանակ, որ այդ մեթոդն էր գործում, ամէն ինչ ընթանում էր յաջող.— Գիտական Սոցիալիզմը, Առաջին Միջազգայինի ընդգրկած սկզբունքները շատ մեծ նուաճումներ էին կատարում ամէն երկրների մէջ:

Պրոպագանդայի տեսակէտով՝ Բակունինը այդ մեթոդով չէր ուզում ընթանալ. նրա թէզն էր՝ ամէն ինչ թողնել տեղական կամ երկրային կազմակերպութիւններին,

նրանց գործիչներին, որոնք միահեծանօրէն կարող էին քարոզել, խօսիլ այն՝ ինչոր «իրենց տեղական պայմանները կը պահանջէին»։

Բայց հարց էր դալիս թէ՝ արդեօք տեղական «ինքնավար» գործիչ–պրոպագանդիստները կարո՞ղ, ձեռնհա՞ս էին ուղիղ, ճշմարիտ կերպով գնահատել «տեղական պայմանները» որպէս զի կիրառութեան դրուէին ընդհանուր սկզբունքները։ — Իրականութեան բերած բացասական պատասխանի ժամանակ անդամ Բակունին յամառում է։

Եւ տեսանք, պատմութիւնը ցոյց տուեց թէ Գիտական Սոցիալիզմը ո՛րքան խոր արմատներ ձգեց այն երկրների մէջ, որոնք ընթացան Մարքսի մեթոտով։

Ընդհակառակը՝ Պիրենեան եւ Ապպենինեան երկրներում, ուր ամէն ինչ գնաց ապակեդրոնացման ուղղութեամբ,— Գիտական Սոցիալիզմը այլանդակուեց, այլասեռուեց, գործաւոր–պրոլետար դասակարգին աւելի վնաս հասցրեց, այդ օրերում, քան օգուտ։

Ցանպատրաստից, նախապէս լաւ չը կազմակերպուած գործադուլների միջոցով «գործաւորական աղատագրութեան» ձգտող Բակունին առաջինը փախաւ, Լիոնի գործադուլաւորներին կրակի ու սրի առաջ թողնելով, երբ բուրժուազական զօրքերը քաղաքին մօտեցան։

Գիտութիւնը զէնք է· բայց այդ զէնքը գործածել պէտք է գիտնալ։

Հարց· այդ նկատմամբ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը կատարո՞ւմ է իր պարտականութիւնը։

— Ո՛չ։

Տեղին վրայ չենք· բայց դա չի խանգարում որ անցած–դարձածից տեղեկութիւն չունենանք, չը խօսենք։ Չէ՞ որ կայ լրագրութիւն, չէ՞ որ նա կեանքի երեւոյթները օրը օրին, աւելի կամ պակաս չափով, բայց վերջապէս մի որոշ աստիճանով գծագրում, իր սիւնակների մէջ է պատկերացնում,— այդտեղից էլ, գէթ մասնաւոր, դա-

զափար կարող են կազմել հեռաւորները, ոչ–ականատեսները։

«Խորհրդային Հայաստան»ի թիւերը մեր ձեռքն են։ Երկրի զանազան կողմերը — Դարալագեազ, Զանգեզուր, Ղամարլու, Նոր Բայազիտ, Ստեփանաւան, եւայլն — գնացող գործիչ–պրոպագանդիստները իրենց տեղեկագրերին մէջ ասում են որ Գիտական–Սոցիալիզմ–Կոմմունիզմի պրոպագանդան շատ մեծ յաջողութեամբ եւ արագ ծաւալով առաջ չի գնում։ Բջիջներ կազմւում՝ քանդւում են։ Եղածներն էլ շատ քիչ անդամներ ունին։ Վերջապէս՝ պրոպագանդայի մասը աւելի քան թոյլ է, կաղում է։

Եւ շատ պարզ է, որ ա՛յդ՝ այդպէս էլ պիտի լինէր։

Գործիչները պատրաստուա՞ծ, ձեռնհա՞ս անձեր են։

Ի՞նչ գրքեր են տուել գործիչ–պրոպագանդիստներին։— Բուխարինի «Կոմմունիզմի Այբբենարանը» եւ Կավալենկոյի «Քաղաքական Գրագիտութիւնը»։—

Թարգմանութեան պակասութիւնները թողնելով՝ այդ գրքերով շատ բան չի կարելի սովորացնել· նրանք անգոհացուցիչ են։ Այդ գրքերը կարելի էր աչքի առաջ ունենալով՝ փոխադրութիւններ անել միայն։ Տքտքալով կարդացող Հայ գիւղացին, գործաւորը նրանցից շատ բան չի հասկանալ, երբ ամէն նախադասութեան մէջ կանգ պիտի առնի չը բացատրուած գիտական եզրերի առաջ։

Ժողովրդին լաւ մշակուած, դիւրահասկանալի ոճով գրուած՝ Մարքսիստական դրականութիւն տալ,— դա էն առաջին մղիչ գաղափարը պիտի լինէր Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան համար ընդհանրապէս, նրա Քարտուղարին՝ մասնաւորապէս։

Իր անմիջական պարտականութեան մէջ թերացողը՝ մեզ դէմ է որ մեղադրանքների ցանկ է կազմում...

Եւ ի՞նչ ասում այս անդամ.

—«Կան Հնչակեան թերթեր եւ կազմակերպութիւններ, որ ներհակում են Կոմինտերնի արձակած միութեան լոզունգին»։

Թէ մեր Կուսակցութեան եւ Կոմինտերնի միջեւ ծագած խնդիրը ի՛նչ է, ի՛նչ բնաւորութիւն ունի,— այդ մասին խօսել, հարցը պարզել, փակել ենք։

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը Կոմինտերնի կամ Կոմինտերնի Գործադիր Մարմնի գործադրիչ պաշտօնեա՞ն է։— Ո՛չ։

Կայ Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւն, կայ Կոմինտերն. իւրաքանչիւրը իր համար խօսելու կարողութիւնը ունի. իր միջնորդութեանը պէտք կա՞յ։— Ո՛չ։

«Կոմինտերնի արձակած միութեան լօզունգին ներհակել ենք»։— «ներհակել» ենք՝ պատճառաբանութեամբ, յանուն հայ իրականութեան, յանուն Մարքսիստական-Կոմմունիստական շահերի։

Բանագնացութիւնները շարունակւում են, եւ տակաւին պիտի շարունակուին. — այդ ասել է թէ մենք հակա-կոմմունիստականնե՞ր, հակա-մարքսիստականնե՞ր ենք։ Մեղադրո՞ւմ ենք. յանցանքի մէ՞ջ բռնւում։

Լաւ։ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը թող այդ կէտի վրայ կանգնի, կանգնի ամուր, եւ լսի։

Երրորդ Միջազգայինի կազմական կանոնագրի համաձայն՝ ամէն երկիր պիտի ունենայ իր մէկ հատ Կոմմունիստ Կուսակցութիւնը, որ հատուածը պիտի նկատուի ամբողջականութիւնը ներկայացնող Կոմինտերնի։

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան եւ նրա քարտուղարի գործունէութեան, իրաւասութեան շրջանն է՝ բացառապէս՝ Հայաստանը։

Արդ, ի՛նքը առաջինը չէ՞, որ ոտնակոխում է Կոմինտերնի կազմակերպչական կանոնագիրը, Արարատից իր Հովուականը ուղարկելով Ատլանդեան Ովկիանոսի ափերը։

Մենք «ներհակել» ենք այն մարմնի «լօզունգին», որի կազմական կանոնագրի վրայից է քարտուղարը թռչում։ Եթէ «յանցանք» կայ. ապա երկու կողմին էլ կայ. իր «յանցանքը» մերինից պակաս չէ։ Բայց ինքը է՛լ աւելի «յանցաւոր» է, որովհետեւ վարժապետի դերի մէջ է դընում իրեն։

Եւ զարմանալի չէ՞, որ քարտուղարը մեզ մեղադրում է «յանցանքի» այնպիսի մի տեսակի մէջ, որի մէջ ինքն էլ է գտնւում, նոյն իսկ աւելի խստագոյնինը։

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը ասելիք ունէ՞ր Ամերիկահայ բանուորութեան,— կարող էր գրել Մոսկուա, Գործադիր Մարմնին եւ այդպիսի օրինաւոր միջոցով իր խօսքը մեր ականջին կը հասցընէր, ինչպէս եւ այն բոլորին, որոնց ցանկանում էր։ Ինքը «յանցաւոր» չէ՞, երբ օրինական եւ պատասխանատու Բարձրագոյն Մարմնի գլխի վրայից է անցնում...

Կա՞ր Ամերիկայի մէջ Կոմմունիստական մի Կուսակցութիւն կամ կազմակերպութիւն, որ ներկայացնէր Երրորդ Միջազգայինը. երկրային (տերրիտորիալ) հատուած կա՞ր այս երկրին մէջ, — կարո՞ղ էր նրան դիմել, նրան գրել, առ առաւելն։ Իր Հովուական նամակը այդ խողովակով էլ չի եկել։

Երբ օրինական այդ խողովակներով չի հասցրել իր խօսքը, հարկ է տեսել ուղղակի խօսել Ամերիկահայ բանուորութեան հետ,— պարզ է, ինքը, յակամայիցս, չի՞ ընկնում Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան հետեւած մեթոդի տակ, նրա հասկացողութեան, գործունէութեան եղանակը չի՞ ընդգրկում, գուցէ անգիտակցաբար։

Մեզ համար կայ Հայաստան-իրականութիւն, Ամերիկահայ իրականութիւն, եւայլն։ Այդ իրականութիւնները հայ պրոլետարներ, գործաւորներ, աշխատաւորներ են. նրանք ունին իրարու մօտեցնող, շաղկապող շատ գծեր եւ ընդհանուր շահեր, մանաւանդ այս գերազանցօրէն

անցողական շրջանի մէջ. ուզում ենք որ այդ բոլոր հայ իրականութիւնները որքան կարելի է իրարու մերձենան, իրարու համերաշխին, միատեղ՝ ընդհանրական, Սոցիալիստական–կոմմունիստական գործ կատարեն, իրենց գործունէութեան անմիջական դաշտը անեն, դլխաւորապէս, Հայաստան, առանց հակասելու տեղական բնոյթ կրող Սոցիալիստական գործին, բայց չը ցանկանալով որ նրանք ձուլուին եւ իրենց գործունէութեան թատերարեմը դարձընեն, բացառապէս, այն տեղական միջավայրերը ուր իրենք գտնուում են բախտի բերմամբ, ու իրենք քաղաքական ամէն իրաւունքէ զուրկ են,— բանաւոր չի՞ նկատուում, ընդունելով հանդերձ որ այդ մեթոտը բաղխում է Երրորդ Միջազգայինի կանոնագրային հասկացողութեան: Բայց կանոնագրային հասկացողութիւնը վերացական չը պիտի լինի. նա պիտի պատշաճի իրականութեան, եւ երբ մեր իրականութիւնը կանոնագրային այդ հասկացողութեան չի յարմարուում, զառածութիւնը մի յանցանք չէ, երբ ընդհանուր պրոլետարական գործը դրանից շահուում է:

Համոզեցուցիչ չէ՞ սա:

Ի՞նչն է ստիպում — եւ մենք ծափահարում, գովում ենք այդ ջանքը, այդ աշխատութիւնը — որ Հայաստանի կառավարութիւնը իր տերրիտորիայի սահմաններից դուրս գալով՝ մտածում, ձեռնարկներ է անում դուրսերը՝ օտար երկիրներ գտնուող Հայ գաղթականների, հայ որբերի մասին.— Հայ իրականութիւնը, որ ուրիշ վայրերի իրականութիւնից իր մասնայատկութիւնը, իր տարբերութիւնները ունի:

Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան կազմակերպչական ձեւը, նրա տակտիկան չի՞ արդարանում այստեղ:

Անցնենք. ցոյց տանք, որ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը ո՛ր աստիճան իրազեկ է հայ իրականութիւնից. ցոյց տանք որ իր աղբիւրները ո՛ր

աստիճանի միակողմանի եւ պակասաւոր են եղել, ընթացել են լոկ անձնական միտումներով:

«Ամերիկայի Ուօրկըրս Պարտիի Հայկական Ֆեդերացիա,— Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւն» կար.

Մեր դիտողը ի՞նչ է ասել այդ մասին. ահաւասիկ.— «Դաշնակցականները չէին դալ մի կազմակերպութեան մէջ մտնել, որ կրում է Հնչակեան անունը»:

Գիտենք. այդ միտումնաւոր թէդի տակը կար՝ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան անունը վերցընել... պարա՛պ աշխատանք:

Այս եօթերորդ ամիսն է, որ «Ֆեդերացիա» գոյութիւն չունի. եւ Ուօրկըրս Պարտիի Այր եւ Բէն հատուածները գոյութիւն ունին: Հարց. քանի՞ Դաշնակցականներ գնացին միացան այդ կազմակերպութեանց հետ, ուր չը կային Սոցիալ Դէմօկրատ Հնչակեաններ,— եւ ո՛չ մի. բացարձակապէս՝ եւ ո՛չ մի: Ընդհակառակը «Ֆեդերացիայի» մէջ եկող Դաշնակցականները, «Ֆեդերացիայի» լուծուելուց յետոյ՝ կամ չէզոքացան, կամ նորից իրենց նախկին կուսակցութեանը դարձան. եւ սա իրականութիւն է:

Ուրիշ հարց. Ուօրկըրս Պարտիի երկու հատուածները Այրը եւ Բէնը, «Ֆեդերացիայի» քանդուելուց յետոյ՝ միացա՞ն իրարու հետ, միաձուլութիւն տեղի ունեցա՞ւ.— Ո՛չ: Հրատարակուեց «Բանուոր» եւ «Գործաւոր», իրարու հակամարտ ուղղութեամբ: Եւ Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութիւն չը կար որ իրենց մէջ բաժանում ձգէր:

Հիմայ էլ՝ «Ուօրկըրս Պարտիի Հայկական Հատուածը» հրատարակում է կաղ–կաղ մի «Պրոլետար», «անարխիական», «սոցիալիստական», «կոմմունիստական» olla podrida — չիլափլաւ ուղղութեամբ,— անկազմ, խառնափնթոր ուղեղների մի գործ, որից դաղափարական ե՛ւ ո՛չ մի սնունդ կարող է առնել հայ գործաւորը:

Իսկ սրա հետեւանքը այն եղաւ, որ շատ հայ գործաւորներ, «Հայկական» այդ «Հատուած»ի մէջ էլ չը մնացին. նրանք ուղղակի կապուեցան Ուօրկըրս Պարտիի Գործադիր Մարմնի հետ: Եւ սրանք հայ գործաւորներ են, որ պարտականութիւն ունին. բայց եւ ո՛չ մի իրաւունք: Նրանք մնում են խաւարի մէջ, որովհետեւ տեղական լեզուն չը գիտեն. նրանք իրենց մտաւոր պաշարը ստիպուած են վերառնել՝ դարձեալ՝ նախկին աղբիւրներից:

Մի քիչ էլ առաջ:

Հէնց այն անձինքը եւ խմբակցութիւնը, որին ուղղել էր իր Հովուական Կոչ–Նամակը՝ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը, նրանք միացա՞ն, գնացին–մտա՞ն Ուօրկըրս Պարտիի Հայկական Հատուածի մէջ.— Ո՛չ: Եւ չը պիտի երթան էլ:

Ուզում ենք ասել, որ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարի մեր դէմ եղած փաստերը շատ վիրաւոր են. իրականութիւնը իր տեսութիւնից բոլորովին խուսափած է. խօսած է միայն կիրքը, կուսակցական անհամբերողութիւնը:

11.

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան քարտուղարը ցանկանում է, նոյն իսկ «համոզուած» է, որ «Արտասահմանի բանուորութիւնը չի յապաղի իր համերաշխութիւնը յայտնաբերելու Հայաստանի աշխատաւորութեան ու իր ղեկավար կուսակցութեանը»:

«Արտասահմանի հայ բանուորութիւնը» իր «համերաշխութիւնը» բերել, արտայայտել էր Քարտուղարի Հովուականից դեռ շատ ժամանակ առաջ: Իր Կոչը չէր, որ «Հայ բանուորութեան» պարտականաչութեանը զարկ պիտի տար: Ընդհակառակը իր գրութիւնը եկաւ սկրսուած «համերաշխութեան» գործը ո՛չ միայն դժուարացնելու, այլ՝ հարուածելու: Թէեւ այդ «համերաշխութիւնը» անսայթաքօրէն պիտի շարունակուի:

Իր, վերեւ գրուած, խօսքը՝ դարձեալ՝ կիրք, անհամբերողութիւն է՝ ուղղուած Սոցիալ Դէմօկրատ Հընչակեան Կուսակցութեան դէմ:

Խօսքի ոգին այն է թէ՝ «համերաշխութիւնը» կը լինի այն ժամանակ, երբ մեր Կուսակցութեան անունը կը ջնջուի եւ «Հայ բանուորութիւնը» կը դառնայ «Ամերիկայի Ուօրկըրս Պարտիի մէկ հատուածը»:

Թէզի հակասութիւնը, ցանկութեան դունաւորումը հէնց իր մէջն է:

Թողնենք մեր առաջուան գիրքն ու գրութիւնները, մեր մամուլի արծարծած մտքերն ու պաշտպանած թէզերը,— հարց. «Ֆեդերացիան» կազմուելուց յետոյ՝ նրա պաշտօնական օրգան «Երիտասարդ Հայաստան»ի մէջ երեւցա՞ւ մի հատ հակա–մարքսիստական, հակա–կոմմունիստական գրութիւն կամ անարբեացակամ վերաբերմունք դէպի «Հայաստանի բանուորութիւնը» եւ նրա «ղեկավար» Կուսակցութիւնը.— ո՛չ: Այդ չէր էլ կարող լինել, որովհետեւ թերթը խմբագրողները Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան «վարիչ» անդամներից է՛լ աւելի եփուն, պատրաստուած, ձեռնհաս Մարքսիստներ էին. նրանք 38–40 տարուայ հրապարակախօսային–գրական կեանք ունէին իրենց յետեւը. նրանք Մարքսիստական Գիտութիւնը տարածելու, կիրառելու համար՝ արիւնների միջից էին անցել:

Քարտուղարի եւ իր մի կարգ «Կոմմունիստ» ընկերների կիրքը, անհամբերութիւնը մասամբ հասկանալի կը լինէր, եթէ նրանք մատնանիշած լինէին մի այսպիսի կէտ:

Այդ թողած՝ Քարտուղարը ընթանում է ասէ–կոսէներով. առանց մեր գրականութիւնից ճշգրիտ տեղեկութիւն ունենալու:

«Համերաշխութիւն», աւելի ուղիղը պիտի լինէր ասել՝ համագործակցութիւն Հայաստանի Կառավարութեան, Հայ Բանուորութեան և նրա «ղեկավար Կուսակցութեան» հետ,— դա Սոցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակ–

գութեան դիրքն ու թէկն է եղած։ Մեր կողմից՝ ո՛չ ըս-
կզբունքային համերաշխութիւնն է պակսած, ո՛չ էլ
գործքի։

Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան քարտու-
ղարի պաշտպանած դիրքն ու թէզը ո՛չ թէ գալիս է այդ
«համերաշխութիւնը», համագործակցութիւնը ընդդիմելու,
է՛լ աւելի ամրապնդելու, յոգաւորելու.— ընդհակառակը,
հարուածելու, խզում առաջացնելու, խեղանդամելու։

Եթէ Ամերիկահայ բանուորութիւնը ձուլուէր անբո-
վանդակ «Ուօրկերս Պարտիի» մէջ, նրա ամբողջականու-
թեան մի անբաժան մասը դառնար — այդտեղ «համերաշ-
խութիւն», համագործակցութիւն բառերը կը կորցնէին ի-
րենց իսկական միտքը. կը մնար միայն պատրանքը։ Այդ-
պիսով Ամերիկահայ բանուորութեան եւ Հայաստանի
բանուորութեան միջեւ կը քաշուէր մի տարանջատող
պատուար։ Հայ բանուորութեան գործունէութեան մի-
ակ ասպարէզը պիտի լինէր Ամերիկան։ Հայաստանի բան-
ուորութիւնը նրանից գործակցութիւն, աջակցութիւն չը
պիտի կարողանար ստանալ։ «Համերաշխութիւնը» այդ-
պիսով, կը մնար բառ, միայն բառ։

Իսկ Ամերիկահայ բանուորութեան 100-ից 99½-ի հա-
մար հարցն է նախ Հայաստան։ Եւ իրաւունք էլ ունի.
սա հայ իրականութիւնն է։

Ամերիկահայ բանուորութիւնից կարելի է պահանջել,
որ նա մարքսիստական-կոմունիստական դաստիարակու-
թիւն ձեռք բերի. բայց չի կարելի նրան անդամալուծել,
կապել բացառապէս Ամերիկայի հետ։ Ամերիկահայ բան-
ուորութիւնը բաղաքացի չէ. նա կարող է, յարմար պարա-
գային, իր աջակցութիւնը տալ տեղական մարքսիստա-
կան ոյժերին, գործաւորութեանը. բայց առաջին դէպ վը-
բայ չի կարող անցնել, որովհետեւ իրաւազուրկ մէկն է,
դուրս նետուել կայ եւ իր համար գլուխ դնելու տեղի չգո-
յութիւնը կայ։ Եւ արդէն ի՞նչ ըմբոստ ոգի կրող հայ
բանուորը ե՞րբ է յետ մնացել, երբ բանուորական գործ է

մէջտեղ եկել ու պաշտպան կանգնելու հարց դրուել։ Նա
իր բանուորական մարտական պարտականութիւնը կատա-
րել է,— տարբիներով իր գործից զրկուելու հետեւանքով։

«Պրօլետարներ երկիր (հայրենիք) չունին». չա՞տ
ճիշտ։ Չունին, որովհետեւ այդ հայրենիքի տարածու-
թիւնները, նրա ամէն կարգի հարստութիւնները բուր-
ժուաները, կալուածատէրերը, եւ այլն, սեպհականացրել
են։ Ամերիկացի բանուորը այդ հայրենիքից մասն ու բա-
ժին չունի. նրա «հայրենիքը» իր բաղուկները, գործա-
բանի չորս պատերն են։ Նոյնն է եւ Ամերիկայի Հայ բան-
ուորութեան համար։ Բայց այդ երկու եղբայր բանուոր-
ների մէջ՝ գունաւորումի մի տարբերութիւն կայ։ Ամե-
րիկացի բանուորը եթէ գործարանից դուրս է նետւում,
դէթ երկրի սահմաններից չի արտաքսւում։ Բուրժուա-
ազգայնական ոգին իր խարութիւնները յառաջ է քաշում,
եւ հազիւ մի ապաստան գտնող Հայ բանուորը, իրեն
կանգնած է տեսնում մի այլ ահռելի անստուգութեան ա-
ռաջ,— երթա՞յ, գո՞ւրս գայ — բայց ո՞ւր։

Եւ ահա թէ ինչու Հայ բանուորը նախ ձգտում է
Հայաստան ունենալ, Հայաստանը զարգացնել, բարգա-
ւաճեցնել, որ մի օր բնակութեան վայր ունենայ։ Ահա
թէ նա ինչո՛ւ է աչքերը դարձնում դէպի Հայաստան, իր
համագործակցութիւնը, իր համերաշխութիւնը նախ նը-
րան է ուղում բերել։

Անցողակա՞ն վիճակ։ Երրորդ Միջազգայինի կանո-
նագրին բաղխում,— բայց սա Հայ իրականութիւն է։ Ա-
մէն իրականութիւն միեւնոյն կաղապարի մէջ չի մտնում,
դժբախտաբար։

Այս միեւնոյն հոգեբանութիւնն է տիրում բոլոր դաղ-
թավայրերի հայ բանուորների մէջ։

Ի՞նչ չահ կայ նրա այդ թռիչքը խափանել՝ կանոնա-
գրային որոշումնե՞ր կան.— լա՛ւ. թող մի ժամանակի
համար կանոնագրային այդ տրամադրութիւնները քնա-
նան։

Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան առաջին ցանկութիւնը պիտի լինէր «արտասահմանի» հայ բանուորներին կապել, ամենից առաջ, Հայաստանի հետ, եւ ո՛չ թէ նրան թելադրել՝ ձուլուել տեղի միջավայրի մէջ եւ կորչել Հայաստանի բանուորութեան համար,— երբ փոխադարձաբար իրարու պէտք ունին, կենսական շահեր իրարու հետ կապում են, հակառակ ամէն տեսակի զատող հեռաւորութիւններին:

Եւ արդէն իրերը այդ բնական ընթացքը առել են: Այդ ուղղութեամբ էլ զարգանում են:

Դիտողութեանց ընդհանուր ցանկին մէջ մի կէտ էլ կայ, որ պարտք ենք համարում վեր առնել.— ասուած է՝ Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը «Պատմականօրէն մահուան է դատապարտուած»:

Ցառաջդիմութեան, զարգացման օրէնքները կան. նրանցից չի կարելի խուսափել. յաւիտենական ո՛չինչ կայ. ամէն հաստատութեան գոյութիւնը յարաբերական է:

Հետեւապէս a priori տեսութեամբ՝ ամէն Կուսակցութիւն «պատմականօրէն մահուան է դատապարտուած»: Եթէ մեր Կուսակցութիւնը այդ օրէնքից դուրս չը պիտի մնայ, ապա նրանից բացառութիւն չի կարող կազմել, եւ Հայ Կոմմունիստ Կուսակցութիւնը, նա էլ, ուրիշների նման, «պատմականօրէն մահուան է դատապարտուած»:

Ինդիրն է ժամանակը, տեւողութիւնը, պայմանները, քանի որ բացարձակութիւն չը կայ եւ չի էլ կարող լինել: Էվոլիւցիայի օրէնքները ո՛չ բոնադատութիւնների են ենթարկւում, ո՛չ էլ կայուն դրութեան մէջ մնում. նրանք ընթանում են մարդկանց կամքից բոլորովին անկախ:

Կուսակցութիւնները կը մահանան, երբ իրենց գոյութիւնը արդարացնող քաղաքա–տնտեսական հող չեն ունենալ. երբ որ եւ է դասակարգի վրայ չեն յենուիլ. երբ իր յենակէտը եղող դասակարգը կը հասնի իր Ծրագրի մաքսիմումին, ամբողջականութեանը. երբ նրա պաշտպանած սկզբունքները կեանքի բաժինը կը դառնան, գործադրութեան մէջ կը մտնեն:

Ինդիրը նեղկան է, ԱՅՍ ժամանակաշրջանը:

Ունի՞նք մենք, տակաւին, հող, պայմաններ, յենակէտներ մեր Կուսակցական միսսիան շարունակելու.— Այո՛. ունինք:

Սպառա՞ծ է մեր ծրագիրը. իրականացա՞ծ են մեր սկզբունքները,— Ո՛չ:

Այդ այո–ն եւ ո՛չ–ը մեզ տալիս է հայ իրականութիւնը, որից ծնուել, կազմակերպուել ենք եւ ունինք հարուստ պատմութիւն:

Հայ այդ իրականութիւնը ամբողջական, իր լրումին հասա՞ւ, երկուսն իրականութիւնը մարքսիստական–կոմմունիստական իրականութեան վերածուեցա՞ւ իր ամբողջութեանը մէջ.— Ո՛չ: Քանի որ՝ ո՛չ. քանի որ այդ իրականութիւնը դեռ իր սուր պահանջներով կայ,— մենք կանք եւ պիտի լինինք:

Ներկայ Հայաստանի իրականութիւնից դուրս ուրիշ հայ իրականութիւններ կան, որոնց մէջ Հայ Կոմմունիստ Կուսակցութիւնը չի ուզում գործ ունենալ. միայն այդ չէ, նա թելադրում է այդ իրականութեանց մէջ ապրող հայ բանուորին, գիւղացուն, ձուլուիլ, չքանալ իր միջավայրի մէջ.— մենք այնտեղ կանք, տալիս ենք նրան Մարքսիստական դաստիարակութիւն, նրա ընդհանուր գործունէութեան առանցքը ուզում ենք դարձնել այսօրուայ եւ վաղուան Հայաստանը: Եւ հէնց այդ նպատակով էլ չենք ուզում որ Հայ իրականութիւնները իրարուց խզուին, տարանջատուին....:

Մարքսիստական սկզբունքը չի տուժում, տուժում է Երրորդ Միջազգայինի գծած կանոնագիրը.— բայց կեանքը աւելի բարձր է քան մի կանոնագիր:

Տարօրինակ չէ՞, որ մի տարի առաջ՝ Հայ Կոմմունիստ Կուսակցութեան գլխաւոր օրգանները մեզ յորդոր էին կարդում, հայ բանուորին, արտասահմանի մէջ, մեր

շարքերի մէջ առնել. իսկ այսօր նրանցից ոմանք ո՛չ միայն ցանկանում են մեր Կուսակցութեան անունը վերցնել, այլեւ Հայ բանուորին էլ ձուլուելու ճանապարհն են ցոյց տալիս, որից եւ ո՛չ մի անմիջական շահ կայ՝ Մարքսիզմի գործնականացման տեսակէտից:

Այո՛. Հայ Կոմմունիստ Կուսակցութեան «գաղտնի դիւանագիտութիւնը» եղաւ՝ մեր Կուսակցութիւնը լուծել, ցրուել՝ Երրորդ Միջազգայինի նախագահութեան միջոցով.— բայց դա իր ոյժից շա՜տ շա՜տ վեր էր. կեանքը ցոյց տուեց այդ:

Մենք մեր ուղին կը շարունակենք, կը մնանք Հայ իրականութեան մէջ. նրա արտայայտիչը կը լինինք, կը գործենք, եւ յոյս ունինք, որ մի դեղեցիկ օր էլ, մեզ ջընջել ուզող այսօրուայ Հայ «Կոմմունիստներին» Արածանիի եւ Եփրատի ջրերից էլ կը խմցնենք, ինչպէս որ Արաքսի ջրից խմցրինք, որից, սակայն, շատ առաջները փախչելով փախչում էին...

Մենք մեր Մարքսիստական–Կոմմունիստական գործը կը շարունակենք:

Նկատում ենք նաեւ, որ Հայաստանի Կոմմունիստ Կուսակցութեան «ղեկավար» մի մաս անդամների բռնած դիրքը, նրանց հոդեբանութիւնը արտասահմանի Հայ բանուորութեան մէջ ո՛չ միայն չփոթութիւն է յառաջացնում, ա՛յլ զարկ տալիս, օգնում հակա–յեղափոխական, հակամարքսիստական, բուրժուազական տարրերին:

Թէեւ շատ որոշ կերպով ասուած չէ. բայց ցանցնուած մտքերից այն եզրակացութիւնն է դուրս գալիս, որ Հայ ժողովրդի գլխով անցած բոլոր աղէտների պատասխանատուն ո՛չ թէ Կարմիր Սուլթանն էր, կամ հրէշածին Իտիհատը, այլ նա՛եւ մեր Կուսակցութիւնը:

Ի՞նչ ասել այդ մասին. խօսի՞լ — դա մեզ շատ հեռուն կը տանի:

Միայն այս ասենք:

Սասունի 1894–ի կոտորածի վկաներից երկուսը՝ Եսայի եւ Կարապետ վարդապետները, Մշոյ քննիչ՝ յանձնախումբի առաջ վկայեցին թէ՝ իրենք ականատես էին. տեսան որ թուրք զինուորները շարան–շարան հանդարտ կեցած էին եւ Սասունցիներն էին, որ նրանց սուինների վրայ յարձակուեցան ու իրենք իրենց կոտորեցին....

Գործ շա՜տ. ասպարէզ ընդարձա՜կ: Ամէն կուսակցութեան էլ տեղ կայ. ամէն գործիչի էլ լայն ասպարէզ:

Մենք չենք նախանձում. ընդհակառակը սրտանց ուրախանում ենք, երբ Մարքսիստ մի Կուսակցութիւն նուաճումներ է անում:

Մենք, ուրեմն, մնում ենք մեր Մարքսիստի դիրքի, սկզբունքների վրայ եւ շարունակում մեր ուրոյն, անկախ գոյութիւնը:

Քայլելիք ասպարէզ դեռ շատ ունինք:

Ու պիտի քայլենք:

ՎԵՐՋ

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿ

Յառաջաբան, Բ. էջ, վերէն վար 12-րդ տող—փոխան՝ «Մենք համակարծիք գտնուեցինք Լենինի հետ՝»ի

Պէտք է ըլլայ՝ Մենք անհամակարծիք գտնուեցինք Լենինի հետ՝ եւայլն:

Ա Զ Դ

Շուտով Պիտի Հրատարակուի

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻԻԼԵԱՆԻ

ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

(Բ. Հատոր)

որ ունի մեծ արժէք եւ նշանակութիւն մեր նորագոյն պատմութեան համար: Մանրամասնութեանց համար դիմել՝

ARSEN DEBBAGHIAN
P. O. Box 83, Union City, N. J.

Ս. ՍԱՊԱՀ – ԳԻԻԼԵԱՆԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.– Եւրոպայի քաղաքական դրութիւնը Բերլինի դաշնադրութիւնից յետոյ:

2.– Գործաւոր Դասակարգը:

3.– Կապիտալիստ Դասակարգը:

4.– Սոցիալիզմ եւ Հայրենիք, պրակ I

5.– Երիտասարդ Թիւրքիա:

6.– Հարցարան (Հողային):

7.– Հերդեր եւ իր Քաղաքական Հայեացքները:

8.– Ինքնավար Հայաստան:

9.– Պատասխանատուները:

10.– Սոցիալիզմ եւ Հայրենիք, պրակ II

11.– Փոքր–Հայքի Ցիշատակներ, Ա. Մաս:

12.– Արմենակ եւ Աբրահամ:

13.– Բառերի եւ Եզրերի Բացատրութիւններ:

14.– Փոքր Հայքի Ցիշատակներ,
Բ. Հատոր (անտիպ):